



COUNCIL OF EUROPE  
CONSEIL DE L'EUROPE

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ  
ԱՀԱՐԵԿՉՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ  
ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ  
ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ (ՄԱՆԻՎԱԼ)

ՄԱՆԻՎԱԼ (2012)27

## Հայաստան

**Առաջընթացի հաշվետվություն և հիմնարար հանձնարարականների  
գծով քարտուղարության կողմից իրականացված գրավոր  
վերլուծություն<sup>1</sup>**

3 դեկտեմբերի, 2012թ.

<sup>1</sup>Երրորդ փուլի գնահատման շրջանակներում ՄԱՆԻՎԱԼ-ին ներկայացված  
առաջընթացի երկրորդ գրավոր հաշվետվություն

Հայաստանը ՄԱՆԻՎԱԼ-ի անդամ է: Սույն հաշվետվությունն ընդունվել է ՄԱՆԻՎԱԼ-ի 40-րդ լիագումար նիստում (Ստրասբուրգ, 2012թ. դեկտեմբերի 3-7): Հաշվետվության քննարկման և ընդունման վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունն ամփոփված է 40-րդ լիագումարի նիստի հաշվետվությունում (<http://www.coe.int/moneyval>):

© [2012] Բոլոր իրավունքները պաշտպանված են: Վերարտադրությունը թույլատրվում է՝ պայմանով, որ նշվի աղբյուրը, եթե այլ բան նախատեսված չէ: Սույն հրապարակման որևէ մաս չի կարող առևտրային նպատակներով թարգմանվել, վերարտադրվել կամ փոխանցվել որևէ ձևով կամ եղանակով՝ էլեկտրոնային (CD-սկավառակ, ինտերնետ և այլն) կամ մեխանիկական, ներառյալ պատճենահանումը, ձայնագրումը կամ տեղեկատվության պահպանման կամ վերականգնման համակարգերի կիրառումը, առանց Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և օրենքի գերակայության գլխավոր տնօրինության ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի քարտուղարության նախօրոք գրավոր թույլտվության (F-67075 Strasbourg կամ [moneyval@coe.int](mailto:moneyval@coe.int)):

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՖԱԹՖ-Ի ՀԻՄՆԱՐԱՐ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՌԱՋԸՆԹԱՅԻ ԳՐԱՎՈՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	6
1.1. Ներածություն.....	6
1.2. Հիմնարար հանձնարարականների գծով Հայաստանի կողմից ձեռնարկված միջոցառումների մանրամասն ուսումնասիրություն.....	7
1.3. Հիմնական եզրակացություններ.....	23
2. ԱՌԱՋԸՆԹԱՅԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ.....	25
2.1. Ներկա իրավիճակի ընդհանուր նկարագիրը և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի նախորդ գնահատումից հետո արձանագրված զարգացումները ...	25
2.2. Հիմնարար հանձնարարականներ.....	48
2.3. Այլ հանձնարարականներ.....	69
2.4. Առանձին հարցեր.....	123
2.5. Երրորդ դիրեկտիվին (2005/60/EC) և Իրականացման դիրեկտիվին (2006/70/EC) առնչվող հարցեր.....	124
2.6. Վիճակագրական տվյալներ.....	133

Սույն փաստաթուղթը երրորդ փուլի գնահատման արդյունքում երկրի կողմից ՄԱՆԻՎԱԼ-ին ներկայացված Առաջընթացի երկրորդ հաշվետվությունն է: Առաջընթացի հաշվետվությունների վերաբերյալ ՄԱՆԻՎԱԼ-ի 33-րդ լիազումար նիստում ընդունված որոշման համաձայն՝ սույն փաստաթուղթը ներառում է ՄԱՆԻՎԱԼ-ի քարտուղարության կողմից Հայաստանի ներկայացրած տեղեկատվության գրավոր վերլուծությունը:

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՄՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ
ԱՖ	Ահաբեկչության ֆինանսավորում
ԲԳՕ	«Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք
ԵԱԽ	Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի եվրասիական խումբ
ԻԿԿ	Ինքնակարգավորվող կազմակերպություն
ԻՊՄ	Իրավապահ մարմիններ
ԽԳՕ	«Խաղաղության գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք
Կանոնակարգ	Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ֆինանսական հաստատությունների համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգ
ԿԳՀ	Կասկածելի գործարքի մասին հաշվետվություն
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀ ԱՆ	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն
ՀՀ ԿԱ ԱԱԾ	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն
ՀՀ ԿԱ ՊԵԿ	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
ՀՀ ԿԲ	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ
ՀՀ ՖՆ	Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն
ՀՊՈՒ	Հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԱԿ ԱԽ	Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհուրդ
ՆՇԳԳՀ	Նվազագույն շեմը գերազանցող գործարքի մասին հաշվետվություն
ՆՈՖԳՏՄ	Նախատեսված ոչ ֆինանսական գործունեության տեսակներ և մասնագիտություններ
ՇՆԶԿ	Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն

ՌՌԳ	Ռիսկերի ռազմավարական գնահատում
ՌՎՀՄՈՒ	Ռիսկերի վրա հիմնված մոտեցման ուղեցույց
ՓԳՀ	Հայաստանի Հանրապետության փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համակարգի երրորդ փուլի փոխադարձ գնահատման հաշվետվություն
ՓԻՕ	Փոխադարձ իրավական օգնություն
ՓԼ	Փողերի լվացում
ՓՀ	Փոխըմբռնման հուշագիր
ՓԼ/ԱՖ	Փողերի լվացում և ահաբեկչության ֆինանսավորում
ՔԱՈՒԱ	Քաղաքական ազդեցություն ունեցող անձ
ՔԴՕ	Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք
ՔՕ	Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք
ՕՀԳՕ	«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք
ՖԱԹՖ	Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խումբ
ՖԴԿ	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոն
ՖՀ	Ֆինանսական հաստատություն
ՖՀՄ	Ֆինանսական հետախուզության մարմին
ՖՎՎ	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչություն

# Հայաստան

## Երրորդ փուլի գնահատման շրջանակներում ՄԱՆԻՎԱԼ-ին ներկայացված առաջընթացի երկրորդ գրավոր հաշվետվություն

### 1. ՖԱԹՖ-Ի ՀԻՄՆԱՐԱՐ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՌԱՋՆԹԱՑԻ ԳՐԱՎՈՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

#### 1.1. Ներածություն

1. Սույն փաստաթղթի նպատակն է ՄԱՆԻՎԱԼ-ի լիազումար նիստում ներկայացնել Հայաստանի Առաջընթացի երկրորդ հաշվետվությունը, որն արտացոլում է երրորդ փուլի փոխադարձ գնահատման հաշվետվությամբ (այսուհետ՝ ՓԳՀ) ՖԱԹՖ-ի մի շարք հանձնարարականների գծով բացահայտված թերությունների վերացման ուղղությամբ արձանագրված առաջընթացը:
2. Հայաստանի երրորդ փուլի գնահատման այցն իրականացվել է 2009թ. փետրվարի 23-ից մինչև մարտի 10-ը ընկած ժամանակահատվածում, որի արդյունքում կազմված ՓԳՀ-ն քննարկվել և ընդունվել է ՄԱՆԻՎԱԼ-ի 30-րդ լիազումար նիստում (2009թ. սեպտեմբերի 21-24): Գործող ընթացակարգի համաձայն՝ Հայաստանը, առաջնորդվելով Գործընթացների կանոնակարգի 42-րդ հոդվածով, 2010թ. սեպտեմբերին կայացած լիազումար նիստում ներկայացրել է Առաջընթացի առաջին հաշվետվությունը: ՄԱՆԻՎԱԼ-ի 33-րդ լիազումար նիստը քննարկել և ընդունել է Հայաստանի Առաջընթացի առաջին հաշվետվությունը, և հաջորդ հաշվետվության ներկայացման ժամկետ է սահմանվել 2012թ. դեկտեմբերը:
3. Սույն փաստաթուղթը կազմվել է 2010թ. մարտին վերանայված Գործընթացների կանոնակարգի համաձայն, որով պահանջվում է հիմնարար հանձնարարականների<sup>1</sup> գծով արձանագրված առաջընթացի գրավոր վերլուծություն Քարտուղարության կողմից: Առաջընթացի հաշվետվությունը ենթակա է լիազումար նիստի մասնակիցների կողմից ամբողջական ուսումնասիրության, ինչին օժանդակում են Համազեկուցող երկիրը և Քարտուղարությունը (Գործընթացների կանոնակարգի 38-40-րդ հոդվածներ): Գործող ընթացակարգի համաձայն՝ երկրի ներկայացրած Առաջընթացի հաշվետվությունը և Քարտուղարության գրավոր վերլուծությունը հաստատվելու համար լիազումար նիստը պետք է բավարար համարի ներկայացված տեղեկատվությունը և արձանագրված առաջընթացը, որից հետո նշված երկու փաստաթուղթը ենթակա են հրապարակման:
4. Հայաստանը Քարտուղարությանը և լիազումար նիստին ներկայացրել է առաջընթացի վերաբերյալ ամբողջական հաշվետվություն՝ ներառյալ Առաջընթացի հաշվետվության տիպային օրինակով սահմանված հիմնավորող փաստաթղթերը: Քարտուղարությունը

<sup>1</sup> ՖԱԹՖ-ի ընթացակարգերով սահմանված հիմնարար հանձնարարականներն են Հ.1, Հ.5, Հ.10, Հ.13, ՀՀ.II և ՀՀ.IV:

կազմել է սույն հաշվետվության նախագիծը, որով նկարագրվում և վերլուծվում է յուրաքանչյուր հիմնարար հանձնարարականի գծով արձանագրված առաջընթացը:

5. Հիմնարար հանձնարարականների գծով Հայաստանը ստացել է հետևյալ գնահատականները.

Հ.1 – Փողերի լվացման քրեականացում՝ ՀՀ (հիմնականում համապատասխանող)
ՀՀ.11 – Ահաբեկչության ֆինանսավորման քրեականացում՝ ՄՀ (մասամբ համապատասխանող)
Հ.5 – Հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն՝ ՄՀ (մասամբ համապատասխանող)
Հ.10 – Տեղեկությունների պահպանում՝ ՀՀ (հիմնականում համապատասխանող)
Հ.13 – ԿԳՀ-երի ներկայացում ՀՀ (հիմնականում համապատասխանող)
ՀՀ.14 – Ահաբեկչության վերաբերյալ ԿԳՀ-ների ներկայացում՝ ՀՀ (հիմնականում համապատասխանող)

6. Սույն փաստաթղթով ներկայացվում է հիմնարար հանձնարարականների գծով արձանագրված թերությունների վերացման նպատակով Հայաստանի կողմից ձեռնարկված միջոցառումների ուսումնասիրությունը և վերլուծությունը (2-րդ գլուխ), ինչպես նաև ուսումնասիրության արդյունքում կատարված հիմնական եզրահանգումների ամփոփումը (3-րդ գլուխ): Սույն փաստաթուղթը հարկ է դիտարկել Հայաստանի կողմից ներկայացված Առաջընթացի հաշվետվության հարցաշարի և դրա հավելվածների հետ միասին:

7. Կարևոր է նշել, որ սույն փաստաթղթով ներկայացված վերլուծությունը վերաբերում է միայն հիմնարար հանձնարարականներին, հետևաբար՝ քննության է առնում փողերի լվացման և ահաբեկչության (ՓԼ/ԱՖ) դեմ պայքարի համակարգի միայն որոշակի մասը: Հաշվի առնելով այն փաստը, որ առաջընթացի վերլուծության շրջանակներում արդյունավետությունը գնահատվում է հեռակա եղանակով՝ հիմնվելով Հայաստանի կողմից ներկայացված տեղեկատվության ու վիճակագրական տվյալների վրա, սույն վերլուծության շրջանակներում համակարգի արդյունավետության գնահատումը կատարվել է հնարավոր առավելագույն չափով և, որպես այդպիսին, ամբողջական չէ:

**1.2. Հիմնարար հանձնարարականների գծով Հայաստանի կողմից ձեռնարկված միջոցառումների մանրամասն ուսումնասիրություն**

**Ա. ՓԳՀ-ի ընդունումից հետո հիմնական փոփոխություններ**

8. Փոխադարձ գնահատման հաշվետվության ընդունումից (2009թ. սեպտեմբեր) հետո, մինչև առաջին Առաջընթացի հաշվետվության ներկայացումը Հայաստանը ձեռնարկել էր հիմնարար հանձնարարականների գծով արձանագրված թերությունների վերացմանն ուղղված հետևյալ միջոցառումները.
- 2009թ. հաստատվել է հատուկ Միջոցառումների ծրագիր.
  - Հաստատվել է 2010-2013թթ. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ազգային ռազմավարությունը.
  - Մշակվել են թվով 17 օրենքում ՓԼ/ԱՖ դեմ պայքարին առնչվող փոփոխություններ («Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ

օրենք, «ՀՀ քրեական օրենսգիրք», «ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք», «ՀՀ մաքսային օրենսգիրք», «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենք, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենք, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք, «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և իրականացման մասին» ՀՀ օրենք, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենք, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենք, «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենք, «Շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենք, «Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենք, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենք, «Փոստային կապի մասին» ՀՀ օրենք): Փոփոխությունների փաթեթը օգոստոս ամսվա վերջին ներկայացվել է ՀՀ կառավարությանը՝ արագացված կարգով ընթացք տալու միջնորդությամբ:

- Նախաձեռնվել է երկրում առկա ՓԼ/ԱՖ ռիսկերի ռազմավարական գնահատում (այսուհետ՝ ՌՌԳ).
  - ՖԱԹՖ-ի հղումային փաստաթղթերի և այլ երկրների համանման փորձի հիման վրա մշակվել է ռիսկային ոլորտների, յուրաքանչյուր ոլորտում վերլուծության ենթակա տեղեկատվության ու դրա արժանահավատ աղբյուրների վերաբերյալ մեթոդաբանություն: Մեթոդաբանությունը հաստատվել է Միջգերատեսչական հանձնաժողովի 2010թ. մարտի նիստում.
  - Նախատեսված ոչ ֆինանսական գործունեության տեսակների և մասնագիտությունների (այսուհետ՝ ՆՈՖԳՏՄ) համար 2010թ. օգոստոսի 6-ին ընդունվել են ռիսկերի վրա հիմնված մոտեցման վերաբերյալ ուղեցույցներ (այսուհետ՝ ՌՎՀՄՈՒ).
  - Դատական և իրավապահ մարմինների, ինչպես նաև հաշվետու անձանց համար կազմակերպվել են մի շարք ուսուցողական միջոցառումներ.
  - Երկրի իշխանությունների հավաստմամբ, 2009թ. հոկտեմբերից մինչև 2010թ. սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում հարուցվել է թվով 11 ՓԼ քրեական գործ, ՓԼ մեղադրանքով դատարան է ներկայացվել թվով 3 քրեական գործ, որոնցից 2-ի գծով կայացվել է մեղադրական, իսկ 1-ի գծով՝ արդարացնող դատավճիռ:
9. Առաջին Առաջընթացի հաշվետվության ներկայացումից հետո ձեռնարկվել են հետևյալ լրացուցիչ միջոցառումները.
- Մշակվել և Միջգերատեսչական հանձնաժողովի 2012թ. հոկտեմբերի 25-ի նիստում հաստատվել է 2013-2015թթ. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ազգային ռազմավարությունը: Նոր ռազմավարությունը մշակելիս հաշվի են առնվել երկրում առկա ՓԼ/ԱՖ ռիսկերի ռազմավարական գնահատման (իրապարակվել է 2010թ.) արդյունքները.



- Վերը նշված՝ թվով 17 օրենքում ՓԼ/ԱՖ դեմ պայքարին առնչվող փոփոխությունների նախագծերի փաթեթը վերանայվել<sup>2</sup> և ներկայում ներառում է 15 օրենքում փոփոխությունների նախագծեր («Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք, «ՀՀ քրեական օրենսգիրք», «ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք», «ՀՀ մաքսային օրենսգիրք», «Գովազդի մասին» ՀՀ օրենք, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենք, «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենք, «Շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենք, «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և իրականացման մասին» ՀՀ օրենք, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենք, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք, «Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենք, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենք), որոնք 2012թ. նոյեմբերի 1-ի դրությամբ ներկայացվել են ՀՀ ազգային ժողով հաստատման<sup>3</sup>.
- 2012թ. հունվարի 27-ին նոր խմբագրությամբ հաստատվել է ՀՀ կենտրոնական բանկի գործառնական վարչության կողմից ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնին տեղեկատվության տրամադրման կարգը.
- 2012թ. հունվարի 27-ին նոր խմբագրությամբ հաստատվել է ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի և ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության միջև համագործակցության ձեռնարկը.
- 2012թ. ապրիլի 17-ին նոր խմբագրությամբ հաստատվել է կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների կասեցման կամ ահաբեկչության հետ կապված միջոցների սառեցման վերաբերյալ որոշումների ընդունման կարգը.

<sup>2</sup> Փոփոխությունների փաթեթը 2010թ. օգոստոս ամսվա վերջին ներկայացվել էր ՀՀ կառավարությանը: Իշխանությունների հավաստմամբ, այդ ժամանակ ուժի մեջ է մտել օրենսդրական նոր պահանջ, որի համաձայն ցանկացած օրենսդրական ակտ նախքան ՀՀ ազգային ժողովի կողմից հաստատվելը պետք է ուսումնասիրվի և գնահատվի տնտեսական, սոցիալական պաշտպանության, հակակոռուպցիոն, բնապահպանական և այլ ազդեցությունների տեսանկյունից: Ըստ այդմ, օրենսդրական փոփոխությունների փաթեթը կրկին ուղարկվել է բոլոր շահագրգիռ մարմինների և կառույցների (այդ թվում՝ իրավապահ մարմինների, վերահսկող մարմինների, ինքնակարգավորվող կազմակերպությունների և մասնավոր հատվածի) ուսումնասիրությանը, ինչի արդյունքում ներկայացվել են նախագծերի որոշակի դրույթների հետագա բարելավմանն ուղղված բազմաթիվ նոր առաջարկություններ և դիտողություններ: Սրանով է բացատրվում այն համեմատաբար երկար ժամանակահատվածը (շուրջ 2.5 տարի), որն իշխանություններին անհրաժեշտ է եղել ՄԱՆԻՎԱԼ-ի երրորդ փուլի գնահատման արդյունքում ներկայացված առաջարկների, ինչպես նաև ՖԱԹՖ-ի վերանայված հանձնարարականների դրույթների իրագործման նպատակով օրենսդրական փոփոխությունների նախագծերի փաթեթը մշակելու և վերջնական տեսքի բերելու համար:

<sup>3</sup> Սույն հաշվետվությունը կազմելիս օրենսդրական փոփոխությունների փաթեթը նախնական ուսումնասիրության նպատակով գտնվում էր ՀՀ ազգային ժողովի Պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովում: Իշխանությունների հավաստմամբ, փաթեթը նախատեսվում է ներառել ՀՀ ազգային ժողովի 2012թ. դեկտեմբերի նիստերի օրակարգում՝ առաջին ընթացմամբ ընդունելու համար:

- 2012թ. ապրիլի 17-ին հաստատվել է ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից կատարվող վերլուծությունների արդյունքների գնահատման ձեռնարկը.
  - 2012թ. ապրիլի 26-ին նոր խմբագրությամբ հաստատվել է ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի ներքին գործընթացների ձեռնարկը.
  - Իշխանությունները մի շարք ուսուցողական միջոցառումներ են կազմակերպել դատական և իրավապահ մարմինների, ՖԴԿ-ի, վերահսկող մարմինների և հաշվետու անձանց աշխատակիցների համար.
  - 2010թ. սեպտեմբերից մինչև 2012թ. հոկտեմբերն ընկած ժամանակահատվածում հարուցվել է թվով 18 ՓԼ քրեական գործ, ՓԼ մեղադրանքով դատարան է ուղարկվել թվով 18 քրեական գործ, որոնցից 6-ի գծով կայացվել է մեղադրական դատավճիռ և կիրառվել է բռնագրավում ընդամենը 801.475 եվրոյի չափով: Կարևոր է նշել, որ 2011թ. ՀՀ վճռաբեկ դատարանը պարզաբանում է տվել առ այն, որ ՓԼ հանցակազմով դատավճիռ կայացնելու համար պարտադիր չէ նախորդող հանցագործության համար դատավճռի առկայությունը:
10. Հայաստանը ձեռնարկել է նաև հավելյալ միջոցառումներ, որոնք, ինչպես արտացոլված է Առաջընթացի հաշվետվությունում, ուղղված են հիմնարար և այլ հանձնարարականների գծով արձանագրված թերությունների վերացմանը: Այդուհանդերձ, նշված հանձնարարականները սույն հաշվետվության շրջանակներում չեն ընդգրկվում և, հետևաբար, դրանց մասով համապատասխան վերլուծություն չի կատարվել:

**Բ. Հիմնարար հանձնարարականների գծով ձեռնարկված միջոցառումների ուսումնասիրություն**

11. Հիմնարար հանձնարարականների գծով ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ ուսումնասիրությունն անհրաժեշտ է դիտարկել երրորդ փուլի գնահատման շրջանակներում Առաջընթացի առաջին հաշվետվությունում դրանց մասով կատարված վերլուծության հետ համատեղ<sup>4</sup>: Քարտուղարության կողմից կատարված վերլուծությունը, որը ներկայացվում է ստորև, հիմնականում անդրադառնում է առաջընթացի վերջին հաշվետվության ներկայացումից հետո տեղ գտած նոր զարգացումներին, մասնավորապես՝ այն թերություններին, որոնց վերացման ուղղված լիարժեք կամ բավարար միջոցառումներ չեն ձեռնարկվել:

**Հանձնարարական 1. ՓԼ քրեականացում (ՓԳԿ-ի գնահատական՝ հիմնականում համապատասխանում է)**

12. **ՓԳԿ-ում արձանագրված առաջին թերություն** *(Դեռևս պարզ չէ, թե արդյոք նախորդող հանցագործության համար կայացված մեղադրական դատավճռի*

<sup>4</sup> Տես՝ ՄԱՆԻԿԱԼ (2010)5–Հայաստանի Առաջընթացի հաշվետվությունը և հիմնարար հանձնարարականների գծով Քարտուղարության կողմից իրականացված գրավոր վերլուծությունը [www.coe.int/moneyval](http://www.coe.int/moneyval) հղումով:

*առկայությունը պարտադիր պահանջ է գույքի՝ հանցավոր գործունեության արդյունքում ստացված լինելն ապացուցելու համար):*

Միայն ՓԼ հանցակազմով վերջնական դատավճռի առկայությունը կվկայեր այն մասին, որ Հայաստանի դատական համակարգում փոխվել է նախկինում գոյություն ունեցող այն կարծիքը, ըստ որի՝ նախորդող հանցագործության համար կայացված մեղադրական դատավճռի առկայությունը պարտադիր պահանջ է գույքի՝ հանցավոր գործունեության արդյունքում ստացված լինելն ապացուցելու համար: Ցավոք, երրորդ փուլի գնահատման հաշվետվության հրապարակումից հետո, նախորդող հանցագործության համար միաժամանակ կայացված դատավճռի բացակայության պարագայում միայն ՓԼ հանցակազմով դատավճիռ չի կայացվել:

13. Այդուհանդերձ, իշխանությունների հավաստմամբ, առկա է որոշակի դրական տեղաշարժ ի դեմս ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ՓԼ մի գործի կապակցությամբ տրված պարզաբանման (2011թ. փետրվարին), թեպետ սա միայն ՓԼ հանցակազմով գործ չէր: Տվյալ գործի շրջանակներում դատարանի որոշումը ցույց է տալիս, որ նախորդող հանցագործության համար դատավճռի առկայությունը պարտադիր չէ: Քանի որ դատարանի նշված որոշումը պարտադիր բնույթ է կրում համանման փաստական հանգամանքներով բնութագրվող գործերի դեպքում, հայաստանյան իշխանությունները եզրահանգում են, որ նախորդող հանցագործության համար դատավճռի առկայությունն այլևս պարտադիր պահանջ չէ գույքի՝ հանցավոր գործունեության արդյունքում ստացված լինելն ապացուցելու համար:
14. Հայաստանի իշխանությունները նշում են նաև այն մասին, որ փոխվել են որոշակի նախորդող հանցագործություններին առնչվող ապացույցների չափորոշչի վերաբերյալ պրակտիկ աշխատողների ընկալումները: Ի վկայություն այս հանգամանքի՝ նշվում է, որ Առաջընթացի առաջին հաշվետվության ներկայացումից հետո հարուցվել և ներկայում քննվում է միայն ՓԼ հանցակազմով 4 քրեական գործ: Գործերից 3-ի դեպքում ՓԼ հանցագործությունը կատարվել է երրորդ անձի կողմից: Եվս 3 միայն ՓԼ հանցակազմով գործերի դեպքում քննությունը դեռևս չի ավարտվել՝ ՓԼ հանցագործությունը որպես երրորդ անձի կողմից կատարված որակելու համար: Այդուհանդերձ, հաշվի առնելով միայն ՓԼ հանցակազմով հարուցված գործերի սահմանափակ քանակը, վերը նշված քայլերի արդյունավետության գիտատման տեսանկյունից դեռևս չափազանց վաղ է խոսել ՓԼ երևույթի նկատմամբ քննության մոտեցումներում էական փոփոխությունների մասին:
15. Անշուշուշտ, ՀՀ վճռաբեկ դատարանի վերը հիշատակված որոշումը և միայն ՓԼ հանցակազմով գործերի քննության փուլում մոտեցումների վերանայումը ողջունելի քայլեր են, որոնք վկայում են ՓԼ նախորդող հանցագործություններին առնչվող ապացույցների չափորոշչի մասով իրավական գործընթացներում ակնհայտորեն նոր կողմնորոշման առկայության մասին: Այս զարգացումները դեռևս պետք է իրենց հավաստումը գտնեն քննված գործերի և համապատասխան դատական պրակտիկայի միջոցով:

16. **ՓԳՀ-ում արձանագրված երկրորդ թերություն** (ՓԼ քրեական գործերի սակավաթվությունը եկամուտներ առաջացնող հանցագործությունների հատկանիշներով հարուցված քրեական գործերի ընդհանուր թվի համեմատ, ինչպես նաև գույքի՝ հանցավոր գործունեության արդյունքում ստացված լինելը հիմնավորելու համար դատարանների կողմից կիրառվող ապացուցման բարձր չափորոշիչը վկայում են ՓԼ քրեաիրավական նորմի կիրառման արդյունավետության հետ կապված խնդիրների առկայության մասին):

Այստեղ ի սկզբանե պետք է նշել, որ հեռակա ուսումնասիրության միջոցով դժվար է որևէ եզրահանգման գալ արդյունավետության առկայության կամ բացակայության մասին: Երրորդ փուլի ՓԳՀ-ի արդյունքներով, փողերի լվացման քրեաիրավական նորմը հիմնականում ներառում է Վիեննայի և Պալերմոյի կոնվենցիաներով նախատեսված օբյեկտիվ տարրերը, թեպետ փաստացի արդյունքների հիման վրա խորհուրդ է տրվում ձեռնարկել միջոցառումներ փողերի լվացման գործերի քրեական հետապնդման և դատական գործընթացների իրականացման մասով գոյություն ունեցող խոչընդոտները բացահայտելու համար:

17. Ինչպես նշվել էր Առաջընթացի առաջին հաշվետվությունում, ՀՀ գլխավոր դատախազության կոլեգիան իրականացրել է ՓԼ հանցագործությունների քննության և հարակից այլ հարցերի վերաբերյալ ուսումնասիրություն, և կազմակերպվել են ուսուցողական միջոցառումներ (դասընթացների անցկացում, ՓԼ/ԱՖ գործերի քննության վերաբերյալ էլեկտրոնային և թղթային նյութերով համալրված գրադարանի ստեղծում)՝ այս բնագավառում դատավորների, դատախազների և իրավապահների գիտելիքները բարելավելու նպատակով: Հետագայում որոշվել է, որ ուսուցողական միջոցառումները պետք է իրականացվեն համակողմանի մոտեցմամբ՝ քննիչների, դատախազների ու դատավորների համար կազմակերպելով նախնական և ընթացիկ ուսուցման դասընթացներ: Հաշվետու ժամանակահատվածում (2010-2012) կազմակերպվել է նմանատիպ երեք դասընթաց՝ հիմնականում արտասահմանյան տեխնիկական օժանդակության շրջանակներում: Հետևաբար, այս հարցի վերաբերյալ Առաջընթացի առաջին հաշվետվությամբ ներկայացված առաջարկները դեռևս արդիական են մնում: Սույն վերլուծության շրջանակներում հնարավոր չէ գնահատել միանգամայն ողջունելի համարվող այդ դասընթացների պրակտիկական և ազդեցությունը: Հարկ է նշել նաև, որ 2010 թվականին Դատախազության դպրոցի կողմից հրապարակվել է փողերի լվացման դեմ պայքարի վերաբերյալ ձեռնարկ:

18. Վերջին վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ Առաջընթացի առաջին հաշվետվության ներկայացումից հետո հարուցվել և քննվել է 18 գործ, որոնցից 6 գործի մասով կայացվել է մեղադրական դատավճիռ<sup>5</sup>: Իշխանությունների հավաստմամբ, հարուցվել է միայն ՓԼ հանցակազմով 6 գործ, որից 2-ը դեռևս քննության ընթացքում են, 3-ի քննությունը կասեցված է, իսկ 1-ը վերաորակվել է որպես նախորդող

<sup>5</sup> Հետաքրքրական է, որ 2006 թվականից ի վեր բոլոր դատավճիռների ամբողջական տեքստի անգլերեն տարբերակը տեղադրված է ՀՀ ԿԲ-ի ինտերնետային կայքէջում:

հանցագործությամբ զուգորդված ՓԼ գործ: Միայն ՓԼ հանցակազմով մեղադրական եզրակացություններ դատարան չեն ուղարկվել: Նախորդ ժամանակահատվածների վիճակագրության համեմատ, հարուցված և քննված ՓԼ գործերի քանակը փոքր-ինչ ավելացել է, և որպես դրական զարգացում կարելի է նշել, որ ՓԼ 6 դատավճռից 5-ը վերջնական է: Միջոցների սառեցում կիրառվել է 1 դեպքում, իսկ բռնագրավում բոլոր 6 դեպքում՝ ընդամենը 801.000 եվրոյի չափով: Հեռակա ուսումնասիրության տեսանկյունից, այս արդյունքները փողերի վացման գործերի քրեական հետապնդման արդյունավետությունը բարձրացնելու առումով հուսադրող են: Նշված հարցերը պետք է ուսումնասիրության առարկա դառնան ՄԱՆԻՎԱԼ-ի հաջորդ փուլի գնահատման ընթացքում:

**Հատուկ հանձնարարական II. ԱՖ քրեականացում (ՓԳՀ-ի գնահատական՝ մասամբ համապատասխանում է)**

19. ԱՖ-ի քրեականացման հետ կապված թերությունները Առաջընթացի առաջին հաշվետվության ժամանակ դեռևս չէին վերացվել, թեպետ իշխանություններն այս ուղղությամբ որոշակի քայլեր էին ձեռնարկել՝ մշակելով վերը նշված օրենքներում փոփոխությունների նախագծեր: Այս առումով իրավիճակն էապես չի փոփոխվել, և օրենքների նախագծերը ներկայում գտնվում են ՀՀ ազգային ժողովում: Ըստ այդմ, հնարավոր չէ եզրահանգել, որ նշված թերությունների խնդիրը լիարժեք կերպով լուծվել է:

20. **ՓԳՀ-ում արձանագրված առաջին թերություն** (ՔՕ-ի 217.1 հոդվածի համաձայն՝ *«Սահաբեկչների կամ սահաբեկչական կազմակերպությունների ֆինանսավորումը չի քրեականացվում այն իրավիճակներում, որոնցում գույքը կամ ֆինանսական միջոցները տրամադրվում կամ հավաքագրվում են՝ չունենալով մտադրություն կամ իմացություն, որ գույքը կամ ֆինանսական միջոցներն օգտագործվելու են սահաբեկչական կոնկրետ գործողություն կատարելու համար, ինչպես պահանջվում է ՀՀ. II-ով*):

Առաջընթացի առաջին հաշվետվությանը կից ներկայացված օրենքի նախագծում էական փոփոխություններ չեն կատարվել: ՔՕ-ի 217.1 հոդվածի նոր նախագծի համաձայն (որը ներառված է «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու» մասին ՀՀ օրենքի նախագծում»)՝ *«Սահաբեկչության ֆինանսավորումը ցանկացած եղանակով գույքի ուղղակի կամ անուղղակի տրամադրումն է կամ հավաքագրումը այնպիսի հանցավոր մտադրությամբ, որ այն պետք է օգտագործվի, կամ այնպիսի գիտակցությամբ, որ այն ամբողջովին կամ մասամբ կօգտագործվի սահաբեկչության կատարման համար կամ սահաբեկչական կազմակերպության կամ անհատ սահաբեկչի կողմից ...»:*

21. Վերը նշված դրույթն օրինական ուժ ստանալու դեպքում (հաշվի առնելով նաև այն հնարավոր փոփոխությունները, որոնք կարող են կատարվել օրենքի ընդունման գործընթացում) կվերացնի բացահայտված թերությունը և կբարելավի Հայաստանի համապատասխանությունը դիտարկվող հանձնարարականի պահանջներին:

22. **ՓԳՀ-ում արձանագրված երկրորդ թերություն** (Հոդվածի 1-ին մասում և 3-րդ մասում օգտագործված տերմինների (համապատասխանաբար «ֆինանսական միջոցներ» և «ահաբեկչության ֆինանսավորման առարկա») անհամադրելիության պատճառով պարզ չէ, թե արդյոք ՔՕ-ի 217.1 հոդվածը կիրառելի է «Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» կոնվենցիայով սահմանված բոլոր «միջոցների» նկատմամբ):

ՔՕ-ի 217.1 հոդվածի նոր խմբագրությամբ «ահաբեկչության ֆինանսավորման» սահմանման մեջ «ֆինանսական միջոցներ» տերմինի փոխարեն օգտագործվում է «գույք» տերմինը: Խմբագրված 217.1 հոդվածի 3-րդ պարբերությամբ սահմանվում է, որ «սույն հոդվածի իմաստով գույք է հանդիսանում սույն օրենսգրքի 103.1-ին հոդվածի 4-րդ մասով նախատեսված գույքը»: Խմբագրված 103.1 հոդվածը տալիս է «գույք» տերմինի լիարժեք սահմանումը, որը կիրառելի է ՔՕ-ի բոլոր հոդվածների համար. «...գույք են հանդիսանում ցանկացած տեսակի նյութական բարիքները, քաղաքացիական իրավունքի շարժական կամ անշարժ օբյեկտները, ներառյալ՝ ֆինանսական (դրամական) միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները, գույքային իրավունքները կամ շահերը հավաստող փաստաթղթերը կամ այլ միջոցները, գույքից ստացված կամ դրա նկատմամբ հաշվեգրվող տոկոսները, շահութաբաժինները կամ այլ եկամուտները»:

23. Վերը նշված դրույթներն օրինական ուժ ստանալու դեպքում (հաշվի առնելով նաև այն հնարավոր փոփոխությունները, որոնք կարող են կատարվել օրենքի ընդունման գործընթացում) կվերացնեն բացահայտված թերությունը և կբարելավեն Հայաստանի համապատասխանությունը դիտարկվող հանձնարարականի պահանջներին:

24. **ՓԳՀ-ում արձանագրված երրորդ թերություն** (ՔՕ-ի 217-րդ հոդվածով («ահաբեկչություն») պահանջվող դիտարկության տարրը մասնակիորեն սահմանափակում է ԱՖ քրեաիրավական նորմի կիրառությունը «Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» կոնվենցիայի հավելվածում թվարկված ինը կոնվենցիաներով և արձանագրություններով նախատեսված ահաբեկչական հանցագործությունների մեծ մասի նկատմամբ):

25. Ահաբեկչությունը սահմանող՝ ՔՕ-ի 217-րդ հոդվածը ներկայում պարունակում է դիտավորության վերաբերյալ դրույթ, մասնավորապես՝ ահաբեկչություն է համարվում այն գործողությունը, որը կատարվել է «հասարակական անվտանգությունը խախտելու, բնակչությանն ահաբեկելու կամ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի որոշման ընդունման վրա ներգործելու կամ հանցավորի ապօրինի այլ պահանջը կատարելու նպատակով», մինչդեռ «Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» կոնվենցիայի հավելվածում թվարկված ինը կոնվենցիաներով և արձանագրություններով նախատեսված ահաբեկչական հանցագործությունների մեծ մասի դեպքում դիտավորության առկայություն չի պահանջում:

26. ՔՕ-ի 217-րդ հոդվածի նոր խմբագրությամբ ահաբեկչությունը սահմանվում է այլ մոտեցմամբ. «Ահաբեկչությունը՝ այնպիսի գործողությունը, որը նախատեսված է

Միավորված ազգերի կազմակերպության՝ Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին 1999 թվականի կոնվենցիայի հավելվածներով, ինչպես նաև ցանկացած այլ գործողություն, որն ուղղված է քաղաքացիական անձի կամ զինված ընդհարման ժամանակ ռազմական գործողություններին ակտիվորեն չմասնակցող անձի մահվանը կամ ծանր մարմնական վնասվածք պատճառելուն կամ դրանց սպառնալիքին այն դեպքում, երբ այդպիսի գործողության նպատակը իր բնույթով կամ էությանը բնակչությանն ահաբեկելը կամ պետական մարմնի կամ միջազգային կազմակերպության կամ պաշտոնատար անձի որոշման ընդունման կամ գործողության կատարման կամ դրանցից ձեռնպահ մնալու վրա ներգործելն է, պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասն տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա»: Հայաստանի իշխանությունները գտնում են, որ այս սահմանումը կվերացնի բացահայտված թերությունը:

27. Մնում է հավաստիանալ, որ օրենսդրական նորմի սահմանման այս բավականին նորարարական մոտեցումն ի վերջո կընդլայնի ահաբեկչության հանցագործության շրջանակը՝ ներառելով բոլոր հանցակազմերը և համապատասխան հանցավոր դիտավորությունները, որոնք նախատեսված են «Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» կոնվենցիայի հավելվածում թվարկված ինը կոնվենցիաներով և արձանագրություններով: Եթե միջազգային իրավական ակտերին այս հղումը (որով նախատեսված հանցագործությունները տեղական օրենսդրությամբ սահմանված չեն որպես հանցագործություն) նշված կոնվենցիաների և արձանագրությունների դրույթներին ինքնաիրացնող բնույթ է հաղորդում, ապա, վերը նշված դրույթներն օրինական ուժ ստանալու դեպքում (հաշվի առնելով նաև այն հնարավոր փոփոխությունները, որոնք կարող են կատարվել օրենքի ընդունման գործընթացում), կարելի է համարել, որ բացահայտված թերությունը վերացվել է:

28. **ՓԳՀ-ում արձանագրված չորրորդ թերություն** (ԱՖ քրեաիրավական նորմում օգտագործված՝ «ահաբեկչության» սահմանումը չի պարունակում հղում «միջազգային կազմակերպություններին», ինչը պահանջվում է «Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» կոնվենցիայով):

ՔՕ-ի 217-րդ հոդվածի փոփոխության նախագիծը («ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու» մասին ՀՀ օրենքի նախագծի 7-րդ հոդված) հստակ հղում է կատարում միջազգային կազմակերպություններին: Նշված դրույթն օրինական ուժ ստանալու դեպքում (հաշվի առնելով նաև այն հնարավոր փոփոխությունները, որոնք կարող են կատարվել օրենքի ընդունման գործընթացում) կվերացնի բացահայտված թերությունը:

29. **ՓԳՀ-ում արձանագրված հինգերորդ թերություն** (Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն նախատեսված չէ):

Իրավիճակը չի փոխվել, քանի որ իշխանությունները չեն ձեռնարկել և մոտ ապագայում չեն պատրաստվում ձեռնարկել որևէ քայլ այս թերության վերացման ուղղությամբ: Իշխանությունները շարունակում են մնալ այն կարծիքին, որ ՓԳՀ-ի առաջարկը

հակասում է ՀՀ սահմանադրության և Քրեական օրենսգրքի սկզբունքներին, թեպետ այդ կարծիքը գնահատողների կողմից դիտարկվել և չէր ընդունվել:

30. Այդուհանդերձ, որոշակի զարգացումներ առկա են իրավաբանական անձանց նկատմամբ ՓԼ/ԱՖ-ի համար կիրառելի վարչական պատասխանատվության միջոցների սահմանման ուղղությամբ: «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012թ. նախագծի 31-րդ հոդվածը ՓԼ/ԱՖ հանցագործությունների դեպքում իրավաբանական անձանց համար սահմանում է մի շարք վարչական պատժամիջոցներ՝ դրանք տարբերակելով հաշվետվություն տրամադրող և չտրամադրող իրավաբանական անձանց համար: Սահմանված պատժամիջոցների թվին են պատկանում տուգանքները<sup>6</sup> (հաշվետվություն չտրամադրող իրավաբանական անձի կողմից ՓԼ-ում ներգրավված լինելու դեպքում՝ նվազագույն աշխատավարձի 2.000-ապատիկի, իսկ ԱՖ-ում ներգրավված լինելու դեպքում՝ 10.000-ապատիկի չափով, և հաշվետվություն տրամադրող իրավաբանական անձի կողմից ՓԼ-ում ներգրավված լինելու դեպքում՝ նվազագույն աշխատավարձի 5.000-ապատիկի, իսկ ԱՖ-ում ներգրավված լինելու դեպքում՝ 20.000-ապատիկի չափով), օրենքով սահմանված կարգով իրավաբանական անձի լուծարումը, լիցենզիան ուժը կորցրած ճանաչելը, կասեցնելը կամ դադարեցնելը: Հոդված 31-ը սահմանում է ՓԼ և ԱՖ մեջ իրավաբանական անձի ներգրավվածության դեպքերը, դրանց համար պատասխանատվության ենթարկելու պայմանները, ինչպես նաև վարչական պատժամիջոցների կիրառման ընթացակարգին առնչվող այլ հարցեր: Նշված փոփոխություններով նախատեսվող վարչական պատժամիջոցների կիրառման ռեժիմը համաչափ և տարհամոզիչ է:

**Հանձնարարական 5. ՀՊՈՒ՝ ֆինանսական հաստատությունների (այսուհետ՝ ՖՀ) մասով (ՓԳՀ-ի գնահատական՝ մասամբ համապատասխանում է)**

31. **ՓԳՀ-ում արձանագրված առաջին թերություն** (Առկա են ըստ ներկայացնողի ֆինանսական գործիքներ, որոնք որոշ դեպքերում նմանվում են անանուն հաշիվների):

Ինչ վերաբերում է անանուն կամ մտացածին անուններով հաշիվներին, ՓԳՀ-ում նշվել է, որ իշխանությունների հավաստմամբ՝ Հայաստանում անանուն կամ մտացածին անուններով հաշիվներ գոյություն չունեն: Ըստ ներկայացնողի ֆինանսական գործիքների կապակցությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 148-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչելու կամ խմբագրելու մասով որևէ փոփոխություն չի կատարվել: Ըստ այդ հոդվածի 2-րդ մասի՝ օրենքով կարող է բացառվել որոշակի տեսակի արժեթղթերի թողարկումը, ինչպիսիք են, օրինակ՝ ըստ ներկայացնողի (օրդերային), անվանական կամ համանման այլ արժեթղթերը: Որոշակի արժեթղթերի թողարկումը արգելելու հետ կապված, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նոր նախագծի 15-րդ հոդվածի 1-

<sup>6</sup> 1 եվրոն հավասար է 500 ՀՀ դրամի, նվազագույն աշխատավարձի հաշվարկային մեծությունը 1.000 ՀՀ դրամ է, այսինքն՝ նվազագույն աշխատավարձի եռլուսապատիկը կազմում է 2 միլիոն ՀՀ դրամ (շուրջ 4.000 եվրո), հինգհազարապատիկը՝ 5 միլիոն ՀՀ դրամ (շուրջ 10.000 եվրո), իսկ տասնհազարապատիկը՝ 10 միլիոն ՀՀ դրամ (շուրջ 20.000 եվրո):



ին պարբերությամբ արգելվում է բացել, թողարկել, տրամադրել կամ սպասարկել 1) անանուն կամ մտացածին անուններով հաշիվներ, 2) միայն թվային, տառային կամ պայմանական այլ նշաններով արտահայտված հաշիվներ, 3) ըստ ներկայացնողի արժեթղթեր (նախորդ նախագծում առկա «և վճարային գործիքներ» արտահայտությունը հանվել է):

32. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նոր նախագծով սահմանված ուղղակի արգելքը նշված դրույթն օրինական ուժ ստանալու դեպքում (հաշվի առնելով նաև այն հնարավոր փոփոխությունները, որոնք կարող են կատարվել օրենքի ընդունման գործընթացում) անկասկած կփարատի փոխադարձ գնահատման հաշվետվությամբ բարձրացված մտահոգությունը՝ պայմանով, որ դրան զուգահեռ ձեռնարկվեն պատշաճ միջոցառումներ գոյություն ունեցող ըստ ներկայացնողի ֆինանսական գործիքների խնդիրը լուծելու ուղղությամբ: Ակնկալվում է, որ Հայաստանի իշխանությունները որոշակի ժամանակահատված կսահմանեն այս դրույթի արդյունավետ իրականացումն ապահովելու համար:

33. **ՓԳՀ-ում արձանագրված երկրորդ թերություն** (ՖՀ-ներից չի պահանջվում ա) ընդունել ռիսկերի արդյունավետ կառավարման ընթացակարգեր այն իրավիճակների դեպքում, որոնցում հաճախորդին թույլատրվում է գործարար հարաբերությունից օգտվել նախքան ՀՊՈՒ ստուգումն ավարտելը, և բ) ՀՊՈՒ միջոցառումներն էականության և ռիսկի հիման վրա կիրառել առկա հաճախորդների նկատմամբ և համապատասխան պարբերականությամբ իրականացնել առկա հարաբերությունների պարշաճ ուսումնասիրություններ):

Նախորդ Առաջընթացի հաշվետվության ներկայացումից հետո հաճախորդի ինքնության ստուգման ժամկետների և ռիսկերի վրա հիմնված ՀՊՈՒ-ին առնչվող միջոցառումների վերաբերյալ դրույթները որոշակի փոփոխությունների են ենթարկվել: Մասնավորապես, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի ներկա նախագծի 16-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ հաշվետու անձանցից պահանջվում է օրենքով սահմանված նույնականացման տվյալների հիման վրա ստուգել հաճախորդի ինքնությունը գործարար հարաբերություն հաստատելու կամ միանգամյա գործարք կատարելու ընթացքում, կամ դրանից հետո ողջամիտ, բայց ոչ ավելի, քան յոթնօրյա ժամկետում, եթե ռիսկն արդյունավետորեն կառավարվում է, և դա անհրաժեշտ է հաճախորդի հետ բնականոն գործարար հարաբերությունները չխափանելու նպատակով: Այս նոր ձևակերպումն ըստ էության մասամբ կրկնում է Գնահատման մեթոդաբանության 5.14-րդ էական չափանիշի շարադրանքը:

34. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նոր նախագծի 18-րդ հոդվածի 1-ին մասը և 23-րդ հոդվածը հաշվետու անձանցից պահաջում են ներդնել ռիսկի կառավարման պատշաճ ընթացակարգեր:

35. Ինչպես նշվել է նաև նախորդ Առաջընթացի հաշվետվությունում, իրական շահառուի առկայությունը պարզելու, իրավաբանական անձի մասնակցության և վերահսկողության կառուցվածքի վերաբերյալ լիարժեք տեղեկատվություն

հավաքագրելու համար թույլատրված յոթնօրյա ժամկետը որոշ դեպքերում կարող է բավարար չլինել:

36. Արդիական են մնում նաև նախորդ Առաջընթացի հաշվետվությամբ ներկայացված՝ իրական շահառուի սահմանման, ինչպես նաև 2010 թվականի օգոստոսին ՖԴԿ-ի կողմից հրապարակված շրջաբերական գրության հետ կապված առաջարկները:

37. **ՓԳՀ-ում արձանագրված երրորդ թերություն** («ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով և հարակից այլ իրավական ակտերով նախատեսված պարտավորությունների ոչ բավարար/ ոչ արդյունավետ կատարումը ՖՀ-ների, հատկապես՝ վարկային կազմակերպությունների և ոչ բանկն այլ ՖՀ-ների կողմից):

Հեռակա ուսումնասիրության շրջանակներում դժվար է գնահատել ֆինանսական հաստատությունների կողմից ՀՊՈՒ-ի պահանջների կատարման համարժեքությունը; Այս հարցը կարող է պատշաճ կերպով գնահատվել տեղում այցելության ընթացքում՝ համակողմանի տեղեկատվության, հաշվետվություն տրամադրող անձանց ու վերահսկող մարմինների հետ հանդիպումների հիման վրա:

38. Հարկ է նշել, որ իշխանությունները ֆինանսական հաստատությունների համար մի շարք ուսուցողական միջոցառումներ են կազմակերպել, այդ թվում նաև՝ ՀՊՈՒ-ին առնչվող միջոցների վերաբերյալ, նրանց իրազեկության մակարդակի բարձրացման և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրական և ենթօրենսդրական պահանջների առավել արդյունավետ իրականացման նպատակով: Միջոցառումներ են ձեռնարկվել նաև վերահսկող մարմնի կողմից՝ համալիր և նպատակային ստուգումների տեսքով, որոնց արդյունքում մի շարք պատժամիջոցներ են կիրառվել, այդ թվում ՀՊՈՒ-ի պահանջների խախտման համար<sup>7</sup>:

39. Որպես ամփոփում նշենք, որ բացահայտված թերությունների վերացման և ՓԳՀ-ով ներկայացված առաջարկների իրագործման նպատակով Հայաստանը մշակել է օրենսդրական փոփոխություններ, ֆինանսական հաստատությունների համար կազմակերպել է մի շարք ուսուցողական միջոցառումներ, ինչպես նաև իրականացրել է հաշվետվություն տրամադրող անձանց՝ գործող պահանջներին համապատասխանության ստուգումներ: Թեպետ ներկա փուլում միայն օրենսդրական փոփոխությունների նախագծերի հիման վրա հնարավոր չէ եզրահանգել, որ բացահայտված թերությունները լիարժեքորեն վերացվել են, դրանց վերացմանն ուղղված հստակ գործընթացի առկայությունն ակնհայտ է: Այս եզրահանգումը կարող է վերանայվել՝ կախված օրենսդրական փոփոխությունները օրինական ուժ ստանալու հանգամանքից (հաշվի առնելով նաև այն հնարավոր փոփոխությունները, որոնք կարող են կատարվել օրենքի ընդունման գործընթացում):

<sup>7</sup> Օրինակ, 2010 թվականի առաջին կիսամյակի արդյունքներով, ՀՊՈՒ-ի պահանջների խախտման համար բանկերի կողմից վճարված տուգանքների ընդհանուր գումարը գերազանցել է 2 միլիոն ՀՀ դրամը, մինչդեռ 2009 թվականին այդ ցուցանիշը կազմել է 200 հազար ՀՀ դրամ, իսկ 2008 թվականին՝ 300 հազար ՀՀ դրամ:

**Հանձնարարական 10. Տեղեկատվության պահպանում (ՓԳՀ-ի գնահատական՝ հիմնականում համապատասխանում է)**

40. **ՓԳՀ-ում արձանագրված առաջին թերություն** (Չկան ուղենիշներ, որոնցով «գործարքի (գործարար հարաբերության) հիմնական պայմաններ» հասկացության կապակցությամբ կարգաբանվեր, թե որ պայմանների նկատմամբ են տարածվում տեղեկությունների պահպանման պահանջները գործարքի՝ պայմանագիր չլինելու դեպքում):

Արդիական են մնում Առաջընթացի առաջին հաշվետվությամբ ներկայացված առաջարկները:

41. Իշխանությունները որոշել են այս խնդիրը լուծել ՓԼ/ԱՖ դեմ պայքարին առնչվող օրենսդրությունում փոփոխություններ կատարելու միջոցով: Տեղեկատվության պահպանման վերաբերյալ պահանջները սահմանվում են «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նոր նախագծի 22-րդ հոդվածով: Վերջինիցս հանվել է «գործարքի (գործարար հարաբերության) հիմնական պայմաններ» արտահայտությունը, և խմբագրված տեքստը շարադրվել է հետևյալ կերպ. «Հաշվետվություն տրամադրող անձը պետք է պահպանի սույն օրենքով պահանջվող ...տեղեկությունները ...այդ թվում ...ներպետական և միջազգային գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ բոլոր անհրաժեշտ տվյալները ...որոնք բավարար կլինեն տվյալ գործարքի կամ գործարար հարաբերության ամբողջական պատկերը վերականգնելու համար»:

42. Թեև բացահայտված թերությունները վերացնելու նպատակով կազմվել է օրենսդրական փոփոխությունների փաթեթ (որն ընդունվելու դեպքում ՓԳՀ-ի այս առաջարկն իրագործված կլինի), այդուհանդերձ, չեն մշակվել ՓԳՀ-ով առաջարկված ուղեցույցները: ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի սեպտեմբերի 9-ի որոշմամբ հաստատված «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ֆինանսական հաստատությունների համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ» կանոնակարգը նշված խնդիրը չի լուծում: Հաշվետվությամբ արձանագրվել է, որ տեղեկատվության պահպանման պահանջների (մասնավորապես՝ իրական շահառուի վերաբերյալ տվյալների փաստաթղթավորման) խախտման համար կիրառվել են պատժամիջոցներ:

43. Ընդհանուր առմամբ, Հ.5-ի մասով կատարված եզրահանգումները արդիական են մնում: Հայաստանի իշխանությունները պետք է հետագա քայլեր ձեռնարկեն այս հանձնարարականի պահանջները կատարելու ուղղությամբ:

**Հանձնարարական 13. ԿԳՀ (ՓԳՀ-ի գնահատական՝ հիմնականում համապատասխանում է)**

44. **ՓԳՀ-ում արձանագրված առաջին թերություն** (ՖՀ-ների կողմից տրամադրվող ԿԳՀ-ները սակավաթիվ են):

ՓԳՀ-ում բարձրացվել էր ՖՀ-ների կողմից ԿԳՀ-ների տրամադրման արդյունավետության հարցը. չնայած կասկածելիության չափանիշների և ԿԳՀ

տրամադրելու պարտավորության վերաբերյալ իրազեկության բարձր մակարդակին՝ տրամադրված ԿԳՀ-ների քանակը համարվում է շատ ցածր: Այս առումով, օրենքով սահմանված պարտավորությունների վերաբերյալ համապատասխան աշխատակիցների պատշաճ իրազեկությունն ապահովելու նպատակով առաջարկվել էր հաշվետվություն տրամադրող անձանց համար կազմակերպվել լրացուցիչ ուսուցողական միջոցառումներ, մասնավորապես՝ կասկածելի գործարքների բացահայտման և ԿԳՀ-ների տրամադրման վերաբերյալ, ներառյալ առկա տիպաբանություններն ու միտումները (հատկապես՝ ՆՈՖԳՏՄ-ների համար):

45. Ստորև բերված ամփոփ աղյուսակները ներկայացնում են ԿԳՀ-ների տրամադրման մասով իրավիճակի ընդհանուր պատկերը: Հաշվետվություն տրամադրող անձանց (այդ թվում՝ ֆինանսական և ոչ ֆինանսական հաստատությունների, ինչպես նաև հաշվետվություն տրամադրող անձանց այլ տեսակների) ընդհանուր քանակը 6256 է, որից 22-ը բանկեր են:

**Ֆինանսական հաստատությունների կողմից ներկայացված ԿԳՀ-ներ**

	Բանկեր	Վարկ. կազմ-եր	Արտարժ. փոխ. կետեր	Դրամ. փոխանց. կազմ-եր	Կենտ. դեպոզիտա րիա	Ապահովագ. ընկ-եր
2009	70	-	-	1	-	-
2010	432	-	-	-	-	-
2011	184	-	-	-	-	-
2012 (1 հոկտ.)	154	1	-	-	2	-

**ՖԴԿ-ի կողմից ստացված հաշվետվություններ և ձեռնարկված քայլեր**

	Նվազ. շեմը գերազանցող գործարքներ	ՓԼ կասկածելի գործարքներ	ԱՖ կասկածելի գործարքներ	ՖԴԿ-ի կողմից վերլուծված գործեր/ դրվագներ <sup>8</sup> ՓԼ	ՖԴԿ-ի կողմից վերլուծված գործեր/ դրվագներ ԱՖ	Իրավապահ մարմինների տեղեկացում ներ
2006	53408	27		6		2
2007	77730	27		35		11
2008	93357	37		46		11
2009	102949	72		111		9
2010	136580	436		215		23
2011	150379	188		263		17
2012	120502	157		197		10

46. Իշխանությունների հավաստմամբ, ֆինանսական հաստատությունների համար պարբերաբար կազմակերպվում են ուսուցողական միջոցառումներ (ըստ Առաջընթացի հաշվետվության, հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է 10-ից ավելի

<sup>8</sup> Դրվագը սահմանվում է որպես ՖԴԿ-ի կողմից ստացված տեղեկատվության/ ազդակների (այդ թվում՝ ազգային և միջազգային գործընկերների կողմից ստացված հարցումների կամ տեղեկացումների) հիման վրա կատարված նախնական վերլուծություն, որը չի հանգեցնում ՖԴԿ-ի կողմից հավելյալ վերլուծության կամ հետագա քայլերի ձեռնարկման:

միջոցառում), որոնց թեմաներն ընդգրկել են նաև տիպաբանությունները, ՓԼ/ԱՖ ռիսկի ազդակներն ու կասկածելիության չափանիշները: Ռազմավարական վերլուծության, ինչպես նաև ՖԴԿ-ի կողմից կատարված վերլուծական աշխատանքների և միջազգային տիպաբանությունների հիման վրա մշակվել է թվով 12 ՓԼ տիպաբանություն<sup>9</sup>: Անշուշտ, սրանք բոլոր դրական քայլեր են, որոնք հաշվետվություն տրամադրող անձանց օժանդակում են ավելի լավ հասկանալ ԿԳՀ-ներ ներկայացնելու իրենց պարտականությունը:

47. Որոշակի քայլեր են ձեռնարկվել նաև տեղերում ստուգումների մասով: Իշխանությունների հավաստմամբ, հաշվետու ժամանակահատվածում թվով 12 դեպքում պատժամիջոցներ են կիրառվել հաշվետվությունների ներկայացման պահանջի խախտման, 9 դեպքում՝ հաշվետվությունների ուշ ներկայացման, 3 դեպքում՝ չներկայացման, իսկ 1 դեպքում՝ հաշվետվությունում սխալ տեղեկատվության արտացոլման համար:
48. Առկա վիճակագրության համաձայն, բացառությամբ 3 դեպքի՝ բոլոր ԿԳՀ-ները ներկայացվել են բանկերի կողմից: 2010 թվականին ԿԳՀ-ների քանակը շեշտակի ավելանալուց հետո հետագայում ակնհայտորեն նվազել է: Իշխանություններն այդ նվազումը բացատրում են հիմնականում հաշվետվությունների ներկայացման սկզբունքի վերանայմամբ: Մասնավորապես, հաշվետվություն տրամադրող անձինք մի քանի փոխկապակցված գործարքների գծով նախկինում ներկայացվող առանձին հաշվետվությունների փոխարեն այժմ ներկայացնում են մեկ հաշվետվություն: Բացի այդ, հաշվետվություն տրամադրող անձանց իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված ջանքերի արդյունքում էապես նվազել է այսպես կոչված «պաշտպանողական հաշվետվականության» պրակտիկան: Ներկայացված ԿԳՀ-ների փոքրաթիվությունն արտացոլում է համապատասխան ոլորտներում բնորոշված ռիսկերի ցածր մակարդակը, ինչպես նաև արժեթղթերի շուկայի թերզարգացած վիճակն ու կյանքի ապահովագրության պրոդուկտների բացակայությունը: Այս եզրահանգումները բխում են Հայաստանի իշխանությունների կողմից իրականացված Ռիսկերի ռազմավարական գնահատումից, որի արդյունքներով բացահայտված ՓԼ/ԱՖ ռիսկերի և համապատասխան սխեմաների հիմնական մասը վերազրկվում է ընդհանուր ֆինանսական համակարգի ակտիվների 93-96 տոկոսը ներառող բանկային համակարգին:
49. Հեռակա ուսումնասիրության միջոցով դժվար է որևէ եզրահանգման գալ հաշվետվականության համակարգի արդյունավետության մասին: Հայաստանը որոշակի միջոցառումներ է ձեռնարկել հաշվետվականության պահանջների իրագործման հարցում ֆինանսական հաստատություններին օժանդակելու մասով և անմիջական հսկողության ներքո է պահում այս հարցը: Մտահոգիչ է մնում ՓԼ կասկածելի գործարքների վերաբերյալ հաշվետվությունների փոքր քանակը,

---

<sup>9</sup> Հրապարակված տիպաբանությունների անգլերեն տարբերակները տեղադրված են ՀՀ ԿԲ-ի ինտերնետային կայքէջում՝ <https://www.ԿԲ.am/en/sitepages/ՖԴԿtypologies.aspx> հասցեով:

հատկապես՝ ոչ բանկ ֆինանսական հաստատությունների կողմից ներկայացվող հաշվետվությունների մասով: Հայաստանի իշխանություններին խորհուրդ է տրվում շարունակել միջոցառումների ձեռնարկումը՝ մինչև հաջորդ գնահատումը ոչ բանկ ֆինանսական հաստատությունների և այլ հաշվետու անձանց կողմից հաշվետվականության մասով շոշափելի առաջընթաց ապահովելու նպատակով:

**Հատուկ հանձնարարական IV. ԿԳՀ (ՓԳՀ-ի գնահատական՝ հիմնականում համապատասխանում է)**

50. **ՓԳՀ-ում արձանագրված առաջին թերություն** (Ուղեցույցների բացակայությունը խոչընդոտում է հաշվետվություն տրամադրելու պարտավորության արդյունավետ կատարումը):

ՓԳՀ-ում բարձրացվել էր ԱՖ-ին վերաբերող ԿԳՀ-ների տրամադրման պարտավորության իրականացման արդյունավետության հարցը և իշխանություններին առաջարկվել էր մշակել միջոցների սառեցման պարտավորության վերաբերյալ ուղեցույցներ և ԱՖ տիպաբանություններ:

51. ԱՖ-ին վերաբերող ԿԳՀ-ների գծով փոփոխություններ չեն արձանագրվել: Մինչ այժմ հաշվետվություն տրամադրող անձանց կողմից ԱՖ-ի կասկածի կամ ՄԱԿ ԱԽ-ի ցանկերի հետ համընկնման վերաբերյալ որևէ ԿԳՀ չի ներկայացվել:

52. ՖԴԿ-ի կողմից հրապարակված տիպաբանությունները ԱՖ-ին չեն անդրադառնում: Մինչ այժմ ԱՖ-ին առնչվող որևէ ուղեցույց չ հրապարակվել, սակայն իշխանությունները հավաստիացնում են, որ դա կարվի ՓԼ/ԱՖ վերանայված օրենսդրության ընդունումից և ուժի մեջ մտնելուց հետո:

53. Իշխանությունների՝ վերը նշված ուղեցույցները համապատասխան օրենսդրության ընդունումից հետո հրապարակելու մոտեցումը հասկանալի է, հաշվի առնելով այդ խնդրի լուծմամբ զբաղվող ՖԴԿ-ի սահմանափակ մարդկային ռեսուրսների գործոնը: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ ակնկալվող օրենսդրական փոփոխությունների ընդունումը նախատեսվածից ավելի երկար է տևել (2.5 տարի): Հետևաբար, ճիշտ կլիներ հաշվի առնել այս հետաձգման և ուղեցույցների բացակայության ազդեցությունը հաշվետվություն տրամադրող անձանց գործունեության տեսանկյունից, քանի որ ՓԳՀ-ով առաջարկների ներկայացումից հետո արդեն երեք տարի է անցել: Քարտուղարության կարծիքով, իշխանությունները կարող էին այդ ժամանակն օգտագործած լինել վերոհիշյալ ուղեցույցները հրապարակելու համար՝ նկատի ունենալով, որ նախատեսված օրենսդրական փոփոխությունները կատարվելուց հետո դրանք լրամշակման կարիք կունենան: Ըստ այդմ, դիտարկվող հանձնարարականի ներքո բարձրացված հարցերի լուծման ուղղությամբ արձանագրված առաջընթացը՝ բացառությամբ ուսուցողական միջոցառումների, չի կարելի բավարար համարել:

### 1.3. Հիմնական եզրակացություններ

54. Արձանագրված թերությունները վերացնելու և ներկայացված առաջարկներն իրագործելու նպատակով Հայաստանը Փոխադարձ գնահատման հաշվետվության ընդունմանը հաջորդած ժամանակահատվածում առաջնորդվել է միջոցառումների իրականացման հստակ ծրագրով:
55. Արդյունքում, մշակվել և հաստատման համար ՀՀ ազգային ժողով է ներկայացվել թվով 15 օրենքում, այդ թվում՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում և ՔՕ-ում փոփոխությունների օրինագիծ: Ընդունվելու և օրինական ուժ ստանալու դեպքում, նախատեսվող օրենսդրական փոփոխությունները կլուծեն վերը նկարագրված հանձնարարականների գծով ՓԳՀ-ում արձանագրված գրեթե բոլոր թերությունների վերացման խնդիրը: Թեպետ ներկա փուլում միայն օրենսդրական փոփոխությունների նախագծերի հիման վրա հնարավոր չէ եզրահանգել, որ բացահայտված թերությունները լիարժեքորեն վերացվել են, դրանց վերացմանն ուղղված հստակ գործընթացի առկայությունն ակնհայտ է: Այս եզրահանգումը կարող է վերանայվել՝ կախված օրենսդրական փոփոխությունները օրինական ուժ ստանալու հանգամանքից (հաշվի առնելով նաև այն հնարավոր փոփոխությունները, որոնք կարող են կատարվել օրենքի ընդունման գործընթացում):
56. Առաջընթացի հաշվետվությանը կից ներկայացված վիճակագրությունը արդյունավետության հարցում արտացոլում է որոշակի առաջընթաց, սակայն արդյունավետության հետ կապված մտահոգությունները դեռևս արդիական են՝ ըստ վերը նկարագրվածի: Դրական տեղաշարժ է արձանագրվել Հ.1-ի իրականացման մասով և աստիճանաբար բարելավվում է նախադեպերի վրա հիմնված պրակտիկան, ինչը ողջունելի է:
57. Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի ներդրման առումով առաջընթաց չի արձանագրվել, և երկրի իշխանությունները մտադիր չեն այս թերության վերացման ուղղությամբ քայլեր ձեռնարկել՝ համարելով, որ գործնականում նույն արդյունքներին կարելի է հասնել վարչական պատասխանատվության միջոցների կիրառությամբ: Այս հարցը պետք է լրացուցիչ ուսումնասիրության ենթարկվի ՄԱՆԻՎԱԼ-ի կողմից հաջորդ գնահատման շրջանակներում: Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից հաշվետվականության պարտականության արդյունավետ իրականացումը, այդ թվում՝ համապատասխան ուղեցույցների հրապարակումը, ևս մեկ հարց է, որ Հայաստանի իշխանությունների կողմից հետագա ուշադրություն ու թերևս լրացուցիչ քայլերի ձեռնարկում է պահանջում:
58. Հայաստանի իշխանություններին կոչ է արվում շարունակել իրականացնել և մոնիտորինգի ենթարկել ՓԼ/ԱՖ ազգային ռազմավարության իրագործումը, ինչպես նաև ապահովել օրենսդրական փոփոխությունների փաթեթի շուտափույթ ընդունումը: Այդ փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո իշխանությունները պետք է ապահովեն կանխարգելիչ ընդհանուր իրավական համակարգի (հարակից

ենթաօրենսդրական ակտեր, որոշումներ, հրահանգներ, կարգադրություններ և այլն) համախմբումը, ներդաշնակեցումը և պատշաճ կիրառությունը:

59. Վերը նշված հարցերը պետք է լրացուցիչ ուսումնասիրության ենթարկվեն ՄԱՆԻՎԱԼ-ի կողմից հաջորդ գնահատման շրջանակներում:
60. Առաջընթացի երկրորդ հաշվետվության վերլուծության շրջանակներում տեղի ունեցած քննարկումների արդյունքում ՄԱՆԻՎԱԼ-ի լիազումար նիստը բավարար համարեց ներկայացված տեղեկատվությունն ու արձանագրված առաջընթացը և, այսպիսով, հաստատեց առաջընթացի սույն հաշվետվությունն ու հիմնարար հանձնարարականների գծով արձանագրված առաջընթացի վերլուծությունը: Գործընթացների կանոնակարգի 41-րդ հոդվածի համաձայն՝ Առաջընթացի հաշվետվությունը ենթակա է թարմացման գնահատման այցին հաջորդող յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ:

### **ՄԱՆԻՎԱԼ-ի քարտուղարություն**



## 2. ԱՌԱՋՆԹԱՅԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

### 2.1. Ներկա իրավիճակի ընդհանուր նկարագիրը և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի նախորդ գնահատումից հետո արձանագրված զարգացումները

#### **2.1.1. Առաջընթացի առաջին հաշվետվության ներկայացման դրությամբ (28 սեպտեմբերի, 2010թ.) առկա իրավիճակը**

##### **1. Առաջարկների իրագործման միջոցառումների ծրագիր**

2009թ. սեպտեմբերի 22-ին ՓԳՀ-ի ընդունումից հետո Հայաստանը ձեռնամուխ եղավ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի բարելավմանն ուղղված առաջարկների իրագործմանը:

ՓԳՀ-ի անգլերեն տարբերակը թարգմանվել է հայերեն, ապա՝ հայերեն տարբերակի հետ մեկտեղ հրապարակվել ՖԴԿ-ի ինտերնետային կայքում ([www.FP.am/FinancialMonitoringCenter](http://www.FP.am/FinancialMonitoringCenter)): Պատշաճ տեղեկացման արդյունքում ՓԳՀ-ն հասանելի դարձավ հանրային և մասնավոր հատվածի ներկայացուցիչների համար: Ստանձնելով ՓԼ/ԱՖ դեմ պայքարի հարցերով Միջգերատեսչական հանձնաժողովի քարտուղարության դերը՝ ՖԴԿ-ն առանձնացրեց ՓԳՀ-ում արձանագրված բոլոր առաջարկները՝ դասակարգելով դրանք երկու հիմնական խմբերի՝ ա) առաջարկներ, որոնք պահանջում են օրենսդրական/ կարգավորման փոփոխություններ և լրացումներ, բ) առաջարկներ, որոնք պահանջում են գործնական փորձի բարելավում/ արդյունավետության բարձրացում: Նշված դասակարգման հիման վրա կազմվեցին միջոցառումների համապատասխան ծրագրեր՝ ներառելով արձանագրված առաջարկները, յուրաքանչյուրի գծով պահանջվող քայլերը, իրականացման նախատեսվող ժամկետները, ինչպես նաև յուրաքանչյուր քայլի իրականացման և համակարգման գծով պատասխանատու գերատեսչությունները: Միջոցառումների ծրագրերը քննարկվեցին Միջգերատեսչական հանձնաժողովի ներքո գործող աշխատանքային խմբում և համաձայնեցմանը հաջորդիվ՝ հաստատվեցին Միջգերատեսչական հանձնաժողովի՝ 2009թ. հոկտեմբերի 16-ի նիստում:

Միջոցառումների ծրագրերի ներքո իրականացված աշխատանքները ընդհանուր առմամբ ուղղված էին ՓԼ/ԱՖ դեմ պայքարի իրավական համակարգում փոփոխությունների և լրացումների իրականացմանը, արդյունավետության բարձրացմանը, ազգային և միջազգային համագործակցության բարելավմանը, ինչպես նաև կարողությունների զարգացմանը: Ստորև հակիրճ նկարագրվում են իրականացված հիմնական աշխատանքները:

##### ***ա. Օրենսդրական/ կարգավորման բարեփոխումներ***

##### ***ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության փոփոխությունների փաթեթ***

Ինչպես արդեն իսկ նշվել է, Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից ընդունված և հաստատված միջոցառումների ծրագրերից մեկը ներառում է օրենսդրական/ կարգավորման բարեփոխումների մանրամասն նկարագրություն: Միջոցառումների

ծրագրերը հստակորեն տարանջատում են օրենսդրական և ենթաօրենսդրական մակարդակներում նախատեսվող փոփոխությունները:

Օրենսդրական փոփոխություններ պահանջող առաջարկները ներկայացվեցին Միջգերատեսչական հանձնաժողովի ներքո գործող և համապատասխան գերատեսչությունների ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խմբին, որի կողմից կարճ ժամանակահատվածում առաջարկվեցին օրենսդրական համապատասխան փոփոխություններ: Այս հիմքով, ՖԴԿ-ն կազմեց թվով 17 օրենքում փոփոխությունների իրականացման փաթեթ, որը ներառում է.

- «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք,
- «ՀՀ քրեական օրենսգիրք»,
- «ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք»,
- «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենք,
- «ՀՀ մաքսային օրենսգիրք»,
- «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք,
- «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենք,
- «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք,
- «Նոտարիատի մասին» ՀՀ օրենք,
- «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենք,
- «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենք,
- «Շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենք,
- «Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենք,
- «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենք,
- «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք,
- «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք,
- «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենք:

Հարկ է նշել, որ հաշվի առնելով «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում նախատեսվող փոփոխությունների զգալի ծավալն ու խորը բնույթը, նպատակահարմար համարվել առաջարկել բոլորովին նոր օրենքի նախագիծ, որն ամբողջությամբ կփոխարինի գործող օրենքը:

Օրենսդրական նախագծերի փաթեթը ներկայացվել է Միջգերատեսչական հանձնաժողովի՝ 2010թ. մարտի 26-ի նիստի քննարկմանը: Հանձնաժողովը համաձայնեց օրենսդրական փաթեթի պարունակությանը և որոշեց պաշտոնապես շրջանառել այն համապատասխան գերատեսչությունների և ինքնակարգավորվող կազմակերպությունների (այսուհետ՝ ԻԿԿ) շրջանում: ՖԴԿ-ն կազմակերպեց օրենսդրական փաթեթի շրջանառությունը, որի արդյունքում ստացվեցին որոշակի առաջարկություններ և դիտողություններ: Զուգահեռաբար, համապարփակ և բազմակողմ տեխնիկական օժանդակության շրջանակներում, Արժույթի միջազգային հիմնադրամը (այսուհետ՝ ԱՄՀ)

ձեռնամուխ եղավ օրենսդրական փոփոխությունների դիտանցմանը և դրանց վերաբերյալ դիտողությունների ներկայացմանը: Արդյունքում, ամփոփելով ստացված դիտողություններն ու կարծիքները, ՖԴԿ-ն բարեփոխեց օրենսդրական փոփոխությունները: Հաստատված իրավական գործընթացի համաձայն՝ օրենսդրական փոփոխությունների փաթեթը ներկայացվեց ՀՀ արդարադատության նախարարության (այսուհետ՝ ՀՀ ԱՆ) իրավական փորձաքննությանը: Փորձաքննության դրական եզրակացության հիման վրա, 2010թ. օգոստոսի վերջին փաթեթը ներկայացվեց նաև ՀՀ կառավարությանը՝ արագացված կարգով ընթացք տալու միջնորդությամբ: Ակնկալվում է, որ Կառավարությունն իր հաջորդ նիստում կհաստատի օրենսդրական փոփոխությունների փաթեթը և կհասցեագրի այն ՀՀ ազգային ժողովին՝ արագացված կարգով քննարկման և ընդունման գործընթացների իրականացման միջնորդությամբ:

*ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ազգային ռազմավարություն*

Ներպետական մակարդակով շահագրգիռ կողմերի աջակցության շնորհիվ կազմվեց և Միջգերատեսչական հանձնաժողովի՝ 2010թ. մարտի 26-ի նիստում հաստատվեց 2010-2013թթ. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ազգային ռազմավարությունը: Ազգային ռազմավարությամբ սահմանվեցին ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի թիրախային տեսլականն ու հիմնասյունները, ռազմավարական խնդիրները, ակնկալվող արդյունքները, պատասխանատու գերատեսչություններն ու իրականացման նախատեսվող ժամկետները:

*Ուղեցույցներ ՆՈՖԳՏՄ-ների համար*

ՓԳՀ-ով ներկայացված առաջարկին համահունչ՝ ՖԴԿ-ն մշակեց հետևյալ ՌՎՀՄՈՒ-ները, որոնք հիմնված են ՆՈՖԳՏՄ-ների մոտ ռիսկերի վրա հիմնված մոտեցման կիրառման վերաբերյալ ՖԱԹՖ-ի տիպային ուղեցույցների վրա:

- «Անհատ ձեռնարկատեր հաշվապահների և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր աուդիտորների և աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց կողմից ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ռիսկերի գնահատմանն ու կանխարգելմանն ուղղված նվազագույն պահանջների վերաբերյալ ուղեցույց» (այսուհետ՝ Հաշվապահական և աուդիտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ),
- «Շահումով խաղ և վիճակախաղ կազմակերպող անձանց և խաղատների կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ռիսկերի գնահատմանն ու կանխարգելմանն ուղղված նվազագույն պահանջների վերաբերյալ ուղեցույց» (այսուհետ՝ Խաղատնային գործունեության ոլորտի ՌՎՀՄՈՒ),
- «Փաստաբանների, իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձանց կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ռիսկերի գնահատմանը և կանխարգելմանն ուղղված նվազագույն պահանջների վերաբերյալ ուղեցույց» (այսուհետ՝ Իրավաբանական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ),

- «Ռիելտորական գործունեություն իրականացնող անձանց կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ռիսկերի գնահատմանը և կանխարգելմանն ուղղված նվազագույն պահանջների վերաբերյալ ուղեցույց» (այսուհետ՝ Ռիելտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՌԻ):

ՌՎՀՄՌԻ-ների նախագծերը ներկայացվել են տարբեր գերատեսչությունների (Ֆինանսների նախարարություն (այսուհետ՝ ՀՀ ՖՆ), ՀՀ ԱՆ, Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և ԻԿԿ-ների կարծիքին (Փաստաբանների պալատ, Հաշվապահների և աուդիտորների ասոցիացիա, Խաղատնային բիզնեսի ասոցիացիա): Ստացված առաջարկությունների հիմնական մասն ընդունելուց հետո ուղեցույցների նախագծերը հաստատվեցին ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի՝ 2010թ. օգոստոսի 6-ի որոշմամբ և հետագայում՝ հրապարակվեցին ՖԴԿ-ի ինտերնետային կայքում: Ուղեցույցներն անմիջական ճանապարհով, ինչպես նաև վերահսկող մարմինների միջոցով տրամադրվեցին ՆՈՖԳՏՄ-ներին:

***բ. Արդյունավետության բարձրացման միջոցառումներ***

***ՓԼ/ԱՖ ռիսկերի ռազմավարական գնահատում***

ՓԳՀ-ով ներկայացված առաջարկներին համահունչ՝ ՀՀ իշխանությունները նախաձեռնեցին իրականացնել երկրում առկա ՓԼ/ԱՖ ռիսկերի ռազմավարական գնահատում, որի նպատակն է.

- Բացահայտել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի արդյունավետությունը խաթարող և ՓԼ/ԱՖ տեսանկյունից խոցելի համարվող ոլորտները, ռիսկերն ու սպառնալիքները,
- Ուղղորդել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջները դեպի ՓԼ/ԱՖ տեսանկյունից առավել խոցելի համարվող ոլորտները:

ՌԴԳ-ի իրականացման նպատակով ՖԴԿ-ն մշակեց հատուկ մեթոդաբանություն, ինչը, հիմնված լինելով ինչպես ՖԱԹՖ-ի հղումային փաստաթղթերի, այնպես էլ այլ երկրների կողմից իրականացված համանման վերլուծությունների վրա, սահմանում է ռիսկերի վերլուծության ոլորտները, յուրաքանչյուր ոլորտի գծով վերլուծության ենթակա անհրաժեշտ տեղեկատվությունը, վստահելի տեղեկատվության ձեռք բերման աղբյուրները և վերլուծության իրականացման գործիքները: Մեթոդաբանությունը քննարկվեց և հաստատվեց Միջգերատեսչական հանձնաժողովի՝ 2010թ. մարտի 26-ի նիստում: Այն ներառում է ՓԼ/ԱՖ ռիսկերի վերլուծության հետևյալ վեց ոլորտները.

- ՓԼ հիմքում ընկած ամենատարածված նախորդող հանցագործություններ,
- Իրավական ռիսկեր (ՓԼ/ԱՖ դեմ պայքարի իրավական համակարգի անկատարություններ),
- Ինստիտուցիոնալ ռիսկ (ՓԼ/ԱՖ դեմ պայքարի հարցերով լիազորված գերատեսչությունների մասնագիտական և գործառնական սահմանափակումներ),
- Ֆինանսական համակարգում առկա ռիսկեր,
- Նախատեսված ՆՈՖԳՏՄ-ների ոլորտում առկա ռիսկեր,

- Տնտեսական ենթակառուցվածքների, աշխարհագրական տեղաբաշխվածության և ժողովրդագրական միջավայրի հետ կապված ռիսկեր:

Իրավապահ մարմիններից, ՖՀ-ներից և ՆՈՖԳՏՄ-ներից հավաքագրված տեղեկատվությունը վերլուծվել և արտացոլվել է «ՀՀ-ում ՓԼ/ԱՖ ռիսկի ռազմավարական վերլուծության իրականացման ամփոփում» փաստաթղթում, ինչը հրապարակվել է ՖԴԿ-ի ինտերնետային կայքում: Ընդհանուր առմամբ, վերլուծության արդյունքները, ինչպես ոլորտային կառուցվածքով, այնպես էլ բաշխվածությամբ, համապատասխանում էին ՓԼ/ԱՖ ռիսկերի վերաբերյալ իշխանությունների պատկերացումներին և գիտելիքներին: Վերլուծությանը պետք է հաջորդեն բացահայտված ռիսկերի զսպմանն ու կանխարգելմանն ուղղված կոնկրետ քայլերը, որոնք պետք է մշակվեն և իրականացվեն Միջգերատեսչական հանձնաժողովի հովանու ներքո:

Առաջընթաց քննությունների, քրեական հետապնդման և դատավարության ոլորտում

ՓԳՀ-ի ընդունումից հետո արձանագրվել է էական առաջընթաց ֆինանսական հետախուզության և քրեական հետապնդման ոլորտներում: Առաջընթացը հաջողվել է ի շնորհիվ բարձր ատյանների կողմից ֆինանսական հետախուզության դերի կարևորման: Մասնավորապես, Դատախազության կոլեգիայի՝ 2009թ. հոկտեմբերի 21-ի նիստում կայացված որոշման և հաստատված համապատասխան հանձնարարականի համաձայն՝ քրեական հետախուզություն իրականացնող բոլոր մարմինները հրահանգավորվել են բարձրացնել ՓԼ քննությունների արդյունավետությունը և կանխարգելիչ միջոցների կիրառությունը, ինչպես նաև հետախուզել նախորդող հանցագործությունների արդյունքում ստացված միջոցների հետագա հույսը և անհրաժեշտության դեպքում՝ հարուցել ՓԼ քրեական գործեր:

Բարձր ատյանների կողմից խնդրին ցուցաբերած լուրջ մոտեցումն իր ազդեցությունն ունեցավ քրեական հետապնդման ոլորտի վիճակագրության կտրուկ աճի վրա: Մասնավորապես, 2009թ. հոկտեմբերից մինչև 2010թ. սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում արդյունավետությունն արտահայտվեց հետևյալ թվերով.

- Հարուցվել է թվով 11 քրեական գործ,
- ՓԼ քննության նպատակով (որպես կանխարգելիչ միջոց) կալանքի տակ է առնվել/ առգրավվել է 195.932 եվրոյին համարժեք գույք,
- Թվով 3 քրեական գործ փոխանցվել է դատարան,
- ՓԼ գործերով կայացվել է թվով 2 մեղադրական և 1 արդարացնող դատավճիռ,
- ՓԼ դատավճիռների հիման վրա բռնագրավվել է 1.138.085 եվրոյին համարժեք գույք:

**2. Համագործակցություն՝ ներպետական մակարդակով**

**ա. Բազմակողմ համագործակցություն**

Միջգերատեսչական հանձնաժողովի շրջանակներում խրախուսվել է բազմակողմ համագործակցությունը: ՓԳՀ-ի հաստատումից հետո տեղի են ունեցել Հանձնաժողովի

երկու նիստեր՝ 2009թ. հոկտեմբերի 16-ին և 2010թ. մարտի 26-ին: Այս նիստերի ժամանակ Հանձնաժողովի քննարկման հիմնական առարկա են հանդիսացել միջոցառումների ծրագրերը, ՓԳՀ-ով ներկայացված առաջարկների իրագործման արդյունքները, ՌԴԳ-ի իրականացման մեթոդաբանությունը, ազգային ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի գործունեության տարեկան արդյունքները և Հանձնաժողովի կողմից կայացված նախկին որոշումների կատարողականը:

**բ. Երկկողմ համագործակցության վիճակագրություն**

Բազմակողմ համագործակցությունից բացի, հայաստանյան իշխանությունները համագործակցել են նաև երկկողմ ձևաչափով: Նման համագործակցության շրջանակներում միջնորդի դեր է ստանձնել հիմնականում ՖԴԿ-ն՝ որպես ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի համակարգող օղակ: Իրավապահ մարմինների հետ համագործակցությունն իրականացվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի և համապատասխան գերատեսչությունների (Դատախազություն, Ոստիկանություն, Ազգային անվտանգության ծառայություն (այսուհետ՝ ԱԱԾ) և Պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ ՊԵԿ)) հետ կնքված փոխընթացման հուշագրերի (այսուհետ՝ ՓՀ) շրջանակներում:

2009թ. հոկտեմբերից մինչև 2010թ. սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում ԻՊՄ-ների հետ փոխանակված տեղեկատվությունն ունեցել է հետևյալ վիճակագրական պատկերը.

Հարցման ուղղությունը	Դատախազություն	Ոստիկանություն	ԱԱԾ	ՊԵԿ
ՖԴԿ-ի կողմից ստացված հարցումներ	22	7	15	7
ՖԴԿ-ի կողմից ուղարկված հարցումներ	0	5	1	6

Ստացված և ուղարկված բոլոր հարցումները ժամանակին պատասխանվել են:

Մինևույն ժամանակահատվածում ՖԴԿ-ն թվով 9 տեղեկացում (ֆինանսական տեղեկատվության բացահայտում) է ուղարկել ԱԱԾ-ին (ընդհանուրից՝ թվով 5-ի պատճենը ուղարկվել է նաև Դատախազությանը) և թվով 10 տեղեկացում՝ ՊԵԿ-ին (ընդհանուրից՝ թվով 8-ի պատճենը ուղարկվել է նաև Դատախազությանը): Նշված տեղեկացումների հիման վրա՝ հարուցվել են թվով 3 ՓԼ քրեական գործեր: Թվով 4 մեղադրական դատավճիռ է կայացվել ՖԴԿ-ի սեփական նախաձեռնությամբ և ԻՊՄ-ներից ստացված հարցումների հիման վրա տրամադրված տեղեկությունների օգտագործմամբ իրականացված քննությունների արդյունքում:

ՖՀ-ների և ՆՈՖԳՏՄ-ների շրջանում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջների համապատասխանության ապահովմանն օժանդակություն ցուցաբերելու նպատակով ՖԴԿ-

ն համագործակցել է նաև վերահսկող մարմինների հետ: Մասնավորապես, 2009թ. հոկտեմբերից մինչև 2010թ. սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում հնարավոր համապատասխանությունների վերաբերյալ վերահսկող մարմինների հետ փոխանակած տեղեկատվությունը ունեցել է հետևյալ վիճակագրական պատկերը.

Հարցման ուղղությունը	Ֆինանսական վերահսկողության վարչություն (այսուհետ՝ ՖՎՎ)	ՀՀ ԱՆ (նոտարների գծով)	ՀՀ ՖՆ (խաղատների, շահումով խաղ կազմակերպող անձանց և աուդիտորների գծով)	Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե (ռիելտորական գործունեություն իրականացնող անձանց գծով)
ՖԴԿ-ն տրամադրել է վերահսկողական նպատակներին անհրաժեշտ տեղեկատվություն	7	21	4	2

Համապատասխան գերատեսչությունների կողմից ձեռնարկված վերահսկողական միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հարցաշարում:

### 3. Համագործակցություն՝ միջազգային մակարդակով

Տարբեր աշխատանքների ու ծրագրերի գծով նախաձեռնություն/ մասնակցություն ցուցաբերելու միջոցով Հայաստանը հաշվետու ժամանակահատվածում շարունակել է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջազգային ասպարեզում իր ակտիվ ներգրավվածությունը: Նման աշխատանքն արդյունավետորեն արտահայտվել է միջազգային մի շարք կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում:

#### **Եվրոպայի խորհուրդ**

Հայաստանի պատվիրակությունը մասնակցել է ՄԱՆԻՎԱԼ-ի 31-րդ և 32-րդ լիագումար նիստերին: ՀՀ-ի ներկայացուցիչները ֆինանսական ոլորտի գնահատողի կարգավիճակով մասնակցել են Բոսնիայի և Հերցեգովինայի, ինչպես նաև Սերբիայի՝ երրորդ փուլի փոխադարձ գնահատման աշխատանքներին: ՀՀ-ի ներկայացուցիչներն իրենց մասնակցությունն են ունեցել նաև չորրորդ փուլի փոխադարձ գնահատման գործընթացներին. Կիպրոսի գնահատմանը մասնակցել է իրավական ոլորտի գնահատող, իսկ Սան Մարինոյի գնահատմանը՝ ֆինանսական ոլորտի գնահատող:

ՄԱՆԻՎԱԼ-ի 31-րդ և Կողմերի խորհրդաժողովի (Վարչավայի կոնվենցիա) 2-րդ լիագումար նիստերի ժամանակ ՀՀ-ի ներկայացուցիչները ընտրվել են որպես նշված կառույցների բյուրոյի անդամ:

#### **Էզմոնտ խումբ**

Որպես Էզմոնտ խմբի անդամ՝ ՖԴԿ-ն շարունակել է Էզմոնտի անվտանգ տեղեկատվական համակարգով տեղեկատվության փոխանակումը արտասահմանյան

Ֆինանսական հետախուզության մարմինների (այսուհետ՝ ՖՀՄ) հետ, ինչն ունեցել է հետևյալ վիճակագրական պատկերը (2009թ. հոկտեմբերից մինչև 2010թ. սեպտեմբերն ընկած ժամանակահատված)։

Հարցման ուղղությունը	ՖՀՄ ՌԴ	ՖՀՄ Վենեսուելա	ՖՀՄ Բելգիա	ՖՀՄ Ֆրանսիա	ՖՀՄ ԱՄՆ	ՖՀՄ Գերմանիա	ՖՀՄ Հունաստան
ՖԴԿ-ի կողմից ստացված հարցումներ	8	3	2	1	1	1	1
	ՖՀՄ Էստոնիա	ՖՀՄ Բահրեյն	ՖՀՄ Ալբանիա	ՖՀՄ Բոսնիա և Հերցեգովինա	ՖՀՄ Նիդերլանդներ	Ընդամենը	
	1	1	1	1	1	22	
Հարցման ուղղությունը	ՖՀՄ ՌԴ	ՖՀՄ Լատվիա	ՖՀՄ Վրաստան	ՖՀՄ Մեծ Բրիտանիա	ՖՀՄ ԱՄՆ	ՖՀՄ Կանադա	ՖՀՄ ԲՎԿ
ՖԴԿ-ի կողմից ուղարկված հարցումներ	6	3	3	1	1	1	1
	ՖՀՄ Լիտվա	ՖՀՄ Հունգարիա	ՖՀՄ Չեխիա	ՖՀՄ Ղրղզստան	ՖՀՄ Շվեյցարիա	Ընդամենը	
	1	1	1	1	1	21	

Ստացված բոլոր հարցումները ժամանակին պատասխանվել են։

ՖԴԿ-ի պատվիրակությունները մասնակցել են նաև Էգմոնտ խմբի լիազումար նիստերին և աշխատանքային խմբերի հանդիպումներին։ Այդ նիստերի ընթացքում.

- ՖԴԿ-ն ղեկավարել է Էգմոնտ խմբի անդամ ՖՀՄ-ների միջև տեղեկատվության փոխանակման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագիրը,
- ՖԴԿ-ն, հանդիսանալով Իրանի և Տաջիկստանի ՖՀՄ-ների՝ Էգմոնտ խմբին անդամակցելու հովանավոր երկիր, ներկայացրել է այս ուղղությամբ ձեռք բերված առաջընթացը,
- ՖԴԿ-ի ղեկավարի տեղակալն ընտրվել է Էգմոնտ խմբի Գործառնական հարցերով աշխատանքային խմբի փոխնախագահ։

Կազմակերպչական աշխատանքների համակարգման հարցերով պատասխանատու ժամանակավոր հանձնաժողովի միջոցով ՖԴԿ-ն շարունակել է Էգմոնտ խմբի՝ 2011թ. լիազումար նիստը ՀՀ-ում անցկացնելու ուղղությամբ իրականացվող նախապատրաստական աշխատանքները։

Էգմոնտ խմբի հովանու ներքո՝ ՖԴԿ-ն ՓՀ-ներ է կնքել Ռումինիայի, Սան Մարինոյի, Լեհաստանի, Հարավաֆրիկյան Հանրապետության, Արաբական Միացյալ Էմիրությունների, Բերմուդայի, Ավստրալիայի և Կանադայի հետ։ Բացի այդ, ՓՀ-ների կնքման նախնական համաձայնություններ են ձեռք բերվել Չինաստանի, Թայլանդի և Սաուդյան Արաբիայի հետ։

**Եվրասիական խումբ (այսուհետ՝ ԵԱԽ)**

Որպես ԵԱԽ-ի դիտորդ՝ ՀՀ-ի պատվիրակությունները մասնակցել են միջազգային այս



կառույցի 11-րդ և 12-րդ լիազումար նիստերին և աշխատանքային խմբերի հանդիպումներին: Միջազգային այս կառույցի 12-րդ լիազումար նիստի ժամանակ ՀՀ-ի պատվիրակությունը ներկայացրել է գործերի կառավարման ավտոմատացված համակարգերի և տվյալների պատկերման տեխնոլոգիաների ներդրման իր փորձը և հայտնել իր պատրաստակամությունը՝ օժանդակել Եվրասիական խմբում ընդգրկված այլ ՖՀԱ-ներին համանման տեխնոլոգիաների ներդրման գործում:

#### **ԱՄՀ-ի տեխնիկական օժանդակության ծրագիր**

ԱՄՀ-ը մեկնարկել է ՀՀ-ի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի զարգացմանն ուղղված տեխնիկական օժանդակության համապարփակ ծրագրի իրագործումը: Տեխնիկական օժանդակության ծրագրի ներքո թվով 3 առաքելություններ են այցելել ՀՀ, համապատասխանաբար՝ 2010թ. ապրիլին, հուլիսին և սեպտեմբերին: Այցերի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Ուսումնասիրվել է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ազգային ռազմավարությունը և ներկայացվել են համապատասխան դիտողություններ: Ձեռք է բերվել համաձայնություն ռազմավարության հետագա վերանայումների դեպքում ԱՄՀ-ի դիտողությունները հաշվի առնելու ուղղությամբ,
- Ապրիլին կատարած այցի ժամանակ ՆՈՖԳՏՄ-ների համար կազմակերպվել է քննարկում, որի ընթացքում ԱՄՀ-ի մասնագետները ներկայացրել են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգում ՆՈՖԳՏՄ-ների ներգրավման լավագույն փորձը և օրենսդրական պահանջներին համապատասխանության մեխանիզմները: ԱՄՀ-ի մասնագետները մասնակցել են նաև ՆՈՖԳՏՄ-ների համար ՖԴԿ-ի կողմից կազմակերպված դասընթացին,
- ԱՄՀ-ը ուսումնասիրել է նաև օրենսդրական փոփոխությունների և լրացումների փաթեթը և ներկայացրել համապատասխան դիտողություններ և առաջարկություններ, որոնք համակողմանիորեն քննարկվել են հայաստանյան իշխանությունների հետ և համապատասխանաբար ներառվել օրենսդրական նախագծերի փաթեթում,
- Խաղատնային և անշարժ գույքի ոլորտների վերահսկող մարմինների համար մշակվել են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գծով ստուգումների անցկացման ուղեցույցներ, որոնք նախատեսվում է հաստատել 2010թ. տարեվերջին:

#### **ԱՄՆ-ի տեխնիկական օժանդակության ծրագիր**

Հայաստանի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի զարգացմանն ուղղված ԱՄՆ-ի տեխնիկական օժանդակության ծրագրի ներքո իրականացվել/ իրականացվում են հետևյալ ծրագրերը.

- Անգլերենից հայերեն է թարգմանվել ՖԱԹՖ-ի մեթոդաբանությունը, ապա՝ հրապարակվել ՖԴԿ-ի ինտերնետային կայքում և տրամադրվել շահագրգիռ բոլոր անձանց,
- Մշակվել, փորձարկվել և շահագործման է հանձնվել ՖԴԿ-ի գործերի կառավարման

- ավտոմատացված համակարգը և տվյալների պատկերման ծրագրային համակարգը,
- Մշակվել է միասնական տեղեկատվական տիրույթի նախագծման և գործարկման վերաբերյալ միջոցառումների ծրագիր: Ծրագրի նպատակն է միասնական էլեկտրոնային միջավայրում միավորել ՓԼ/ԱՖ քննությանը անհրաժեշտ վարչական, առևտրային և քրեական բնույթի տեղեկատվական շտեմարանները, որոնք հասանելի կդառնան ՖԴԿ-ի ընթացիկ աշխատանքների համար,
- ԱՄՆ-ի ֆինանսավորմամբ՝ իրականացվել են ուսուցողական միջոցառումներ ինչպես ՀՀ-ում, այնպես էլ արտասահմանում: Մասնավորապես, ԱՄՆ-ի ֆինանսավորմամբ դասընթացներ են կազմակերպվել մի շարք ՆՈՖԳՏՄ-ների համար, ինչպես նաև 2010թ. հուլիսին հայաստանյան մասնագետների համար կազմակերպվել է փորձի փոխանակման այց Բուլղարիա ՖՀՄ,
- ԱՄՆ-ի մասնագետները ցուցաբերել են օժանդակություն խաղատնային ոլորտի օրենսդրությունը ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ստանդարտներին համապատասխանեցնելու և այդ պահանջների համապատասխանության հարցում գործնական կարողությունների զարգացման ուղղությամբ:

***Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (այսուհետ՝ ՎՋԵԲ) տեխնիկական օժանդակության ծրագիր***

ՎՋԵԲ-ի օժանդակությամբ՝ մշակվել և քննության թեստերում ընդգրկվել են հաշվետու անձանց (ՖՀ-ներ և ՆՈՖԳՏՄ-ներ) ներքին դիտարկումների պատասխանատուների որակավորման քննության մոդուլներ:

**4. Ուսուցողական միջոցառումներ և կարողությունների զարգացում**

2010թ. մարտին ՖԴԿ-ի ներկայացուցիչները մասնակցել են ԱՆ-ի կողմից կազմակերպված՝ Նոտարիատի խորհրդատվական ծրագրի շրջանակներում, որի ընթացքում ՖԴԿ-ի, ԱՆ-ի և նոտարների մասնակցությամբ տեղի են ունեցել մանրամասն ներկայացումներ և քննարկումներ՝ ուղղված նոտարական գործունեության ընթացքում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջների կիրառման արդյունավետության բարձրացմանը:

ՀՀ-ում գործող բոլոր բանկերի մասնակցությամբ 2009թ. սեպտեմբերից մինչև հոկտեմբերն ընկած ժամանակահատվածում կազմակերպվել են առանձին ուսուցողական միջոցառումներ և խորհրդատվական քննարկումներ՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր բանկում առկա ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գծով մասնագիտական պատրաստվածությունն ու խորհրդատվության կարիքները:

Հաշվետու անձանց մեծամասնության համար 2010թ. ապրիլից մինչև օգոստոսն ընկած ժամանակահատվածում ՖԴԿ-ի կողմից կազմակերպվել են մի շարք քննարկումներ՝ ուղղված ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջների իրականացման արդյունավետության բարձրացմանը: Նման քննարկումներ են կազմակերպվել ներքոնշյալ հաշվետու անձանց համար (մասնակիցների ցանկն ընդգրկել է ներքին դիտարկումների պատասխանատուներին և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գործառույթի հետ առնչվող այլ

աշխատակիցներին).

- Բանկեր և համապատասխան վերահսկող մարմնի ներկայացուցիչներ (ՖՎՎ),
- Վարկային կազմակերպություններ և համապատասխան վերահսկող մարմնի ներկայացուցիչներ (ՖՎՎ),
- Ապահովագրական և ներդրումային ընկերություններ և համապատասխան վերահսկող մարմնի ներկայացուցիչներ (ՖՎՎ),
- Փաստաբաններ, իրավական ծառայություններ մատուցող ընկերություններ և Փաստաբանների պալատ,
- Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն,
- Ռիելտորական գործունեություն իրականացնող անձինք և Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե,
- Խաղատներ, շահումով խաղ կազմակերպող անձինք և համապատասխան վերահսկող մարմիններ (ՀՀ ՖՆ),
- ՊԵԿ:

Նշված հանդիպումների հակիրճ նկարագրությունը հրապարակված է ՖԴԿ-ի ինտերնետային կայքում:

Իրավապահ մարմինների համար 2010թ. սեպտեմբերին Դատախազության դպրոցում նախատեսվում է Համաշխարհային բանկի և ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի օժանդակությամբ կազմակերպվել ևս դասընթաց, որին մասնակցելու են ՖԴԿ-ի ներկայացուցիչները, հատուկ հարցերով քննիչները, տարբեր ԻՊՄ-ների՝ ֆինանսական հետախուզությամբ զբաղվող քննիչներ, ինչպես նաև դատախազներ և դատավորներ: Դասընթացի թեման ներառելու է արդյունավետ ֆինանսական հետախուզություն իրականացնելու մեթոդները (ապացույցների հավաքագրում, կանխարգելիչ միջոցների ձեռնարկում և այլն), միջազգային փորձի վերլուծությունը, քրեական հետապնդումը և ՓԼ/ԱՖ գործերի դատական հանգուցալուծումը:

## **2.1.2. Առաջընթացի առաջին հաշվետվության ներկայացումից հետո արձանագրված զարգացումները**

2010 թվականին Առաջընթացի առաջին հաշվետվության հաստատումից հետո Հայաստանը շարունակել է ՓԳՀ-ով ներկայացված առաջարկների հետագա իրագործումը:

Օրենսդրական և ինստիտուցիոնալ փոփոխություններին զուգընթաց որոշակի քայլեր են ձեռնարկվել միջազգային ստանդարտներին համապատասխանության պրակտիկան բարելավելու ուղղությամբ:

### **1. Օրենսդրական/ կարգավորման բարեփոխումներ**

#### **ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության փոփոխությունների փաթեթ**

Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունման ժամանակ ՀՀ կառավարություն ներկայացվել էր թվով 18 օրենքում (այդ թվում՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ

օրենքում) փոփոխությունների փաթեթ՝ ավարտուն տեսքի բերելու և հաստատման համար ՀՀ ազգային ժողով ներկայացնելու նպատակով:

Այդ ժամանակից ի վեր, մի կողմից օրենսդրական ակտերի մշակման պրակտիկայի, մյուս կողմից՝ երկրում օրենքների ընդունման ֆորմալ ընթացակարգերում փոփոխությունների պատճառով նշված փաթեթը ենթարկվել է ինչպես կառուցվածքային, այնպես էլ բովանդակային հետագա փոփոխությունների:

Նախ, ՓԼ/ԱՖ դեմ պայքարին առնչվող օրենսդրական դաշտում (իրավաբանական անձանց գրանցման և ֆիզիկական անձանց եկամուտների հայտարարագրման ոլորտում) տեղի ունեցած որոշ փոփոխությունների արդյունքում վերը նշված օրենքների նախագծերի փաթեթի առաջին տարբերակում ներառված երկու օրենքի նախագիծ կորցրել են արդիականությունը, իսկ ևս մեկ օրենքի նախագծով առաջարկվող փոփոխությունները ներառվել են այդ ժամանակ ընթացքում գտնվող մեկ այլ՝ ավելի ծավալուն օրենսդրական փոփոխության շրջանակներում: Արդյունքում, ՓԼ/ԱՖ դեմ պայքարին առնչվող փաթեթում ներառված օրենքների նախագծերի քանակը նվազելով կազմել է 15 նախագիծ:

Երկրորդ, ուժի մեջ է մտել օրենսդրական նոր պահանջ, որի համաձայն ցանկացած օրենսդրական ակտ նախքան ՀՀ ազգային ժողովի կողմից հաստատվելը պետք է ուսումնասիրվի և գնահատվի տնտեսական (այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության, մրցակցության և բյուջետային ծախսերի), սոցիալական պաշտպանության, հակակոռուպցիոն, բնապահպանական և այլ ազդեցությունների տեսանկյունից: Ըստ այդմ, օրենսդրական փոփոխությունների փաթեթը կրկին ուղարկվել է պատկան մարմիններին՝ համապատասխանության ուսումնասիրության նպատակով: Բոլոր շահագրգիռ մարմինների և կառույցների (այդ թվում՝ իրավապահ մարմինների, վերահսկող մարմինների, ինքնակարգավորվող կազմակերպությունների և մասնավոր հատվածի) մասնակցությամբ ուսումնասիրության այս նոր փուլի արդյունքում ստացվել է նախագծերի որոշակի դրույթների հետագա բարելավմանն ուղղված շուրջ 70 նոր առաջարկություն և դիտողություն (ի լրումն փաթեթի ուսումնասիրության առաջին փուլի արդյունքում ստացված շուրջ 130 առաջարկության և դիտողության): Սրան հաջորդել են բոլոր շահագրգիռ կողմերի հետ ընդգրկուն և մանրամասն քննարկումները, որոնք թույլ են տվել փաթեթում ինտեգրել ներկայացված բոլոր առաջարկություններն ու դիտողությունները՝ ապահովելով դրա լիարժեք համապատասխանությունը գործող կարգերին և պրակտիկային:

Ներկայում փաթեթն անցել է ՀՀ կառավարությունում անհրաժեշտ բոլոր ընթացակարգերը և ներկայացվել ՀՀ ազգային ժողով հաստատման:

Անցած երկու տարում մշակվել և ընդունվել են Հայաստանի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի հետագա բարեփոխմանն ուղղված հետևյալ նոր կամ լրամշակված իրավական ակտերը.

Իրավական ակտ	Ընդունման ամսաթիվ և հերթական համար
Է ՀՀ կենտրոնական բանկի գործառնական վարչության կողմից ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների	27.01.2012թ, թիվ 1/55Ա

Կենտրոնին տեղեկատվության տրամադրման կարգ	(նոր խմբագրությամբ)
ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության և ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի միջև համագործակցության ձեռնարկ	27.01.2012թ., թիվ 1/123-Ա (նոր խմբագրությամբ)
Օֆշորային տարածքների ցանկ	21.02.2012թ., թիվ 39-Ն (նոր խմբագրությամբ)
ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի ներքին ընթացակարգերի ձեռնարկ	26.04.2012թ., թիվ 1/380-Լ (նոր խմբագրությամբ)
Կեղծ և շինծու գործարքների (պայմանագրերի) միջոցով փողերի լվացման տիպաբանություն	18.04.2012թ., թիվ 1-351-Ա
Կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների կասեցման կամ ահաբեկչության հետ կապված միջոցների ստեղծման վերաբերյալ որոշումների ընդունման կարգ	17.04.2012թ., թիվ 36-ԾՕՀ-Ա
ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից կատարվող վերլուծությունների արդյունքների գնահատման ձեռնարկ	17.04.2012թ., թիվ 1-19-ԾՕՀ-Լ

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ազգային ռազմավարություն

Մշակվել և Միջգերատեսչական հանձնաժողովի 2012թ. հոկտեմբերի 25-ի նիստում հավանության է արժանացել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի 2013-2015թթ. ազգային ռազմավարությունը: Ռազմավարությունը մշակելիս հաշվի են առնվել 2010 թվականի հրապարակված՝ «Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկի ռազմավարական վերլուծության» արդյունքները:

Փաստաթղթում արտացոլված են ռազմավարության ընդհանուր դրույթները, տեսլականը, առաքելությունը և արժեքները, սահմանված նպատակները և դրանց հասնելուն անհրաժեշտ քայլերը, ակնկալվող արդյունքները և պատասխանատու մարմինները, ինչպես նաև ռազմավարության վերանայման ու դրա իրականացման նկատմամբ վերահսկողության կանոնները:

Ռազմավարությամբ նախատեսվում են Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից վերահսկողության և մոնիտորինգի որոշակի մեխանիզմներ: Մասնավորապես, ռազմավարությունը ենթակա է վերանայման առնվազն եռամսյակային պարբերականությամբ՝ Միջգերատեսչական հանձնաժողովի քարտուղարության գործառույթը կատարող ՖԴԿ-ի կողմից հանձնաժողովի անդամ գերատեսչությունների և հաստատությունների, ոչ ֆինանսական հաստատությունների ու անձանց ինքնակարգավորվող կազմակերպությունների հետ համաձայնեցմամբ:

Միջգերատեսչական հանձնաժողովի քարտուղարությունը անդամ գերատեսչությունների կողմից հավաքագրված տեղեկատվության ու նյութերի հիման վրա պարբերաբար զեկուցում է հանձնաժողովին ռազմավարության նպատակներին հասնելուն

ուղղված միջոցառումների իրագործման և փաստացի արդյունքների վերաբերյալ: Բացի այդ, ռազմավարության նպատակներին հասնելուն ուղղված միջոցառումները ենթակա են ներառման Միջգերատեսչական հանձնաժողովի անդամ գերատեսչությունների, ոչ ֆինանսական հաստատությունների ու անձանց ինքնակարգավորվող կազմակերպությունների աշխատանքային ծրագրերում:

## **2. Արդյունավետության բարձրացման միջոցառումներ**

### **Առաջընթաց քննության, քրեական հետապնդման և դատավարության ոլորտում**

Առաջընթացի առաջին հաշվետվության հաստատումից հետո հետևողական ջանքեր են գործադրվել ՓԼ գործերի քննության և քրեական հետապնդման ոլորտներում հետագա առաջընթացի ապահովմանն ուղղությամբ: Ավելացել է ՓԼ մեղադրանքով դատարան ուղարկված և մեղադրական դատավճռով ավարտված գործերի քանակը (մանրամասների համար հաշվետվության համապատասխան մասում տես գործերի վերաբերյալ վիճակագրությունը): Սա նույնպես վկայում է ՓԼ գործերի քննության, քրեական հետապնդման և դատավարության ոլորտում առաջընթացի մասին:

Դատավարության ոլորտում առաջընթացը, ի թիվս այլ գործոնների, հետևանք է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ՓԼ մի գործի կապակցությամբ կատարված ուսումնասիրության և եզրահանգման: 2011թ. փետրվարին ՀՀ վճռաբեկ դատարանը ՓԼ մի գործի շրջանակներում մեկնաբանել է ՔՕ-ի 190-րդ հոդվածը՝ քրեական հետապնդման գործընթացներում օրենքի համանման կիրառությունն ապահովելու նպատակով:

Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի վերը նշված որոշման, արարքը կարող է որակվել որպես հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացում միայն ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 5-րդ մասում թվարկված հանցագործություններից որևէ մեկի առկայության դեպքում: Ընդ որում, վերջինս պետք է (ժամանակային առումով) նախորդի հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացմանը, և դրա արդյունքում ձեռք բերված գույքը պետք է հանդիսանա նշված հանցակազմի առարկա: Նախորդող հանցագործության բացակայությունը բացառում է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման հանցակազմի գոյությունը, ուստի նմանատիպ գործերով մեղադրական դատավճիռ կայացնելիս դատարանը նախ պետք է հաստատված համարի նախորդող հանցագործության դեպքը, ինչպես նաև փողերի լվացման առարկա հանդիսացող գույքի՝ նախորդող հանցագործության արդյունքում ձեռք բերված լինելու հանգամանքը: Վճռաբեկ դատարանը ընդգծում է նաև, որ տվյալ դեպքում **պարտադիր չէ նախորդող հանցագործության վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատավճիռ առկայությունը, ինչպես նաև պարտադիր չէ, որ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման մեջ մեղադրվող անձը որևէ առնչություն ունենա նախորդող հանցագործության հետ:** Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման համար անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելիս պետք է ապացուցվի, որ գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով, և որ անձը գիտակցել ու նախատեսել է դրա՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված լինելը: Հարկ է

նշել, որ Առաջընթացի առաջին հաշվետվության ներկայացումից հետո հարուցվել և ներկայում քննության ընթացքում է գտնվում միայն ՓԼ հանցակազմով 4 գործ:

ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի («Գույքի բռնագրավումը») 4-րդ մասի համաձայն՝ «Հանցավոր ճանապարհով ստացված գույքի, այդ թվում՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և սույն օրենսգրքի 190-րդ հոդվածով նախատեսված արարքների կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ձեռք բերված գույքի, ներառյալ՝ այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտների կամ այլ տեսակի օգուտների, այդ արարքների կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների, իսկ հանցավոր ճանապարհով ստացված գույքի չհայտնաբերման դեպքում՝ այդ գույքին համարժեք այլ գույքի բռնագրավումը պարտադիր է: Այդ գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից»:

Հարկ է նշել, որ ՀՀ վճռաբեկ դատարանի վերը ներկայացված որոշումը պարտադիր բնույթ է կրում համանման փաստական հանգամանքներով բնութագրվող գործերի դեպքում:

Այսպիսով, վերը ներկայացվածը հաստատում է, որ Հայաստանի իրավական համակարգում գույքի հանցավոր ծագումը ապացուցելու համար պարտադիր չէ նախորդող հանցագործության վերաբերյալ դատավճռի առկայությունը:

### 3. Ներպետական համագործակցություն

Հարցման ուղղությունը	Դատախազություն	Ոստիկանություն	ԱԱԾ	ՊԵԿ
ՖԴԿ-ի կողմից ստացված հարցումներ	40	35	51	32
ՖԴԿ-ի կողմից ուղարկված հարցումներ	0	24	9	21

Վերը ներկայացված աղյուսակում ներկայացված է ՖԴԿ-ի և ՓԼ/ԱՖ դեմ պայքարում ներգրավված այլ իրավասու մարմինների գործունեությունը նկարագրող վիճակագրական տեղեկատվություն 2010-2012թթ. ժամանակահատվածի համար:

Դիտարկվող ժամանակահատվածում ՖԴԿ-ն ուղարկել է 35 տեղեկացում (սեփական նախաձեռնությամբ բացահայտում) ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայությանը (որոնցից 32-ի պատճենն ուղարկվել է ՀՀ գլխավոր դատախազություն), 12 տեղեկացում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե (որոնցից 6-ի պատճենն ուղարկվել է ՀՀ գլխավոր դատախազություն), 2 տեղեկացում ՀՀ ԿԱ ոստիկանություն և 1 տեղեկացում ՀՀ գլխավոր դատախազություն: Նշված տեղեկացումների հիման վրա հարուցվել է 6 ՓԼ գործ, որոնցից ներկայում 2-ի գծով կայացվել է ՓԼ մեղադրական դատավճիռ:

2010-2012թթ. Ժամանակահատվածում ՖԴԿ-ի և վերահսկող մարմինների միջև համագործակցության շրջանակներում ՖԴԿ-ն փաստաթղթավորել և համապատասխան վերահսկող մարմիններին ուղարկել է հնարավոր խախտումների վերաբերյալ տեղեկացումներ:

	ՀՀ ԿԲ Ֆինանսական վերահսկողությա ն վարչություն	ՀՀ ԱՆ (նոտարների գծով)	ՀՀ ՖՆ (խաղատների, շահումով խաղ կազմակերպող անձանց և աուդիտորների գծով)	Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե (ռիելտորական գործունեություն իրականացնող անձանց գծով)
ՖԴԿ-ն տրամադրել է վերահսկողական նպատակներին անհրաժեշտ տեղեկատվություն	20	2	2	2

#### 4. Միջազգային համագործակցություն

##### ա) Եվրոպայի խորհուրդ

Հայաստանի պատվիրակությունը մասնակցել է Եվրոպայի խորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնաժողովի պարբերական լիազումար նիստերին: ՄԱՆԻՎԱԼ-ի հայաստանյան պատվիրակությունն իր մասնակցությունն է բերել հանձնաժողովի կողմից իրականացվող աշխատանքներին:

Հայաստանի փորձագետները մասնակցել են ՄԱՆԻՎԱԼ-ի կողմից անցկացվող՝ անդամ երկրների ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգերի գնահատումներին:

##### բ) Էզմոնտ խումբ

Ֆինանսական հետախուզության մարմինների Էզմոնտ խմբի շրջանակներում ՖԴԿ-ի ներկայացուցիչները շարունակել են ակտիվ մասնակցությունը լիազումար նիստերին և աշխատանքային խմբերի հանդիպումներին:

ՖԴԿ-ն Իրանի և Թուրքմենստանի ՖՀՄ-ների հովանավորն է Էզմոնտ խմբին անդամակցության հարցով: Էզմոնտի Գործառնական հարցերով աշխատանքային խմբում վերջերս ավարտին է հասցվել ՖԴԿ-ի ղեկավարությամբ իրականացվող՝ տեղեկատվության փոխանակման բարելավմանն ուղղված մի ծրագիր: ՖԴԿ-ն ներգրավված է նաև Էզմոնտի հիմնադիր փաստաթղթերի վերանայման նպատակով վերջերս սկսված ծրագրում: Բացի այդ, ՖԴԿ-ն ղեկավարում է Էզմոնտ խմբի անդամների միջև տեղեկատվության փոխանակման բարելավմանն ուղղված ևս մեկ նոր ծրագիր:



ՖԴԿ-ն տեղեկատվություն է փոխանակում օտարերկրյա գործընկեր ՖՀՄ-ների հետ<sup>10</sup>.

ՖԴԿ-ի կողմից ստացված հարցումներ	ՖՀՄ Ռուսաստան	ՖՀՄ Մոնթենեգրո	ՖՀՄ Արգենտինա	ՖՀՄ Խորվաթիա	ՖՀՄ Ուկրաինա	ՖՀՄ Ղազախստան	ՖՀՄ Սլովակիա
	12	5	4	4	3	3	2
	ՖՀՄ ԱՄՆ	ՖՀՄ Մոլդովա	ՖՀՄ Ղրղզստան	ՖՀՄ ԱՄԷ	ՖՀՄ Ֆրանսիա	ՖՀՄ Ֆինլանդիա	ՖՀՄ Կիպրոս
	3	2	2	2	1	1	1
	ՖՀՄ Հունաստան	ՖՀՄ Նորվեգիա	ՖՀՄ Վենեսուելա	ՖՀՄ Լեհաստան	ՖՀՄ Գերմանիա	ՖՀՄ Լիտվա	ՖՀՄ Եգիպտոս
	3	1	2	1	1	2	1
	ՖՀՄ Սաուդյան Արաբիա	ՖՀՄ Շրի Լանկա	ՖՀՄ Զերսի	ՖՀՄ Մալթա	ՖՀՄ Բահրեյն	ՖՀՄ Լյուքսեմբուրգ	ՖՀՄ Կյուրասաո
	1	1	1	1	2	1	1
	ՖՀՄ Բելգիա	ՖՀՄ Ալբանիա	ՖՀՄ Բուլղարիա	Ընդամենը			
2	1	1	68				
ՖԴԿ-ի կողմից ուղարկված հարցումներ	ՖՀՄ ԱՄՆ	ՖՀՄ Ռուսաստան	ՖՀՄ Լատվիա	ՖՀՄ Մեծ Բրիտանիա	ՖՀՄ Իրան	ՖՀՄ Վրաստան	ՖՀՄ Կիպրոս
	8	8	7	6	6	6	4
	ՖՀՄ Շվեյցարիա	ՖՀՄ Բրիտ. Վիրգ. Կղզիներ	ՖՀՄ Ուկրաինա	ՖՀՄ Ֆրանսիա	ՖՀՄ ԱՄԷ	ՖՀՄ Չինաստան	ՖՀՄ Էստոնիա
	4	3	3	3	2	2	2
	ՖՀՄ Պանամա	ՖՀՄ Հարավային Աֆրիկա	ՖՀՄ Ավստրիա	ՖՀՄ Ղազախստան	ՖՀՄ Կանադա	ՖՀՄ Նիդեռլանդներ	ՖՀՄ Լիտվա
	2	2	2	2	1	1	1
	ՖՀՄ Գերմանիա	ՖՀՄ Ղրղզստան	ՖՀՄ Հունգարիա	ՖՀՄ Լյուքսեմբուրգ	ՖՀՄ Իսրայել	ՖՀՄ Դանիա	ՖՀՄ Հնդկաստան
	1	1	1	1	1	1	1
	ՖՀՄ Ճապոնիա	ՖՀՄ Չեխիա	ՖՀՄ Սինգապուր	ՖՀՄ Սենթ Քիթս և Նեվիս	ՖՀՄ Բելառուս	ՖՀՄ Բելիզ	ՖՀՄ Մոնղոլիա
	1	1	1	1	1	1	1
ՖՀՄ Տոգո	Ընդամենը						

<sup>10</sup> Տեղեկատվության փոխանակման վերաբերյալ տվյալները ներկայացված են 212թ. հոկտեմբերի 8-ի դրությամբ:

**գ) Եվրասիական խումբ**

Հայաստանի պատվիրակությունները մասնակցել են ԵԱԽ-ի լիազույցված նիստերին: Տեխնիկական օժանդակության ծրագրի շրջանակներում ՖԴԿ-ն շարունակել է օտարերկրյա ՖՀՄ-երին, մասնավորապես՝ Ղազախստանի, Տաջիկստանի և Թուրքմենստանի գործընկերներին աջակցության ցուցաբերումը ՏՏ և վերլուծական համակարգերի, ինչպես նաև օրենսդրական բարեփոխումների ոլորտներում փորձի փոխանակման ուղղությամբ:

Հայաստանի փորձագետները ներգրավվել են ԵԱԽ-ի կողմից անցկացվող՝ անդամ երկրների ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգերի գնահատումներին:

**դ) Տեխնիկական օժանդակության սրացում**

**ԱՄՀ-ի տեխնիկական օժանդակության ծրագիր**

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ԱՄՀ-ի կողմից տեխնիկական օժանդակություն է տրամադրվել հետևյալ բնագավառներում.

- Խաղատների լիցենզավորման և վերահսկողության կարողությունների զարգացում.
- Բանկային վերահսկողությունում ՓԼ/ԱՖ ռիսկերի վրա հիմնված վերահսկողական մոդելի ներդրում.
- Դատական և իրավապահ մարմինների ներկայացուցիչների համար ուսուցողական միջոցառումների անցկացում ՓԼ/ԱՖ գործերով քննության և քրեական հետապնդման վերաբերյալ:

**ԱՄՆ պետդեպարտամենտի տեխնիկական օժանդակության ծրագիր**

ԱՄՆ պետդեպարտամենտի կողմից տրամադրվող տեխնիկական օժանդակության ծրագրի շրջանակներում իրականացվել են մի շարք աշխատանքներ, այդ թվում՝ ուսուցողական ծրագրեր (մանրամասների համար տես ընդհանուր տեղեկությունների 2.1.2. բաժնի «5. Ուսուցողական միջոցառումներ» ենթաբաժինը):

Տեխնիկական օժանդակության ծրագրի շրջանակներում 2010 թվականին ներդրվել է ՖԴԿ-ի Գործերի կառավարման ավտոմատացված համակարգը: Համակարգը հնարավոր է դարձնում ՓԼ/ԱՖ գործերի և փաստաթղթերի ավտոմատացված կառավարումը, հասանելի տվյալների շտեմարաններում խորացված որոնումները, ֆինանսական գործարքների և հոսքերի վերլուծությունը, վերլուծության սուբյեկտների միջև ակնհայտ և թաքնված կապերի բացահայտումը, ինչպես նաև վերլուծության արդյունքների տեսապատկերումը տարատեսակ գրաֆիկական և կիրառական ձևաչափերով: Համակարգում առկա են նաև տվյալների մշակման գործիքներ ՓԼ/ԱՖ միտումների բացահայտման և տիպաբանությունների մշակման համար:

Ներպետական համատեքստում, հաշվետու անձանցից բացի այլ շահագրգիռ կողմերի հետ տեղեկատվության փոխանակման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով

նախագծվել է SS/ հաղորդակցության նոր ինտեգրված համակարգ, որը հնարավորություն կընձեռնի միասնական տեղեկատվական տիրույթի շրջանակներում համախմբել ու կառավարել տեղեկատվության բոլոր հասանելի աղբյուրները:

Համակարգը կունենա տեղեկատվության (ավտոմատացված) հավաքագրման, դասակարգման, վերլուծության ու պահպանման հնարավորություններ: Համակարգի շահառուների միջև տեղեկատվության փոխադարձ հասանելիության ապահովման ու փոխանակման նպատակով կմշակվեն տարատեսակ գործիքներ ու ձևաչափեր:

**ե) Տեխնիկական օժանդակության տրամադրում**

Տաջիկստանի ՖՀՄ-ին տեխնիկական օժանդակության տրամադրման ծրագրի շրջանակներում ՖԴԿ-ն օտարերկրյա գործընկերների համար կազմակերպել է սեմինար/ քննարկումներ, ինչպես նաև աջակցություն է ցուցաբերել օրենսդրական դաշտի և SS համակարգի բարելավման ոլորտում:

Կազմակերպվել է Ղազախստանի ՖՀՄ-ի ներկայացուցիչներն այցը Հայաստան՝ SS և վերլուծական համակարգերի ոլորտում փորձի փոխանակման նպատակով:

Թուրքմենստանի ՖՀՄ-ին տեխնիկական օժանդակության տրամադրման ծրագրի շրջանակներում կազմակերպվել են ուսուցողական և խորհրդատվական միջոցառումներ SS համակարգերի զարգացման և վերլուծական կարողությունների բարելավման ոլորտում:

**5. Ուսուցողական միջոցառումներ**

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են մի շարք սեմինարներ և ուսուցողական միջոցառումներ վերահսկողական մարմինների, իրավապահների և հաշվետվություն տրամադրող անձանց համար:

**ա) ՖԴԿ-ի, ԿԲ այլ սպորաբաժանումների և պեդական մարմինների համար կազմակերպված ուսուցողական միջոցառումներ**

Ուսուցողական միջոցառում	Մասնակիցներ	Ամսաթիվ
<b>2010</b>		
Տեղեկատվական տեխնոլոգիաների և ֆինանսական վերլուծության թեմայով ուսուցում (Վիեննայի միացյալ ինստիտուտ)	ՖԴԿ	Հոկտեմբերի 25-29
<b>2011</b>		
ԱՄՀ փորձագետների կողմից կազմակերպված՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում վերահսկողության առանձնահատկությունները» թեմայով դասընթաց (ԱՄՀ տեխնիկական օժանդակության ծրագրի շրջանակներում)	ՖԴԿ, ԿԲ	Փետրվարի 1
ԱՄՆ ապահովագրության վերահսկողների ազգային ասոցիացիայի կողմից կազմակերպված՝ «ՓԼ/ԱՖ դեմ	ՖԴԿ, ԿԲ	Փետրվարի 23-24

պայքարի ոլորտում վերահսկողության առանձնահատկությունները» թեմայով դասընթաց (ԱՄՆ Գանձապետարանի տեխնիկական օժանդակության ծրագրի շրջանակներում)		
Բազելի կառավարման ինստիտուտի կողմից կազմակերպված՝ «Փողերի լվացում և միջոցների հայտնաբերում» թեմայով դասընթաց (ԱՄՀ տեխնիկական օժանդակության ծրագրի շրջանակներում) <sup>11</sup>	ՖԴԿ, ԱԱԾ, Գլխավոր դատախազություն, Ոստիկանություն, Հատուկ քննչական ծառայություն, դատական մարմիններ (այդ թվում՝ դատավորներ)	Մարտի 17-24
«Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) և ահաբեկչության ֆինանսավորման հակազդման ոլորտում աշխատանքների կազմակերպման փորձը» թեմայով սեմինար (ԵՎՐԱԶԵՍ-ի աջակցությամբ)	ՖԴԿ, ԿԲ	Ապրիլի 26-28
Համաշխարհային բանկի և Էզմոնտ խմբի կողմից կազմակերպված՝ «Տակտիկական վերլուծություն» թեմայով համատեղ սեմինար	ՖԴԿ	Մայիսի 3-6
ՄԱՆԻՎԱԼ-ի գնահատողների ուսուցման սեմինար	ՖԴԿ	Հուլիսի 8-10
ՄԱԿ Թմրանյութերի և հանցավորության գրասենյակի և ԵԱՀԿ-ի կողմից կազմակերպված՝ «Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարը» թեմայով համատեղ տարածաշրջանային սեմինար	ՖԴԿ	Սեպտեմբերի 26-29
Փորձի փոխանակման այց Իսրայելի ՖՀՄ (ԱՄՆ Գանձապետարանի տեխնիկական օժանդակության ծրագրի շրջանակներում) <sup>12</sup>	ՖԴԿ, ԱԱԾ, Գլխավոր դատախազություն, Ոստիկանություն, ՊԵԿ (հարկային և մաքսային վարչարարություն)	Նոյեմբերի 2-6
<b>2012</b>		
Լեհաստանի ֆինանսների նախարարության կողմից կազմակերպված փորձի փոխանակման այց	ՖԴԿ, ԿԲ, Ոստիկանություն, ԱԱԾ, ՊԵԿ (հարկային և մաքսային վարչարարություն)	Հունվարի 31-փետրվարի 2

<sup>11</sup> Քննարկված թեմաները՝ ՓԼ գործերի քննություն, միջոցների հայտնաբերում, ապացույցների հավաքագրում, փոխադարձ իրավական օգնություն, ակտիվների միջազգային վերականգնում և այլն:

<sup>12</sup> Քննարկված թեմաները՝ վերլուծական մեթոդներ և գործիքներ, տվյալների շտեմարանների կառավարման համակարգեր, վերլուծական ծրագրեր և տվյալների մշակման տեխնոլոգիաներ, ՓԼ/ԱՖ գործերի մասով համագործակցության ներպետական և միջազգային իրավական համակարգերը, ՓԼ/ԱՖ գործերի արդյունավետ քննության և դատավարության նախապայմանները, իրավապահ մարմինների հետ համագործակցությունը, ՓԼ/ԱՖ քրեական գործերի քննության մեթոդներն ու եղանակները, հանցավոր ակտիվների (միջոցների) տարբերակման չափանիշները, ակտիվների ծագումն ապացուցելու հարցում մեղադրական և պաշտպանական կողմերի պարտականությունները:

ԱՄՀ կողմից ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում տրամադրվող տեխնիկական օժանդակության շրջանակներում կազմակերպված՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմայով դասընթաց <sup>13</sup>	ՖԴԿ, Գլխավոր դատախազություն, ԱԱԾ, Ոստիկանություն, ՊԵԿ (հարկային և մաքսային վարչարարություն), Դատական դեպարտամենտ և դատավորներ	Մարտի 20-21
ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմայով սեմինար (Վիեննայի միացյալ ինստիտուտ)	ՖԴԿ վերլուծաբաններ	Ապրիլի 9-13
Նիդեռլանդների բանկի կողմից կազմակերպված՝ «Ռիսկերի վրա հիմնված վերահսկողություն» թեմայով դասընթաց	ՖԴԿ, ԿԲ	Ապրիլ
Բունդեսբանկի կողմից կազմակերպված՝ «Տեղերում ստուգումների ժամանակ վերահսկողների և արտաքին աուդիտորների համագործակցություն, վարկային ռիսկի կենտրոնացում, շուկայական և վարկային ռիսկերի փոխազդեցություն» թեմաներով սեմինար	ՖԴԿ, ԿԲ	Մայիսի 8-10
Փորձի փոխանակման այց Կանադայի ՖՀՄ՝ ՓԼ/ԱՖ գործերի վերլուծության գործիքների ու մեթոդների թեմայով (ԱՄՆ Գանձապետարանի տեխնիկական օժանդակության ծրագրի շրջանակներում)	ՖԴԿ	Սեպտեմբերի 6-7
Փորձի փոխանակման այց Ավստրալիայի ՖՀՄ՝ ՓԼ/ԱՖ կարգավորման և վերահսկողության, գործերի վերլուծության գործիքների ու մեթոդների թեմայով (ԱՄՆ Գանձապետարանի տեխնիկական օժանդակության ծրագրի շրջանակներում)	ՖԴԿ, ԿԲ	Սեպտեմբերի 10-14

**բ) Հաշվեպնդություն տրամադրող անձանց և վերահսկող մարմինների համար կազմակերպված ուսուցողական միջոցառումներ ու հանդիպումներ**

Ուսուցողական միջոցառում	Մասնակիցներ	Ամսաթիվ
<b>2010</b>		
«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելումը ֆինանսական հաստատություններում» թեմայով դասընթաց (կազմակերպվել է ՖԴԿ-ի կողմից) <sup>14</sup>	ՀՀ ֆինանսական հաստատությունների ներքին դիտարկումների մարմինների	Հոկտեմբեր

<sup>13</sup> Քննարկված թեմաները՝ ՓԼ հանցագործների քրեական հետապնդումը, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի արդյունավետ համակարգի ստեղծմանն առնչվող իրավական և այլ խնդիրները:

<sup>14</sup> Քննարկված թեմաները՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ազգային և միջազգային համակարգերը, ՖՀՄ-ների դերն ու գործառույթները, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գործառույթը ֆինանսական հաստատություններում, ֆինանսական հաստատությունների ներքին իրավական ակտերը, ՀՊՈԻ, այդ թվում՝ պարզեցված և ընդլայնված, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի՝ ռիսկերի վրա հիմնված մոտեցումը ֆինանսական հաստատություններում, կասկածելի գործարքների չափանիշներ, ՓԼ/ԱՖ տիպաբանություններ, գործարքների կասեցում և սառեցում, ԿԳՀ-երի և նվազագույն շեմը գերազանցող գործարքների մասին հաշվետվությունների տրամադրման կանոններ

	աշխատակիցներ, ներքին աուդիտի անդամներ, հաճախորդների սպասարկում իրականացնող աշխատակիցներ, ՓԼ/ԱՖ ներքին ռիսկերի հետ առնչվող այլ աշխատակիցներ	
<b>2011</b>		
«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելումը ֆինանսական հաստատություններում» թեմայով դասընթաց (կազմակերպվել է ՖԴԿ-ի կողմից) <sup>15</sup>	ՀՀ բանկերի ներքին դիտարկումների մարմինների աշխատակիցներ	Սեպտեմբերի 13-20
«ՓԼ/ԱՖ դեմ պայքար և ֆինանսական վերահսկողություն» թեմայով դասընթաց (կազմակերպվել է ՖԴԿ-ի և ՖՎՎ-ի կողմից) <sup>16</sup>	Հայաստանյան բանկերի մասնաճյուղերի կառավարիչներ, հաճախորդների սպասարկման և այլ ստորաբաժանումների աշխատակիցներ	Հոկտեմբերի 13-14
«ՓԼ/ԱՖ դեմ պայքար» թեմայով դասընթաց (կազմակերպվել է ՎՋԵԲ-ի կողմից) <sup>17</sup>	ՀՀ բանկերի ներքին դիտարկումների մարմինների աշխատակիցներ, ՖՎՎ, ՖԴԿ	Նոյեմբերի 22-24
«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում նախատեսվող փոփոխությունների, հաշվետվությունների տրամադրման, ահաբեկիչների ցանկերի թարմացման և մի շարք այլ հարցերի վերաբերյալ հանդիպում	ՖԴԿ, ՀՀ բանկերի ներքին դիտարկումների մարմինների աշխատակիցներ	Դեկտեմբերի 8

<sup>15</sup> Քննարկված թեմաների համար տես նախորդ ծանոթագրությունը:

<sup>16</sup> Քննարկված թեմաները՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք, ներքին դիտարկումների գործառույթը բանկերում, ՀՊՈՒ-ի միջոցառումներ, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի՝ ռիսկերի վրա հիմնված մոտեցումը բանկերում, կասկածելի գործարքների չափանիշներ, ՓԼ/ԱՖ տիպաբանություններ:

<sup>17</sup> Քննարկված թեմաները՝ ֆինանսական հանցագործությունների հակազդումը և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի արդյունավետ համակարգերի զարգացման անհրաժեշտությունը, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի նոր պահանջներ (ՖԱԹՖ-ի նոր հանձնարարականներ), ներքին դիտարկումների մարմնի դերը ֆինանսական հաստատություններում, ռիսկերի վրա հիմնված մոտեցումը և համապատասխանությունը, քաղաքական ազդեցություն ունեցող անձինք (ՔԱՈՒԱ) և այլ բարձր ռիսկային գործարար հարաբերություններ, ՓԼ/ԱՖ վերահսկողությունը ՀՀ կենտրոնական բանկի տեսանկյունից, ՖԴԿ-ի դերն ու գործառույթները, հակակոռուպցիոն միջոցառումները և ֆինանսական հաստատությունների դերը կաշառակերության ու կոռուպցիայի կանխարգելման գործում, ահաբեկչության ֆինանսավորումը, զանգվածային ոչնչացման զենքի ապօրինի տարածման ֆինանսավորումը, ֆինանսական պատժամիջոցների կիրառման պրակտիկան:

(կազմակերպվել է ՖԴԿ-ի կողմից)		
ՖԴԿ-ի կողմից կազմակերպված՝ ՀՀ տարածքում ՓԼ/ԱՖ կարգավորման, միջազգային փորձի և օրենսդրական զարգացումների վերաբերյալ սեմինարների շարք (ԱՄՆ Գանձապետարանի տեխնիկական օժանդակության ծրագրի շրջանակներում) <sup>18</sup>	ՀՀ ֆինանսների նախարարություն, իրավաբանական անձանց պետական ռեզիստրի գործակալության, խաղատների, շահումով խաղերի կազմակերպիչներ, առդիտորներ, հաշվապահներ, փաստաբաններ, վերահսկող մարմինների ներկայացուցիչներ	Դեկտեմբերի 19-22
<b>2012</b>		
«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելումը ֆինանսական հաստատություններում» թեմայով դասընթաց (կազմակերպվել է ՖԴԿ-ի կողմից) <sup>19</sup>	ՀՀ ֆինանսական հաստատությունների ներքին դիտարկումների մարմինների աշխատակիցներ	Հոկտեմբերի 8-12
ԱՄՀ փորձագետների կողմից կազմակերպված՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման վերաբերյալ սեմինար (ԱՄՀ տեխնիկական օժանդակության ծրագրի շրջանակներում)	ՆՈՖԳՏՄ-երի և վերահսկող մարմինների ներկայացուցիչներ	Նախատեսված է նոյեմբերին

<sup>18</sup> Քննարկված թեմաները՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրական պահանջները, ՆՈՖԳՏՄ-երին ների՝ հաշվետվություններ ներկայացնելու պարտականությունը, ներքին իրավական ակտերի մշակումը, ՓԼ/ԱՖ ռիսկի ազդակներ և տիպաբանություններ, բարձր ռիսկի չափանիշներ:

<sup>19</sup> Քննարկված թեմաները՝ ԹԼ/ԱՖ դեմ պայքարի ազգային և միջազգային համակարգերը, ԿԳՀ-երի և նվազագույն շեմը գերազանցող գործարքների մասին հաշվետվությունների տրամադրումը, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գործառույթը ֆինանսական հաստատություններում, ֆինանսական հաստատությունների ներքին իրավական ակտերը, ՀՊՈԽ, այդ թվում՝ պարզեցված և ընդլայնված, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի՝ ռիսկերի վրա հիմնված մոտեցումը ֆինանսական հաստատություններում, կասկածելի գործարքների չափանիշներ, ՓԼ/ԱՖ տիպաբանություններ, ՖԱԹՖ-ի նոր հանձնարարականները:

**2.2. Հիմնարար հանձնարարականներ**

Նկարագրեք ՖԱԹՖ-ի հիմնարար հանձնարարականների (Հ.1, Հ.5, Հ.10, Հ.13, ՀՀ.11 և ՀՀ.14) և Առաջարկվող միջոցառումների ծրագրի (Հավելված 1) գծով ձեռք բերված առաջընթացը:

<b>Հ.1 (ՓԼ քրեականացում)</b>	
<b>Գնահատական՝ հիմնականում համապատասխանում է</b>	
<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ</p>	<p><i>Իրականացնել պատշաճ նախաձեռնություններ (օրինակ՝ իրազեկության բարձրացում կամ ուսուցում) ՓԼ գործերի քննության, քրեական հետապնդման և դատական գործընթացին մասնակից բոլոր իրավասու մարմինների համար, որպեսզի. (1) պարզվի, թե ինչ խոչընդոտներ կան ՓԼ քրեական հետապնդման ճանապարհին, օրինակ՝ թե ՓԼ՝ որպես առանձին հանցագործության համար մեղադրական դատավճիռ ստանալուն որքանով է խոչընդոտում գույքի՝ նախորդող կոնկրետ հանցավոր գործունեության արդյունքում ստացված լինելը հիմնավորելու համար կիրառվող ապացուցման չափանիշը:</i></p>
<p>Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>Հնարավոր խոչընդոտների վերաբերյալ վերլուծություն է իրականացվել Դատախազության կոլեգիայի՝ 2009թ. հոկտեմբերի 21-ի նիստում, երբ նախորդող հանցակազմը հաստատելու համար պահանջվող ապացույցների բարձր չափանիշի կիրառության նախկին փորձը համարվել է սխալ և ընդունվել է համապատասխան հրահանգ, որն ուղղված է վերոնշյալ խոչընդոտը վերացնելուն և ՓԼ՝ որպես առանձին հանցագործության գծով քննություն իրականացնելուն՝ անկախ նախորդող հանցագործության գծով կայացված դատավճիռի առկայությունից:</p>
<p><b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b></p>	<p>ՓԼ հանցագործության վերաբերյալ պարբերաբար կազմակերպվել են ուսուցողական միջոցառումներ (տես՝ ընդհանուր տեղեկությունների 2.1.2. բաժնի «5. Ուսուցողական միջոցառումներ» ենթաբաժինը), որոնց շրջանակներում ի թիվս այլ թեմաների քննարկվել են ՓԼ գործերի քննության առանձնահատկությունները: Փոխվել են որոշակի նախորդող հանցագործություններին առնչվող ապացույցների չափորոշիչ վերաբերյալ պրակտիկ աշխատողների ընկալումները, ինչն իր արտացոլումն է գտել թե ընդհանրապես ՓԼ գործերի, թե մասնավորապես միայն ՓԼ հանցակազմով գործերի վիճակագրությունում: Առաջընթացի առաջին հաշվետվության ներկայացումից հետո հարուցվել և ներկայում քննվում է միայն ՓԼ հանցակազմով 4 քրեական գործ:</p>
<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված</p>	<p><i>(2) շարունակել բարձրացնել ՓԼ քրեականացնող օրենսդրական հիմքերի վերաբերյալ իրազեկության մակարդակը:</i></p>



առաջարկ	
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	<p>Իրավապահ մարմինների՝ ՓԼ քրեականացնող օրենսդրական հիմքերի վերաբերյալ իրազեկության մակարդակը բարձրացվել է հետևյալ նախաձեռնությունների միջոցով.</p> <ul style="list-style-type: none"> <li>- Դատախազության կոլեգիայի՝ 2009թ. հոկտեմբերի 21-ի նիստում կայացված վերոնշյալ որոշումն ու հրահանգը տրամադրվել է ֆինանսական հետախուզություն իրականացնող բոլոր ԻՊՄ-ներին,</li> <li>- Վերոնշյալ որոշման համաձայն՝ Գլխավոր դատախազության Ազգային մարմիններում քննվող գործերով վարչության կողմից ներկայում կազմվում է ՓԼ/ԱՖ քննությանը վերաբերող թղթային և էլեկտրոնային նյութերի շտեմարան, ինչը հասանելի է լինելու ԻՊՄ-ներին,</li> <li>- Դատախազության դպրոցին հանձնարարվել է կազմել ՓԼ քննությունների ձեռնարկ, ինչը մի խումբ մասնագետների կողմից մշակվել է և ներկայում գտնվում է հրապարակմանը նախորդող խմբագրման փուլում,</li> <li>- 2010թ. սեպտեմբերին Դատախազության դպրոցում նախատեսվող դասընթացին մասնակցելու են համապատասխան ԻՊՄ-ների պատասխանատու աշխատակիցներ, դատավորներ: Դասընթացն ուղղված է ԻՊՄ-ների՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում մասնագիտական կարողությունների զարգացմանը:</li> </ul>
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Նախորդ առաջարկի վերաբերյալ պատասխանում նշված ուսուցողական միջոցառումները նպաստել են նաև ՓԼ քրեականացնող օրենսդրական հիմքերի վերաբերյալ իրազեկության մակարդակի բարձրացմանը: Բացի այդ, 2010 Դատախազության դպրոցի կողմից հրապարակվել է փողերի լվացման դեմ պայքարի վերաբերյալ ձեռնարկ:
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	

<b>Հ.5 (ՀՊՈՒ)</b> <b>I. ՖՀ-ների մասով</b>	
<b>Գնահատական՝ մասամբ համապատասխանում է</b>	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ	<i>Արգելել ըստ ներկայացնողի բանկային գրքույկները և ավանդային վկայագրերը, ինչպես նաև ըստ ներկայացնողի այլ արժեթղթերը՝</i>

<p>ներկայացված առաջարկ</p>	<p><i>ուժը կորցրած ճանաչելով/ փոփոխելով համապատասխան հողվածները քաղաքացիական օրենսգրքում և բոլոր այլ իրավական ակտերում, որոնցով նախատեսվում կամ կարգավորվում են ըստ ներկայացնողի (վճարային) գործիքները:</i></p>
<p>Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (14-րդ հոդվածի 1-ին մաս): Ընդ որում, «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի» (148-րդ հոդվածի 2-րդ մաս) համաձայն՝ կարող է բացառվել որոշակի տեսակի արժեթղթերի թողարկումը, ինչպիսիք են, օրինակ՝ ըստ ներկայացնողի (օրդերային), անվանական կամ համանման այլ արժեթղթերը (ինչն էլ սահմանվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագծի վերոնշյալ հոդվածով):</p>
<p><b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b></p>	<p>Այս առաջարկի կապակցությամբ արդիական է մնում Առաջընթացի առաջին հաշվետվությամբ ներկայացված՝ Քաղաքացիական օրենսգրքի վերաբերյալ դիտարկումը: Ներկայացված առաջարկն իրագործվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագծով (15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերություն):</p>
<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ</p>	<p><i>ՖՀ-ների համար ներդնել լրացուցիչ ուղեցույցներ հաճախորդների վերաբերյալ տվյալների թարմացման համարժեք ժամկետների վերաբերյալ՝ ապահովելու համար հեղուկական և արդյունավետ իրագործումը:</i></p>
<p>Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (16-րդ հոդվածի 2-րդ մաս): ՖԴԿ-ի կողմից հրապարակվել է նաև շրջաբերական գրություն (հրապարակված է ՖԴԿ-ի ինտերնետային կայքի «Հաճախ տրվող հարցեր» մասում), ինչը հանդիսանում է ուղեցույց՝ ՖՀ-ների կողմից հաճախորդների վերաբերյալ տվյալների թարմացման համարժեք ժամկետների վերաբերյալ: Շրջաբերական գրության համաձայն՝ ՀՊՈՒ-ի շրջանակներում հավաքագրված տեղեկությունները ենթակա են թարմացման առնվազն տարեկան կտրվածքով: Ուսուցողական միջոցառումների ընթացքում (տես՝ ընդհանուր տեղեկությունների 2.1.1 բաժնի «4. Ուսուցողական միջոցառումներ և կարողությունների զարգացում» ենթաբաժինը) շրջաբերական գրությունը տրամադրվել է հաշվետու անձանց: Բացի այդ, ՖՀ-ների ներքին իրավական ակտերի վերլուծությունը ցույց է տվել, որ հաճախորդների տվյալների թարմացման պարբերականությունը,</p>

	որպես կանոն, առնվազն կազմում է տարին մեկ անգամ:
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Այս առաջարկի կապակցությամբ արդիական է մնում Առաջընթացի առաջին հաշվետվությամբ ներկայացված՝ շրջաբերական գրության վերաբերյալ դիտարկումը: Ներկայացված առաջարկն իրագործվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագծով (17-րդ հոդվածի 2-րդ մաս):
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Ներդնել լրացուցիչ ուղեցույցներ՝ մասնավորեցնելով այն ողջամիտ ժամկետը, որը ՖՀ-ները պետք է պահպանեն գործարար հարաբերություն հաստատելու ընթացքում նույնականացման տեղեկություններ ձեռք բերելիս և այդ տեղեկությունների իսկությունը ստուգելիս:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (15-րդ հոդվածի 1-ին մաս): Շրջաբերական գրության (իրապարակված է ՖԴԿ-ի ինտերնետային կայքի «Հաճախ տրվող հարցեր» մասում) միջոցով ՖՀ-ների համար ՖԴԿ-ն ներմուծել է նաև «ողջամիտ ժամկետ» եզրույթի սահմանումը, որի համաձայն՝ հաճախորդի նույնականացման տեղեկությունների իսկությունը ստուգելու ժամկետ է սահմանվել յոթնօրյա ժամանակահատվածը՝ պայմանով, որ ՓԼ/ԱՖ դիսկն արդյունավետորեն զսպված է:
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Այս առաջարկի կապակցությամբ արդիական է մնում Առաջընթացի առաջին հաշվետվությամբ ներկայացված՝ շրջաբերական գրության վերաբերյալ դիտարկումը: Ներկայացված առաջարկն իրագործվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագծով (16-րդ հոդվածի 1-ին մաս):
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>ՖՀ-ների համար սահմանել ուղղակի պահանջ՝ ընդունելու դիսկերի կառավարման արդյունավետ ընթացակարգեր այն իրավիճակների վերաբերյալ, որոնցում հաճախորդին թույլատրվում է գործարար հարաբերությունից օգտվել նախքան ՀՊՈԻ ստուգումն ավարտելը:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Տես նախորդ առաջարկի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:

<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Տես նախորդ առաջարկի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>ՖՀ-ների համար սահմանել ուղղակի պահանջ՝ առկա հաճախորդների նկատմամբ էականության և ռիսկայնության հիման վրա իրականացնելու ՀՊՈՒ միջոցառումներ, ներառյալ՝ առկա հարաբերությունների պատշաճ ուսումնասիրությունների իրականացումը համապատասխան պարբերականությամբ:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (17-րդ հոդվածի 9-րդ մաս): ՖԴԿ-ն ՖՀ-ների համար հրապարակել է նաև շրջաբերական գրություն (հրապարակված է ՖԴԿ-ի ինտերնետային կայքի «Հաճախ տրվող հարցեր» մասում), ինչը հանդիսանում է ուղեցույց՝ համարժեք պարբերականությամբ և անհրաժեշտության դեպքում առկա հաճախորդների նկատմամբ էականության և ռիսկայնության հիման վրա ՀՊՈՒ իրականացնելու պարտավորության վերաբերյալ:
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Այս առաջարկի կապակցությամբ արդիական է մնում Առաջընթացի առաջին հաշվետվությամբ ներկայացված՝ շրջաբերական գրության վերաբերյալ դիտարկումը: Ներկայացված առաջարկն իրագործվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագծով (18-րդ հոդվածի 6-րդ մաս):
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Ապահովել «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով և հարակից իրավական ակտերով ՀՊՈՒ միջոցառումների մասով նախատեսված պարտավորությունների առավել արդյունավետ կատարումը ՖՀ-ների կողմից՝ ուսուցողական միջոցառումների կամ իրազեկության բարձրացման այլ նախաձեռնությունների միջոցով:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Ներկայացված առաջարկն իրագործվել է ՖՀ-ների համար մի շարք ուսուցողական միջոցառումների կազմակերպման միջոցով (տես՝ ընդհանուր տեղեկությունների 2.1.1 բաժնի «4. Ուսուցողական միջոցառումներ և կարողությունների զարգացում» ենթաբաժինը), որոնց թեմաները ներառել են նաև ՀՊՈՒ-ի հետ կապված հարցերը:
<b>Առաջընթացի</b>	Ֆինանսական հաստատությունների համար պարբերաբար

<b>առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	կազմակերպվել են ուսուցողական միջոցառումներ (տես՝ ընդհանուր տեղեկությունների 2.1.2. բաժնի «5. Ուսուցողական միջոցառումներ» ենթաբաժինը), որոնց շրջանակներում ի թիվս այլ թեմաների քննարկվել են ՀՊՈՒ-ի հետ կապված հարցերը:
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	
<b>Հ.5 (ՀՊՈՒ) II. ՆՈՖԳՏՄ-ների մասով<sup>20</sup></b>	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Վերացնել այն նվազագույն շեմը, որով բաժնետիրոջ առուվաճառքի պարագայում սահմանափակվում է ՀՊՈՒ-ն նույնարժեքի, փաստաբանների, իրավաբանական ծառայություններ մատուցող անձանց, անհատ ձեռնարկատեր հաշվապահների և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատեր աուդիտորների և աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց նկատմամբ:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (15-րդ հոդվածի 3-րդ մաս, 5-րդ հոդվածի 4-րդ մաս):
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Ներկայացված առաջարկն իրագործվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագծով (6-րդ հոդվածի 4-րդ մաս և 16-րդ հոդվածի 3-րդ մաս):
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Ներդնել ուղեցույցներ խաղաղության և շահումով խաղ կազմակերպող անձանց համար՝ ապահովելու ՀՊՈՒ պահանջների կիրառությունն այն գործարքների նկատմամբ, որոնց համախառն արժեքը հավասար է սահմանված նվազագույն շեմին կամ գերազանցում է այն:</i>
Առաջարկի	Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով ձեռնարկվել են

<sup>20</sup> Հ.12-ի մի մասն է

<p>իրագործման ուղղությամբ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>հետևյալ միջոցառումները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (համատեղությամբ՝ 15-րդ հոդվածի 3-րդ մաս և 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ պարբերություն),</li> <li>- Խաղատնային գործունեության ոլորտի ՌՎՀՄՈՒ (9-րդ բաժնի 25-րդ պարբերություն):</li> </ul>
<p><b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b></p>	<p>Այս առաջարկի կապակցությամբ արդիական է մնում Առաջընթացի առաջին հաշվետվությամբ ներկայացված՝ ՌՎՀՄՈՒ-երի վերաբերյալ դիտարկումը:</p> <p>Ներկայացված առաջարկն իրագործվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագծով (16-րդ հոդվածի 3-րդ մաս՝ 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ պարբերության հետ համադրությամբ):</p>
<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ</p>	<p><i>ՆՈՖԳՏՄ-ների մասով սահմանել ուղղակի պահանջ՝ ստանալու տեղեկություններ գործարար հարաբերության նպատակի և նախատեսվող բնույթի մասին՝ անկախ գործարքը բարձր ռիսկային համարելու կամ չհամարելու հանգամանքից:</i></p>
<p>Առաջարկի իրագործման ուղղությամբ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով ձեռնարկվել են հետևյալ միջոցառումները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (15-րդ հոդվածի 7-րդ մաս),</li> <li>- Հաշվապահական և աուդիտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (10-րդ բաժնի 28-րդ պարբերություն),</li> <li>- Խաղատնային գործունեության ոլորտի ՌՎՀՄՈՒ (10-րդ բաժնի 28-րդ պարբերություն),</li> <li>- Իրավաբանական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (10-րդ բաժնի 29-րդ պարբերություն),</li> <li>- Ռիելտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (10-րդ բաժնի 28-րդ պարբերություն):</li> </ul>
<p><b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b></p>	<p>Այս առաջարկի կապակցությամբ արդիական է մնում Առաջընթացի առաջին հաշվետվությամբ ներկայացված՝ ՌՎՀՄՈՒ-երի վերաբերյալ դիտարկումը:</p> <p>Ներկայացված առաջարկն իրագործվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագծով (16-րդ հոդվածի 7-րդ մաս):</p>
<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված</p>	<p><i>ՆՈՖԳՏՄ-ների մասով ներդնել ուղեցույցներ՝ ապահովելու ՀՊՈՒ անցկացման հետևողական համակարգի առկայությունը՝ հաշվի առնելով ՆՈՖԳՏՄ-ների բնույթով, շրջանակով և էությամբ</i></p>

առաջարկ	<p><i>պայմանավորված վրանգները և խոցելիությունը, ինչպես նաև սահմանել հաճախորդի վերաբերյալ տեղեկությունների թարմացման հաճախականությունը:</i></p>
<p>Առաջարկի իրագործման ուղղությամբ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով ձեռնարկվել են հետևյալ միջոցառումները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (15-17-րդ հոդվածներ),</li> <li>- Հաշվապահական և աուդիտորական ծառայությունների ոլորտի Ռ-ՎՀՄՈՒ (10-րդ բաժնի 28-րդ և 29-րդ պարբերություններ),</li> <li>- Խաղատնային գործունեության ոլորտի Ռ-ՎՀՄՈՒ (10-րդ բաժնի 28-րդ և 29-րդ պարբերություններ),</li> <li>- Իրավաբանական ծառայությունների ոլորտի Ռ-ՎՀՄՈՒ (10-րդ բաժնի 29-րդ և 30-րդ պարբերություններ),</li> <li>- Ռիելտորական ծառայությունների ոլորտի Ռ-ՎՀՄՈՒ (10-րդ բաժնի 28-րդ և 29-րդ պարբերություններ):</li> </ul>
<p><b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b></p>	<p>Այս առաջարկի կապակցությամբ արդիական է մնում Առաջընթացի առաջին հաշվետվությամբ ներկայացված՝ Ռ-ՎՀՄՈՒ-երի վերաբերյալ դիտարկումը:</p> <p>Ներկայացված առաջարկն իրագործվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագծով (16-18-րդ հոդվածներ):</p>
<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ</p>	<p><i>Սահմանել բարձր ռիսկային հաճախորդների, գործարար հարաբերությունների կամ գործարքների հավելյալ ուսումնասիրության անցկացման, ինչպես նաև ցածր ռիսկային հաճախորդների, այդ թվում՝ ոչ ռեզիդենտ հաճախորդների նկատմամբ պարզեցված/ պարզեցված ՀՊՈՒ միջոցառումների կիրառության պահանջներ և ուղենիշներ:</i></p>
<p>Առաջարկի իրագործման ուղղությամբ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով ձեռնարկվել են հետևյալ միջոցառումները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (17-րդ հոդված),</li> <li>- Հաշվապահական և աուդիտորական ծառայությունների ոլորտի Ռ-ՎՀՄՈՒ (11-րդ և 12-րդ գլուխներ),</li> <li>- Խաղատնային գործունեության ոլորտի Ռ-ՎՀՄՈՒ (11-րդ և 12-րդ գլուխներ),</li> <li>- Իրավաբանական ծառայությունների ոլորտի Ռ-ՎՀՄՈՒ (11-րդ և 12-րդ գլուխներ),</li> <li>- Ռիելտորական ծառայությունների ոլորտի Ռ-ՎՀՄՈՒ (11-րդ և 12-</li> </ul>

	րդ գլուխներ):
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Այս առաջարկի կապակցությամբ արդիական է մնում Առաջընթացի առաջին հաշվետվությամբ ներկայացված՝ ՌՎՀՄՈՒ-երի վերաբերյալ դիտարկումը: Ներկայացված առաջարկն իրագործվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագծով (18-րդ հոդված):
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Ուղղակիորեն արգելել պարզեցված ՀՊՈՒ միջոցառումների կիրառությունը ՓԼ/ԱՖ կասկածի առկայության կամ բարձր ռիսկային սցենարների դեպքում:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (17-րդ հոդվածի 8-րդ մաս):
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Ներկայացված առաջարկն իրագործվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագծով (18-րդ հոդվածի 5-րդ մաս):
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Ներդնել ուղեցույցներ, որոնք ՆՈՖԳՏՄ-ների կողմեն պարզել, թե գործարար հարաբերություն հաստատելու ժամանակ հաճախորդի ինքնությունը պարզելիս ինչն է համարվում «ողջամիտ ժամկետ»:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով ձեռնարկվել են հետևյալ միջոցառումները. <ul style="list-style-type: none"> <li>- «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (15-րդ հոդվածի 1-ին մաս),</li> <li>- Հաշվապահական և աուդիտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (9-րդ բաժնի 27-րդ պարբերություն),</li> <li>- Խաղատնային գործունեության ոլորտի ՌՎՀՄՈՒ (9-րդ բաժնի 27-րդ պարբերություն),</li> <li>- Իրավաբանական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (9-րդ բաժնի 28-րդ պարբերություն),</li> <li>- Ռիելտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (9-րդ բաժնի</li> </ul>



	<p>27-րդ պարբերություն):</p> <p>Տես Հ.5-ի ներքո (ՖՀ-ների մասով) 3-րդ առաջարկի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:</p>
<p><b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b></p>	<p>Այս առաջարկի կապակցությամբ արդիական է մնում Առաջընթացի առաջին հաշվետվությամբ ներկայացված՝ ՌՎՀՄՈՒ-երի վերաբերյալ դիտարկումը:</p> <p>Ներկայացված առաջարկն իրագործվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագծով (16-րդ հոդվածի 1-ին մաս):</p> <p>Տես Հ.5-ի ներքո (ՖՀ-ների մասով) 3-րդ առաջարկի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:</p>
<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ</p>	<p><i>Սահմանել ուղղակի պահանջ՝ ընդունելու ռիսկերի կառավարման արդյունավետ ընթացակարգեր այն իրավիճակների վերաբերյալ, որոնց առկայության դեպքում հաճախորդին թույլատրվում է գործարար հարաբերությունից օգտվել նախքան ՀՊՈՒ ստուգումն ավարտելը:</i></p>
<p>Առաջարկի իրագործման ուղղությամբ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով ձեռնարկվել են հետևյալ միջոցառումները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (15-րդ հոդվածի 1-ին մաս),</li> <li>- Հաշվապահական և աուդիտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (9-րդ բաժնի 27-րդ պարբերություն),</li> <li>- Խաղատնային գործունեության ոլորտի ՌՎՀՄՈՒ (9-րդ բաժնի 27-րդ պարբերություն),</li> <li>- Իրավաբանական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (9-րդ բաժնի 28-րդ պարբերություն),</li> <li>- Ռիելտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (9-րդ բաժնի 27-րդ պարբերություն):</li> </ul>
<p><b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b></p>	<p>Այս առաջարկի կապակցությամբ արդիական է մնում Առաջընթացի առաջին հաշվետվությամբ ներկայացված՝ ՌՎՀՄՈՒ-երի վերաբերյալ դիտարկումը:</p> <p>Ներկայացված առաջարկն իրագործվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագծով (16-րդ հոդվածի 1-ին մաս):</p>
<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ</p>	<p><i>Սահմանել ուղղակի պահանջ՝ առկա հաճախորդների նկատմամբ էականության և ռիսկայնության հիման վրա իրականացնելու ՀՊՈՒ միջոցառումներ, ներառյալ՝ առկա հարաբերությունների պատշաճ ուսումնասիրությունների իրականացումը համապատասխան</i></p>

	<i>պարբերականությամբ:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	<p>Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով ձեռնարկվել են հետևյալ միջոցառումները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (17-րդ հոդվածի 9-ին մաս),</li> <li>- Հաշվապահական և աուդիտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (9-րդ բաժնի 25-րդ պարբերություն),</li> <li>- Խաղատնային գործունեության ոլորտի ՌՎՀՄՈՒ (9-րդ բաժնի 25-րդ պարբերություն),</li> <li>- Իրավաբանական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (9-րդ բաժնի 26-րդ պարբերություն),</li> <li>- Ռիելտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (9-րդ բաժնի 25-րդ պարբերություն):</li> </ul>
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	<p>Այս առաջարկի կապակցությամբ արդիական է մնում Առաջընթացի առաջին հաշվետվությամբ ներկայացված՝ ՌՎՀՄՈՒ-երի վերաբերյալ դիտարկումը:</p> <p>Ներկայացված առաջարկն իրագործվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագծով (18-րդ հոդվածի 6-րդ մաս):</p>
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	

<b>Հ.10 (Տեղեկատվության պահպանում)</b>	
<b>I. ՖՀ-ների մասով</b>	
<b>Գնահատական՝ հիմնականում համապատասխանում է</b>	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<p><i>Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգում կամ պարտադիր կատարման ենթակա այլ ուղենիշներում հստակեցնել «գործարքի (գործարար հարաբերության) հիմնական պայմաններ» (որոնց նկատմամբ փարածվում են տեղեկություններ պահպանելու պահանջները) հասկացությունն այն դեպքի համար, երբ գործարքը պայմանագիր չէ:</i></p>
Առաջարկի իրագործման ուղղությամբ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	<p>Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (21-րդ հոդվածի 1-ին մաս). նորովի սահմանվել է պահպանման ենթական տեղեկատվության ծավալն ու խորությունը:</p>

<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Ներկայացված առաջարկն իրագործվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագծով (22-րդ հոդվածի 1-ին մաս):
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	
<b>Հ.10 (Տեղեկատվության պահպանում) II. ՆՈՖԳՏՄ-ների մասով<sup>21</sup></b>	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	Կատարելագործել տեղեկատվության պահպանման ոլորտում ՆՈՖԳՏՄ-ներին ներկայացվող պահանջները և նրանց պրակտիկան՝ արդյունավետությունը և հիմնավորվածությունն ապահովելու, ինչպես նաև կիրառության մեջ քննության շահերին չվնասելու նպատակով, քանի որ, հաշվի առնելով գործարար հարաբերությունների և գործարքների հետ կապված տեղեկատվության կարևորությունը, իշխանություններին անհրաժեշտ է տեղեկատվության պահպանման սրանդարտների և որակի հարցերին անդրադառնալ ռիսկերը նվազեցնելու տեսակետից՝ միաժամանակ փորձելով ԻՊՄ-ներին և վերահսկող մարմիններին բավարար չափով տրամադրել ՓԼ/ԱՖ գործերի քննության մեջ օգտագործվող արժանահավասար տվյալներ:
Առաջարկի իրագործման ուղղությամբ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով ձեռնարկվել են հետևյալ միջոցառումները. <ul style="list-style-type: none"> <li>- «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի մասին օրենքի նախագիծ (21-րդ հոդված),</li> <li>- Հաշվապահական և աուդիտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (12-րդ գլուխ),</li> <li>- Խաղատնային գործունեության ոլորտի ՌՎՀՄՈՒ (13-րդ գլուխ),</li> <li>- Իրավաբանական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (13-րդ գլուխ),</li> <li>- Ռիելտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (13-րդ գլուխ):</li> </ul>
<b>Առաջընթացի առաջին</b>	Այս առաջարկի կապակցությամբ արդիական է մնում Առաջընթացի առաջին հաշվետվությամբ ներկայացված՝ ՌՎՀՄՈՒ-երի վերաբերյալ

<sup>21</sup> Հ.12-ի մի մասն է

<b>հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	դիտարկումը: Ներկայացված առաջարկն իրագործվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագծով (22-րդ հոդված):
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	

<b>Հ.13 (ԿԳՀ) I. ՖՀ-ների մասով</b>	
<b>Գնահատական՝ հիմնականում համապատասխանում է</b>	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Հաշվետվություն տրամադրող անձանց համար կազմակերպել լրացուցիչ ուսուցողական միջոցառումներ՝ ապահովելու նրանց աշխատակիցների տեղեկացվածությունն օրենքով նախատեսվող պարտավորությունների մասին: Ուսուցումը պետք է, մասնավորապես, ներառի կասկածելի գործարքների հայտնաբերման և դրանց վերաբերյալ հաշվետվությունների տրամադրման թեմաները, անդրադառնա տիպաբանություններին և միտումներին (տարբերակված ըստ գործունեության տեսակի, հատկապես ՆՈՖԳՏՄ-ների համար):</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Ներկայացված առաջարկն իրագործվել է հաշվետու անձանց համար մի շարք ուսուցողական միջոցառումների կազմակերպման միջոցով (տես՝ ընդհանուր տեղեկությունների 2.1.1 բաժնի «4. Ուսուցողական միջոցառումներ և կարողությունների զարգացում» ենթաբաժինը), որոնց թեմաները ներառել են նաև ԿԳՀ-ների հետ կապված հարցերը:
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Ֆինանսական հաստատությունների համար պարբերաբար կազմակերպվել են ուսուցողական միջոցառումներ (տես՝ ընդհանուր տեղեկությունների 2.1.2. բաժնի «5. Ուսուցողական միջոցառումներ» ենթաբաժինը), որոնց շրջանակներում ի թիվս այլ թեմաների քննարկվել են տիպաբանությունների, ՓԼ/ԱՖ ռիսկի ազդակների ու կասկածելիության չափանիշների հետ կապված հարցերը:
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	
<b>Հ.13 (ԿԳՀ)</b>	

<b>II. ՆՈՑԳՏՄ-ների մասով<sup>22</sup></b>	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	Հստակեցնել գաղտնիության և պաշտպանության մասին նորմերի անհամապատասխանությունները նորարների, փաստաբանների, իրավաբանական ծառայություններ մատուցող անձանց, անհատ ձեռնարկատերեր հաշվապահների և աուդիտորների, ինչպես նաև հաշվապահական և աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց մասով՝ բացատելու սույն հաշվետվության այլ մասերում նշված կամայականության հնարավորությունը, մասնավորապես՝ լրացուցիչ տեղեկություններ տրամադրելու պարտավորության մասով, ինչպես նաև՝ սահմանել համակարգված ստուգումների միջոցառումներ, որոնց միջոցով կփարատվեն համապատասխան օրենքների անորոշությունից բխող մտահոգությունները:
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով ձեռնարկվել են հետևյալ միջոցառումները. <ul style="list-style-type: none"> <li>- «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (4-րդ հոդվածի 2-րդ մաս),</li> <li>- «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների նախագիծ (2-րդ հոդված),</li> <li>- «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ նախագիծ (1-ին հոդված),</li> <li>- «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների նախագիծ (1-ին հոդված),</li> <li>- «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների նախագիծ (1-ին հոդված):</li> </ul>
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Ներկայացված առաջարկն իրագործվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագծով (5-րդ հոդված), «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագծով (15-րդ հոդվածի 2-րդ մաս), ինչպես նաև «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում (2-րդ հոդված), «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքում (1-ին հոդված) և «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքում (1-ին հոդված) փոփոխությունների 2012 թվականի նախագծերով:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	Հաշվետու անձանց համար կազմակերպել լրացուցիչ ուսուցողական միջոցառումներ՝ ապահովելու համար օրենսդրական պահանջների վերաբերյալ աշխատակիցների իրազեկության անհրաժեշտ մակարդակը: Ուսուցողական միջոցառումների թեմաները պետք է

<sup>22</sup> Հ.16-ի մի մասն է

	<i>ներառեն հատկապես կասկածելի գործարքների վերհանման և հաղորդման պահանջը և փոխաբանություններն ու միտումները (առանձնացված՝ ըստ գործունեության տեսակների, հատկապես՝ ՆՈՖԳՏՄ-ների մասով):</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Ներկայացված առաջարկն իրագործվել է հաշվետու անձանց համար մի շարք ուսուցողական միջոցառումների կազմակերպման միջոցով (տես՝ ընդհանուր տեղեկությունների 2.1.1 բաժնի «4. Ուսուցողական միջոցառումներ և կարողությունների զարգացում» ենթաբաժինը):
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	ՆՈՖԳՏՄ-ների համար պարբերաբար կազմակերպվել են ուսուցողական միջոցառումներ (տես՝ ընդհանուր տեղեկությունների 2.1.2. բաժնի «5. Ուսուցողական միջոցառումներ» ենթաբաժինը), որոնց շրջանակներում ի թիվս այլ թեմաների քննարկվել են տիպաբանությունների, ՓԼ/ԱՖ ռիսկի ազդակների ու կասկածելիության չափանիշների հետ կապված հարցերը:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Ներդնել աշխատակիցների նախնական ստուգման, այդ թվում՝ «պատշաճության և համապատասխանության» պահանջներ:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Ներդրվել են աշխատակիցների նախնական ստուգման՝ «պատշաճության և համապատասխանության» պահանջներ. (ա) խաղատների, շահումով խաղ և վիճակախաղ կազմակերպվող անձանց ղեկավարների, օպերատորների, մասնակիցների և իրական շահառուների համար («Շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների նախագիծ (2-րդ հոդված), Խաղատնային գործունեության ոլորտի Ռ-ՎՀՄՈՒ (21-րդ գլուխ)), (բ) հաշվետու այլ անձանց անձնակազմի համար՝ վերջիններիս ներքին իրավական ակտերի մակարդակով («ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի նախագիծ (22-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ պարբերություն)):
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Այս առաջարկի կապակցությամբ արդիական է մնում Առաջընթացի առաջին հաշվետվությամբ ներկայացված՝ Ռ-ՎՀՄՈՒ-երի վերաբերյալ դիտարկումը: Ներկայացված առաջարկն իրագործվել է հետևյալ կերպ. - «Խաղատնային գործունեության մասին» ՀՀ օրենքում (3-րդ հոդված) և «Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենքում (2-րդ հոդված) փոփոխությունների 2012 թվականի նախագծերով՝ խաղատների, շահումով խաղ և վիճակախաղ կազմակերպվող անձանց

	<p>ղեկավարների, օպերատորների, մասնակիցների և իրական շահառուների համար,</p> <p>- «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագծով (23-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ պարբերություն)՝ հաշվետու այլ անձանց համապատասխան անձնակազմի համար:</p>
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<p>Հաստատել թանկարժեք քարերի կամ մետաղների դիլերների կողմից հաշվետվությունների տրամադրման կարգը և կասկածելի գործարքների համապատասխան տիպաբանությունները՝ ՆՈՖԳՏՄ-ների համար:</p>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	<p>Կենտրոնական բանկի խորհրդի՝ 2010թ. փետրվարի 16-ի որոշմամբ սահմանվել է թանկարժեք մետաղների և քարերի դիլերների կողմից հաշվետվությունների տրամադրման կարգը:</p> <p>ՓԳՀ-ի ընդունումից հետո ՖԴԿ-ն հրապարակել է ևս 4 տիպաբանություն, որոնք, մասնավորապես, վերաբերում են կեղծ վճարային քարտերի միջոցով ՓԼ սխեմային, անշարժ գույքի առքուվաճառքի գործարքներին, ապահովագրական գործարքներին և ապրանքների՝ անդրսահմանային շարժին (հրապարակված են ՖԴԿ-ի ինտերնետային կայքում):</p> <p>Հաշվետու այլ անձանց հետ մեկտեղ, նշված տիպաբանությունները նախատեսված են ՆՈՖԳՏՄ-ների համար, ինչպիսիք են փաստաբանները, իրավական ծառայություններ մատուցող ընկերությունները, անհատ ձեռնարկատեր հաշվապահները և աուդիտորները, հաշվապահական և աուդիտորական ընկերությունները, ռիելտորները, նոտարները և Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն:</p>
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	<p>ՖԴԿ-ն հրապարակել է կեղծ և շինծու գործարքների (պայմանագրերի) միջոցով փողերի լվացման տիպաբանություն, որը վերաբերում է նաև ՆՈՖԳՏՄ-ներին:</p>
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<p>Վերահսկողության, ուսուցման և այլ միջոցներով իրականացնել իրազեկության բարձրացման ծրագրեր՝ ապահովելու ԿԳՀ-ներ և ՆՇԳԳՀ-ներ տրամադրելու պարտավորությունների հստակ տարբերակումը, մասնավորապես՝ հասկանալի դարձնելով ԿԳՀ տրամադրելու պարտավորության կիրառելիությունն անկախ նվազագույն շեմից, գործարք կատարելու փորձի և հարկային խնդիրների առնչությամբ կասկածելի համարվող գործարքների վերաբերյալ նույնպես ԿԳՀ տրամադրելու պարտավորությունը:</p>

Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Ներկայացված առաջարկն իրագործվել է հաշվետու անձանց համար մի շարք ուսուցողական միջոցառումների կազմակերպման միջոցով (տես՝ ընդհանուր տեղեկությունների 2.1.1 բաժնի «4. Ուսուցողական միջոցառումներ և կարողությունների զարգացում» ենթաբաժինը): Տես նաև ընդհանուր տեղեկությունների 2.1.1 բաժնի «ՎՋԵԲ-ի տեխնիկական օժանդակության ծրագիր» ենթաբաժինը:
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	ՆՈՖԳՏՄ-ների համար պարբերաբար կազմակերպվել են ուսուցողական միջոցառումներ (տես՝ ընդհանուր տեղեկությունների 2.1.2. բաժնի «5. Ուսուցողական միջոցառումներ» ենթաբաժինը), որոնց շրջանակներում ի թիվս այլ թեմաների քննարկվել են կասկածելի գործարքների մասին հաշվետվությունների, ինչպես նաև նվազագույն շեմը գերազանցող գործարքների մասին հաշվետվությունների տրամադրման հետ կապված հարցերը:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Նպաստել ՆՈՖԳՏՄ-ների, այդ թվում՝ համապատասխանության պատասխանատուների ուսուցմանը՝ կազմակերպելով ուղղակի կամ հավաստագրված դասընթացներ համապատասխան ծառայություններ մատուցողների, այդ թվում՝ ԻԿԿ-ների միջոցով, ինչպես նաև ապահովել ընթացիկ ուսուցման պահանջների արտացոլումն օրենքում, կանոններում կամ կանոնակարգերում</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Ներկայացված առաջարկն իրագործվել է հաշվետու անձանց համար մի շարք ուսուցողական միջոցառումների կազմակերպման միջոցով (տես՝ ընդհանուր տեղեկությունների 2.1.1 բաժնի «4. Ուսուցողական միջոցառումներ և կարողությունների զարգացում» ենթաբաժինը): Տես նաև ընդհանուր տեղեկությունների 2.1.1 բաժնի «ՎՋԵԲ-ի տեխնիկական օժանդակության ծրագիր» ենթաբաժինը:
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Ներկայացված առաջարկն իրագործվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագծով (11-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ պարբերություն): ՆՈՖԳՏՄ-ների համար պարբերաբար կազմակերպվել են ուսուցողական միջոցառումներ (տես՝ ընդհանուր տեղեկությունների 2.1.2. բաժնի «5. Ուսուցողական միջոցառումներ» ենթաբաժինը):
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	

<b>ՀՀ. II (ԱՖ քրեականացում)</b>	
<b>Գնահատական՝ մասամբ համապատասխանում է</b>	
ՄԱՆԻՎԱԼ-ի	<i>Փոփոխել ԲՕ-ի 217-րդ հոդվածով նախատեսված՝ «սահարեկչության»</i>



հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>սահմանումը, որպեսզի այն (1) ներառի «Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» կոնվենցիայի հավելվածում թվարկված ինը համաձայնագրերում և արձանագրություններով նախատեսված ահաբեկչության բոլոր հանցագործությունները,</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել է ՔՕ-ում փոփոխության նախագիծ (3-րդ հոդված):
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Ներկայացված առաջարկն իրագործվել է ՔՕ-ում փոփոխությունների 2012 թվականի նախագծով (7-րդ հոդված):
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>և (2) ներառի հղում «միջազգային կազմակերպություններ» հասկացությանը՝ ինչպես պահանջվում է «Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» կոնվենցիայի 2-րդ հոդվածով:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել է ՔՕ-ում փոփոխության նախագիծ (3-րդ հոդված):
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Ներկայացված առաջարկն իրագործվել է ՔՕ-ում փոփոխությունների 2012 թվականի նախագծով (7-րդ հոդված):
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Փոփոխել ՔՕ-ի 217.1-րդ հոդվածը, որպեսզի դրա նորմը տարածվի բոլոր այն իրավիճակների նկատմամբ, որոնցում գույքը կամ ֆինանսական միջոցները տրամադրվում կամ հավաքագրվում են անհատ ահաբեկչի կամ ահաբեկչական կազմակերպության կողմից օգտագործման համար ընդհանրապես, երբ բացակայում է ֆինանսական միջոցները կամ գույքն ահաբեկչության կոնկրետ</i>

	<i>գործողություն կատարելու մեջ օգտագործելու մտադրությունը կամ իմացությունը:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել է ՔՕ-ում փոփոխության նախագիծ (4-րդ հոդված):
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Ներկայացված առաջարկն իրագործվել է ՔՕ-ում փոփոխությունների 2012 թվականի նախագծով (8-րդ հոդված):
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Ներդաշնակեցնել ՔՕ-ի 217.1-րդ հոդվածի 1-ին մասում և 3-րդ մասում օգտագործված եզրույթները («ֆինանսական միջոցներ» և «ահաբեկչության ֆինանսավորման առարկա»), որպեսզի հստակեցվի, որ ՔՕ-ի 217.1-րդ հոդվածը տարածվում է «Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» կոնվենցիայով նախատեսված բոլոր «միջոցների» նկատմամբ:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել է ՔՕ-ում փոփոխության նախագիծ (1-ին հոդվածի 2-րդ մաս):
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակված փոփոխությունների նախագծի համապատասխան հոդվածները վերախմբագրվել են, տես՝ ՔՕ-ում փոփոխությունների 2012 թվականի նախագծի 3-րդ հոդվածի 4-րդ մասը և 8-րդ հոդվածի 3-րդ մասը:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Կատարել օրենսդրական փոփոխություններ՝ նախատեսելու իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը:</i>
Առաջարկի իրագործման	Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության վերաբերյալ առաջարկը խորությամբ քննարկվել է

<p>ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>Միջգերատեսչական հանձնաժողովի՝ մարտի 26-ին կայացած նիստի և Գլխավոր դատախազության հետ կազմակերպված լրացուցիչ քննարկումների ընթացքում (ԻՊՄ-ների և իրավաբանական ֆակուլտետների մասնագետների մասնակցությամբ): Արտահայտված կարծիքների բացարձակ համընկնմամբ՝ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտը հակասում է ՀՀ սահմանադրությամբ ամրագրված անմեղության կանխավարկածին, որն իր հերթին պահանջում է «<i>mens rea</i>» սկզբունքի կիրառություն: Մասնավորապես, Սահմանադրության 21-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործության մեջ մեղադրվող անձը համարվում է անմեղ մինչ օրենքով սահմանված կարգով օրինական ուժ ստացած դատավճռի համաձայն մեղավոր ճանաչվելը: Բացի այդ, ԲՕ-ի (23-րդ հոդված) համաձայն՝ քրեական պատասխանատվության կարող են ենթարկվել միայն ֆիզիկական անձինք (քրեական պատժի բնույթը ենթադրում է կիրառություն անհատի նկատմամբ՝ «<i>nullum crimen sine culpa</i>» սկզբունք (չկա հանցանք առանց մեղքի)):</p> <p>Պայմանավորված ՀՀ օրենսդրությամբ ամրագրված վերոնշյալ սկզբունքների առկայությամբ՝ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն ենթադրող փոփոխությունները մերժվել են, իսկ պաշտոնական շրջանառությունը՝ կասեցվել:</p> <p>Փոխարենը, ինչպես գործող «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքը (28-րդ հոդված. օրենքը ներկայացված է ՓԳՀ-ի հավելվածում), այնպես էլ դրա նախագիծը (30-րդ հոդված) իրավաբանական անձանց՝ ՓԼ/ԱՖ ներգրավվածության դեպքում նախատեսում են վարչական պատասխանատվություն:</p>
<p><b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b></p>	<p>Այս առաջարկի կապակցությամբ արդիական է մնում Առաջընթացի առաջին հաշվետվությամբ ներկայացված՝ Հայաստանի օրենսդրության հիմնարար սկզբունքների վերաբերյալ դիտարկումը: ՓԼ/ԱՖ-ի համար իրավաբանական անձանց վարչական պատասխանատվությունը սահմանող հոդվածը վերախմբագրվել է, տես՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագծի 31-րդ հոդվածը:</p>
<p>Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ</p>	

**ՀՀ.IV (ԿԳՀ)**  
**I. ՖՀ-ների մասով**

<b>Գնահատական՝ հիմնականում համապատասխանում է</b>	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Իշխանությունները պետք է ընդունեն ուղեցույցներ սառեցման պարտավորությունների և ԱՖ հետ կապված փոփոխությունների վերաբերյալ:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	«ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագծի հիման վրա ՖԴԿ-ն մշակել է սառեցման պարտավորության վերաբերյալ պաշտոնական ուղեցույցի նախագիծ: Հաշվի առնելով այն փաստը, որ նոր օրենքի նախագծում սառեցման պարտավորությունը ենթարկվել է զգալի փոփոխության, ուղեցույցը նպատակահարմար է հրապարակել «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումից և օրինական ուժ ստանալուց հետո միայն: Բացի այդ, մշակվել և համապատասխան գերատեսչությունների կարծիքին է ուղարկվել ԱՖ վերաբերյալ տիպաբանության նախագիծ, ինչը նախատեսվում է հրապարակել առաջիկա 2-3 ամիսների ընթացքում:
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սառեցման վերաբերյալ դրույթները սահմանափակում են քաղաքացիների իրավունքները, որոշվել է սառեցմանն առնչվող բոլոր հարցերը կարգավորել «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով: Ըստ այդմ, ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակված փոփոխությունների նախագծի համապատասխան հոդվածը վերախմբագրվել է, տես՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագծի 28-րդ հոդվածը: Ցանկերից հանվելու համար դիմելու վերաբերյալ ուղեցույցը կհրապարակվի «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագիծը հաստատվելուց և ուժի մեջ մտնելուց հետո:
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	
<b>ՀՀ. IV (ԿԳՀ)</b>	
<b>I. ՆՈՖԳՏՄ-ների մասով</b>	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Հաշվետու անձանց համար կազմակերպել լրացուցիչ ուսուցողական միջոցառումներ՝ ապահովելու համար օրենսդրական պահանջների վերաբերյալ աշխատակիցների իրազեկության անհրաժեշտ մակարդակը: Ուսուցողական միջոցառումների թեմաները պետք է ներառեն հարկապես կասկածելի գործարքների վերհանման և հաղորդման պահանջը և փոփոխություններն ու միտումները (առանձնացված՝ ըստ գործունեության տեսակների, հարկապես՝</i>

	<i>ՆՈՖԳՏՄ-ների մասով):</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Ինչպես նշվել է ընդհանուր տեղեկությունների 2.1.1 բաժնի «4. Ուսուցողական միջոցառումներ և կարողությունների զարգացում» ենթաբաժնում, ՆՈՖԳՏՄ-ների համար ՖԴԿ-ն կազմակերպել է մի շարք քննարկումներ և ուսուցողական միջոցառումներ, որոնց թեմաները ներառել են առանձին ոլորտներին հատուկ կասկածելիության չափանիշները, կասկածելի գործարքների վերհանման մեթոդները և տիպաբանությունները:
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	ՆՈՖԳՏՄ-ների համար պարբերաբար կազմակերպվել են ուսուցողական միջոցառումներ (տես՝ ընդհանուր տեղեկությունների 2.1.2. բաժնի «5. Ուսուցողական միջոցառումներ» ենթաբաժնի), որոնց շրջանակներում ի թիվս այլ թեմաների քննարկվել են ԿԳՀ-ների, տիպաբանությունների, ՓԼ/ԱՖ ռիսկի ազդակների ու կասկածելիության չափանիշների հետ կապված հարցերը:
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	

### 2.3. Այլ հանձնարարականներ

ՖԱԹՖ-ի հետևյալ հանձնարարականները նախորդ հաշվետվությամբ գնահատվել են որպես «մասամբ համապատասխանում է» (ՄՀ) կամ «չի համապատասխանում» (ՀՀ) (Հավելված 1): Յուրաքանչյուր հանձնարարականի գծով նշեք, թե առկայությամբ դեպքում՝ ինչ միջոցառումներ են ձեռնարկվել ներկայիս իրավիճակը բարելավելու և ՓԳՀ-ով ներկայացված առաջարկներն իրագործելու ուղղությամբ:

<b>Հ.3 (Բռնագրավում և կանխարգելիչ միջոցներ)</b>	
<b>Գնահատական՝ մասամբ համապատասխանում է</b>	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>ՔՕ-ի 55-րդ հոդվածի 3-րդ մասով չնախատեսված բոլոր նախորդող հանցագործությունների վերաբերյալ պետք է սահմանել համապատասխան նորմեր, որոնք հնարավորություն կընձեռեն բռնագրավել հանցագործությունների կատարման արդյունքում ստացված եկամուտները կամ հանցագործությունների կատարման մեջ օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքները, ինչպես նաև այդ գույքին համարժեք այլ՝ օրինական ծագում ունեցող գույքը:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ	Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել է ՔՕ-ում փոփոխության նախագիծ (1-ին, 2-րդ, 8-րդ և 9-րդ հոդվածներ):

28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակված փոփոխությունների նախագծի համապատասխան հոդվածը վերախմբագրվել է, տես՝ ՔՕ-ում փոփոխությունների 2012 թվականի նախագծի 3-րդ հոդվածը:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>ՔՕ-ի 55-րդ հոդվածի 3-րդ մասը պետք է փոփոխել՝ թույլատրելու գույքի բռնագրավումն անկախ դրա՝ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել է ՔՕ-ում փոփոխության նախագիծ (1-ին հոդվածի 1-ին մաս):
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Ներկայացված առաջարկն իրագործվել է ՔՕ-ում փոփոխությունների 2012 թվականի նախագծով (3-րդ հոդված):
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Միջոցներ ձեռնարկել՝ նախատեսելու ՓԼ, ԱՖ կամ նախորդող հանցագործությունների կատարման արդյունքում ստացված եկամուտներին կամ դրանց կատարման մեջ օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքներին համարժեք օրինական ծագում ունեցող գույքի առգրավման հնարավորությունը:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել է ՔՕ-ում փոփոխության նախագիծ (3-րդ հոդված):
<b>Առաջընթացի առաջին</b>	Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակված փոփոխությունների նախագծի համապատասխան հոդվածները

<b>հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	<p>վերախմբագրվել են, տես՝ ՔԴՕ-ում փոփոխությունների 2012 թվականի նախագծի 4-րդ, 5-րդ և 6-րդ հոդվածները:</p>
<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ</p>	<p>ԲԳՕ-ի 10-րդ հոդվածը ներդաշնակեցնել «Օպերատիվ-հեղափոխական գործունեության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ ՕՀԳՕ) 29-րդ հոդվածին, ինչպես նաև՝ ԲԳՕ-ի 13.1-րդ հոդվածը՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածին, որպեսզի ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված փվյալների հասանելիության վերաբերյալ դրանք նախատեսեն միևնույն պայմանները, և որպեսզի ԻՊՄ-ները հնարավորություն ունենան արդյունավետորեն հայտնաբերել և հետապնդել այն գույքը, որը ենթակա է կամ կարող է ենթակա դառնալ բռնագրավման կամ կասկածվում է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտ լինելու մեջ, այդ թվում՝ նաև այն դեպքերում, որոնցում դեռևս չկա կոնկրետ «կասկածյալ»:</p>
<p>Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>Տես Հ.4-ի ներքո 1-ին առաջարկի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:</p>
<p><b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b></p>	<p>Տես Հ.4-ի ներքո 1-ին առաջարկի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:</p>
<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ</p>	<p>Իրավապահ մարմինները պետք է ՓԼ և ԱՖ հետաքննությունների/ նախաքննությունների համատեքստում ապահովեն կանխարգելիչ միջոցների արդյունավետ իրագործումն այն գույքի նկատմամբ, որը կարող է ենթակա դառնալ բռնագրավման:</p>
<p>Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել է ՔՕ-ում փոփոխության նախագիծ (3-րդ հոդված): ՓԼ գծով իրականացված քննությունների արդյունքում կիրառված կանխարգելիչ միջոցների վերաբերյալ վիճակագրությունը ներկայացված է ընդհանուր տեղեկությունների 2.1.1 բաժնի «Առաջընթաց քննությունների, քրեական հետապնդման և</p>

	դատավարության ոլորտում» ենթաբաժնում:
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակված փոփոխությունների նախագծի համապատասխան հոդվածը վերախմբագրվել է, տես՝ ՔԴՕ-ում փոփոխությունների 2012 թվականի նախագծի 6-րդ հոդվածը: Այս առաջարկի իրականացման արդյունավետությունն արտացոլված է սույն հաշվետվության 6-րդ բաժնի վիճակագրական աղյուսակներում:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>«Հշխանությունները պետք է վերանայն բռնագրավման նկատմամբ իրենց մոտեցումը՝ նպատակ հետապնդելով ավելացնել բռնագրավման գործողությունների թիվը և խրախուսել բռնագրավման մասին դրույթների առավել հաճախակի կիրառությունը:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	ՔՕ-ում փոփոխության նախագիծը (1-ին, 2-րդ, 8-րդ և 9-րդ հոդվածներ) նախատեսում է բռնագրավման (որպես պատժամիջոց) պարտադիր կիրառություն ՓԼ/ԱՖ կամ նախորդող հանցագործությունների դեպքում: ՓԼ գծով կայացված մեղադրական դատավճիռների արդյունքում կիրառված բռնագրավումների վերաբերյալ վիճակագրությունը ներկայացված է ընդհանուր տեղեկությունների 2.1.1 բաժնի «Առաջընթաց քննությունների, քրեական հետապնդման և դատավարության ոլորտում» ենթաբաժնում:
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակված փոփոխությունների նախագծի համապատասխան հոդվածները վերախմբագրվել են՝ բռնագրավումը սահմանելով որպես ոչ պատժամիջոց, տես՝ ՔՕ-ում փոփոխությունների 2012 թվականի նախագծի 3-րդ հոդվածը: Այս առաջարկի իրականացման արդյունավետությունն արտացոլված է սույն հաշվետվության 6-րդ բաժնի վիճակագրական աղյուսակներում: Հարկ է նշել, որ գործող օրենսդրությունը նույնպես թույլ է տալիս բռնագրավման վերաբերյալ դրույթների կանոնավոր կիրառությունը:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Իշխանությունները պետք է դիտարկեն քրեաիրավական դաշտի գնահատման նպատակահարմարությունը՝ պարզելու համար, թե արդյոք ճիշտ կլինի ներդնել քաղաքացիական բռնագրավման ինստիտուտ կամ գույքի այնպիսի բռնագրավման ինստիտուտ, որի դեպքում իրավախախտն է պարտավոր ապացուցել գույքի օրինական ծագումը, կամ՝ քրեական կազմակերպությունների գույքի բռնագրավման ինստիտուտը՝ չսահմանափակվելով միայն այն կազմակերպություններով, որոնք ուղղակիորեն կապված են</i>



	<i>մեղադրական դատավճռի հիմքում ընկած հանցագործությունների հետք:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Ներկայացված առաջարկը քննարկվել է Միջգերատեսչական հանձնաժողովի՝ 2009թ. հոկտեմբերի 16-ին կայացած նիստում, որի ընթացքում արտահայտված կարծիքների համընկնմամբ՝ քաղաքացիական օրենսդրության ճանապարհով առգրավումը կամ ապացուցման պարտականության տեղափոխմամբ բռնագրավումը հակասում է ազգային օրենսդրության հիմնարար սկզբունքներին և սովորույթներին (առգրավումն իրականացվում է կատարված հանցագործության դեպքում, ինչը, իր հերթին, պահանջում է քրեական օրենսդրությամբ նախատեսված քայլեր): Այսպիսով՝ իշխանությունները ձեռնպահ մնացին այս ուղղությամբ որևէ նախաձեռնությունների առաջադրումից:
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Հետագա փոփոխություններ չկան:
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	

#### **Հ.4 (Գաղտնիություն)**

##### **Գնահատական՝ մասամբ համապատասխանում է**

ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>ԲԳՕ-ի 10-րդ հոդվածը ներդաշնակեցնել ՕՀԳՕ-ի 29-րդ հոդվածին, ինչպես նաև՝ ԲԳՕ-ի 13.1-րդ հոդվածը՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածին, որպեսզի ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տվյալների հասանելիության վերաբերյալ դրանք նախատեսեն միևնույն պայմանները:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	ԲԳՕ-ում փոփոխությունների նախագծի 3-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններին հասանելիություն ապահովելու իմաստով ԲԳՕ-ի 13.1-րդ հոդվածը ներդաշնակեցվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածին: Ինչ վերաբերում է ԲԳՕ-ի 10-րդ հոդվածի (ինչպես նաև ՔԴՕ-ի 172-րդ հոդվածի) և ՕՀԳՕ-ի 29-րդ հոդվածի միջև առկա կապին, դրանց

կիրառության պայմաններում որևէ իրավական հակասություն առկա չէ, քանի որ դրանք կարգավորում են բանկային գաղտնիքի հասանելիության երկու առանձին ճանապարհներ (մեխանիզմներ): Այսպես՝ ԲԳՕ-ի 10-րդ հոդվածը կարգավորում է բանկային գաղտնիքի հասանելիությունը քրեական հետապնդում իրականացնող մարմիններին, իսկ ՕՀԳՕ-ի 29-րդ հոդվածը կարգավորում է ֆինանսական տվյալների (ներառյալ՝ բանկային գաղտնիքը) հասանելիությունը օպերատիվ հետախուզական աշխատանքներ իրականացնող մարմիններին: Օրենսդրությամբ տրված սահմանմամբ՝ ԻՊՄ-ների վերոնշյալ երկու տեսակները տարանջատված են: Մասնավորապես, ՔԴՕ-ի 6-րդ հոդվածի 22-րդ մասի համաձայն՝ քրեական հետապնդում իրականացնող մարմիններն են դատախազը, քննիչը և հետաքննության մարմինը (բայց, ոչ՝ օպերատիվ հետախուզական աշխատանքներ իրականացնող մարմինները): Այսպիսով, ՕՀԳՕ-ի ներքո օպերատիվ հետախուզական աշխատանքներ իրականացնող մարմինները սահմանափակված չեն միայն կասկածյալի կամ մեղադրյալի գծով բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման հնարավորությամբ, քանի որ վերջիններիս կողմից հատուկ գործողությունները սովորաբար իրականացվում են մինչև քրեական գործի (քննության) հարուցումը և նպատակ ունեն ժամանակին բացահայտել հանցավոր արարքի (հանցագործների) վերաբերյալ մանրամասները և հնարավորության դեպքում՝ կանխել հանցագործությունը: Մյուս կողմից՝ քրեական հետապնդում իրականացնող մարմինները ղեկավարվում են ՔԴՕ-ով (172-րդ հոդված) և ԲԳՕ-ով (10-րդ հոդված), որոնց համաձայն՝ բանկային գաղտնիքը տրամադրվում է միայն կասկածյալի կամ մեղադրյալի վերաբերյալ, քանի որ քրեական հետապնդում իրականացնող մարմիններն իրենց աշխատանքներն իրականացնում են հարուցված քրեական գործերի շրջանակներում (երբ ներգրավված անձը բացառապես համարվում է կամ կասկածյալ կամ մեղադրյալ) և քննության կամ դատավարության նպատակով հավաքագրում են օրինական ապացույցներ:

Վերը շարադրված մեկնաբանությունն արդեն իսկ ունի գործնական կիրառություն. դատարանը երկու դեպքով բավարարել է օպերատիվ հետախուզական աշխատանքներ իրականացնող մարմնի (ԱԱԾ)՝ կասկածյալ կամ մեղադրյալ չհամարվող անձանց վերաբերյալ ՕՀԳՕ-ի ներքո բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների ձեռք բերման միջնորդությունը:

Այսպիսով, գոյություն ունեն քրեական հետապնդում իրականացնող

	մարմինների կողմից բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման երկու տարբեր ճանապարհներ (մեխանիզմներ). առաջինը՝ ԲԴՕ-ով (172-րդ հոդված) և ԲԳՕ-ով (10-րդ հոդված) սահմանված հնարավորությունն է, իսկ երկրորդը՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով (13-րդ հոդված) և ԲԳՕ-ով (13.1-րդ հոդված) սահմանված հնարավորությունն է՝ ՖԴԿ-ի միջնորդությամբ <sup>23</sup> :
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	ԲԳՕ-ի 13.1-րդ հոդվածի և «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի ներդաշնակեցմանն ուղղված հետագա փոփոխությունների համար տես՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագծի 1-ին հոդվածը: Գործող «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն, ՖԴԿ-ն 2010թ. հոկտեմբերից մինչև 2012թ. սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում իրավապահ մարմինների հարցման հիման վրա բանկային գաղտնիք կազմող տեղեկատվություն է տրամադրել 481 անձի վերաբերյալ (202 իրավաբանական անձ և 279 ֆիզիկական անձ):
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Ապահովել, որպեսզի ֆինանսական գաղտնիք համարվող տեղեկություններ ստանալու՝ ԻՊՄ-ների (հատկապես՝ ԱԱԾ-ի) իրավասությունը պայմանավորված չլինի «կասկածյալի» կամ «մեղադրյալի» առկայությամբ, քանի որ այդ պայմանը վնասում է ԱԱԾ-ի՝ որպես ՓԼ/ԱՖ գործեր քննելու լիազորությամբ օժտված մարմնի կողմից իր գործառույթների պատշաճ կատարմանը, ինչպես նաև արգելակում նման տեղեկությունների ստացումն այն գործերով, որոնք վերաբերում են իրավաբանական անձանց, կամ երբ տեղեկությունները վերաբերում են «կասկածյալից» կամ «մեղադրյալից» զատ այլ անձի:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Տես նախորդ առաջարկի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից</b>	Տես նախորդ առաջարկի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:

<sup>23</sup> 2009թ. հոկտեմբերից մինչև 2010թ. սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում, իրապահ մարմինների հարցումների հիման վրա ՖԴԿ-ն թվով 132 անձի (52 ֆիզիկական անձ և 80 իրավաբանական անձ) վերաբերյալ տրամադրել է բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ:

<b>հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Փոփոխել ԲԳՕ-ն՝ ՖՀ-ներին թույլատրելով ֆինանսական գաղտնիքի համարվող տեղեկություններ փոխանակել այն դեպքերում, երբ դա պահանջվում է Հ.7-ով, Հ.9-ով կամ ՀՀ.VII-ով:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել է ԲԳՕ-ում (4-րդ հոդված) փոփոխության նախագիծ:
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Ներկայացված առաջարկն իրագործվել է ԲԳՕ-ում փոփոխությունների 2012 թվականի նախագծով (2-րդ հոդված):
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	

<b>Հ.9 (Երրորդ անձինք և ներկայացված հարաբերություններ)</b>	
<b>Գնահատական՝ մասամբ համապատասխանում է</b>	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Փոփոխել Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգը՝ սահմանելով որոշակի պարտավորություններ միջնորդների կամ այլ երրորդ անձանց ներգրավող ՖՀ-ների պարտավորությունը՝ երրորդ անձից անմիջապես ստանալու ՀՊՈԻ գործընթացի որոշ տարրերի առնչվող անհրաժեշտ տեղեկությունները (չափորոշիչներ 5.3-5.6):</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում (15-րդ հոդվածի 8-րդ մաս) փոփոխության նախագիծ:
<b>Առաջընթացի առաջին</b>	Ներկայացված առաջարկն իրագործվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագծով (16-րդ հոդվածի 8-րդ

<b>հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	մաս):
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Փոփոխել Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգը՝ սահմանելով որոշակի պարտավորություններ միջնորդների կամ այլ երրորդ անձանց ներգրավող ՖՀ-ների պարտավորությունը՝ համարժեք քայլեր ձեռնարկելու՝ համոզվելու համար, որ նույնականացման տվյալների և ՀՊՈԻ պահանջներին առնչվող այլ էական փաստաթղթերի կրկնօրինակները պահանջի դեպքում անհապաղ կտրամադրվեն երրորդ անձի կողմից:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում (15-րդ հոդվածի 8-րդ մաս) փոփոխության նախագիծ:
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Ներկայացված առաջարկն իրագործվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագծով (16-րդ հոդվածի 8-րդ մաս):
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Փոփոխել Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգը՝ սահմանելով որոշակի պարտավորություններ միջնորդների կամ այլ երրորդ անձանց ներգրավող ՖՀ-ների պարտավորությունը՝ հավաստիանալու, որ երրորդ անձի գործունեությունը կարգավորվում է և վերահսկվում (Հ.23-ին, Հ.24-ին և Հ.29-ին համապատասխան), և որ այն ունի Հ.5-ով և Հ.10-ով նախատեսված ՀՊՈԻ պահանջները կատարելու համար անհրաժեշտ մեխանիզմներ:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում (15-րդ հոդվածի 8-րդ մաս) փոփոխության նախագիծ:
<b>Առաջընթացի առաջին</b>	Ներկայացված առաջարկն իրագործվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագծով (16-րդ հոդվածի 8-րդ

<b>հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	մաս):
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Սահմանել «մասնագիտացված միջնորդների կամ երրորդ անձանց ներկայացնելու իրավասություն ունեցող անձանց» հասկացությունն այնպես, որ դա համահունչ լինի ՖԱԹՖ-ի ստանդարտին, մասնավորապես՝ պահանջը սահմանափակելով միայն այն «երրորդ անձանցով», որոնք ՖՀ-ներ են կամ ՆՈՖԳՏՄ-ներ՝ սահմանման մեջ չներառելով նաև «երրորդ անձանց ներկայացնելու իրավասություն ունեցող անձանց»:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում (3-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ պարբերություն) փոփոխության նախագիծ:
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակված փոփոխությունների նախագծի համապատասխան հոդվածները վերախմբագրվել են, տես՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագիծը (3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ պարբերություններ, 16-րդ հոդվածի 8-րդ մաս):
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>ՀՊՈԻ գործընթացի իրականացման համար ներկայացվող պայմանները բավարարող երրորդ անձի գտնվելու վայրի երկրների թույլատրելի ցանկը պարզելիս իրավասու մարմինները պետք է հաշվի առնեն առկա տեղեկություններն այն մասին, թե արդյոք այդ երկրները համարժեքորեն կիրառում են ՖԱԹՖ-ի հանձնարարականները: Սահմանել պահանջ, որի համաձայն հաճախորդի նույնականացման և ստուգման վերջնական պատասխանատվությունը շարունակում է կրել երրորդ անձի միջոցով գործող ՖՀ-ները:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում (15-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ պարբերություն) փոփոխության նախագիծ:

<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Ներկայացված առաջարկն իրագործվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագծով (16-րդ հոդվածի 8-րդ մաս):
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	

<b>Հ.12 (ՆՈՖԳՏՄ-ներ՝ Հ.6, Հ.8-11)</b>	
<b>Գնահատական՝ չի համապատասխանում</b>	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Օրենքով, կանոններով կամ պարտադիր կարարման ենթակա այլ միջոցներով նախատեսվել գործարար հարաբերություն հաստատելու ժամանակ և հարաբերության ողջ ընթացքում ՀՊՈԻ պահանջների կիրառությունը քաղաքական ազդեցություն ունեցող անձանց (այսուհետ՝ ՔԱՈԻԱ) նկատմամբ:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	<p>Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով ձեռնարկվել են հետևյալ միջոցառումները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (3-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ պարբերություն, 17-րդ հոդվածի 2-րդ մաս),</li> <li>- Հաշվապահական և աուդիտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈԻ (3-րդ և 11-րդ գլուխներ),</li> <li>- Խաղատնային գործունեության ոլորտի ՌՎՀՄՈԻ (3-րդ և 11-րդ գլուխներ),</li> <li>- Իրավաբանական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈԻ (3-րդ և 11-րդ գլուխներ),</li> <li>- Ռիելտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈԻ (3-րդ և 11-րդ գլուխներ):</li> </ul>
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Այս առաջարկի կապակցությամբ արդիական է մնում Առաջընթացի առաջին հաշվետվությամբ ներկայացված՝ ՌՎՀՄՈԻ-երի վերաբերյալ դիտարկումը: Ներկայացված առաջարկն իրագործվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագծով (3-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ պարբերություն և 18-րդ հոդվածի 2-րդ մաս):
ՄԱՆԻՎԱԼ-ի	<i>Սահմանել պահանջներ՝ ապահովելու բարդ կամ անսովոր մեծ</i>

<p>հաշվետվությամբ ներկայացված առաջարկ</p>	<p>գործարքների, ինչպես նաև ակնհայտ տնտեսական կամ այլ իրավաչափ նպատակներ չհետապնդող՝ անսովոր պայմաններով գործարքների նախադրյալների և նպատակի ուսումնասիրությունների բացահայտումների գրավոր մանրակրկիտ ձևակերպումը և տվյալ ոլորտի մասնակիցների իրազեկության բարձրացման արդյունավետ և պատշաճ միջոցառումների իրականացումը՝ ՓԼ և ԱՖ միությունների փոփոխությունների վերաբերյալ տիպաբանությունների հրապարակմամբ կամ այլ կերպ:</p>
<p>Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում (21-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերություն) փոփոխության նախագիծ:</p> <p>Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով, ՖԴԿ-ն հաշվետու անձանց համար կազմակերպել է մի շարք ուսուցողական միջոցառումներ (տես՝ ընդհանուր տեղեկությունների 2.1.1 բաժնի «4. Ուսուցողական միջոցառումներ և կարողությունների զարգացում» ենթաբաժինը), որոնց ընթացքում, այլ թեմաներից զատ, ներկայացվել են նաև ՆՈՖԳՏՄ-ների ոլորտում առկա ՓԼ/ԱՖ ներկայիս և զարգացող միտումները:</p>
<p><b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b></p>	<p>Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակված փոփոխությունների նախագծի համապատասխան հոդվածները վերախմբագրվել են, տես՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագիծը (3-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 22-րդ պարբերություններ, 22-րդ հոդվածի 1-ին մաս):</p> <p>ՆՈՖԳՏՄ-ների համար պարբերաբար կազմակերպվել են ուսուցողական միջոցառումներ (տես՝ ընդհանուր տեղեկությունների 2.1.2. բաժնի «5. Ուսուցողական միջոցառումներ» ենթաբաժինը), որոնց շրջանակներում ի թիվս այլ թեմաների քննարկվել են տիպաբանությունների, ՓԼ/ԱՖ ռիսկի ազդակների ու կասկածելիության չափանիշների հետ կապված հարցերը:</p>
<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ</p>	<p><i>Սահմանել կոնկրետ պայմաններ, որոնց պահպանմամբ ՆՈՖԳՏՄ-ներն իրավասու են ՀՊՈԻ միջոցառումները կատարել երրորդ անձանց կամ միջնորդների միջոցով:</i></p>
<p>Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում (15-րդ հոդվածի 8-րդ մաս) փոփոխության նախագիծ:</p>
<p><b>Առաջընթացի</b></p>	<p>Ներկայացված առաջարկն իրագործվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի</p>



<b>առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	<p>մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագծով (16-րդ հոդվածի 8-րդ մաս):</p>
<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ</p>	<p>Իրականացնել ՓԼ/ԱՖ մասին օրենքի 21-րդ հոդվածը (ներքին իրավական ակտեր) և 23-րդ հոդվածի 2-րդ մասը (ՓԼ և ԱՖ դեմ պայքարի համակարգերի և հսկողության մեխանիզմների համապատասխանության արտաքին աուդիտ) 10-ից պակաս աշխատակից ունեցող ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ չտարածելու հետ կապված ռիսկերի և հետևանքների վերլուծություն:</p>
<p>Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>Նման վերլուծություն է իրականացվել ՌՌԳ-ի շրջանակներում (ՌՌԳ-ի 6-րդ բաժին), որի արդյունքում կատարված եզրակացության համաձայն՝ ՆՈՖԳՏՄ ոլորտը, ընդհանուր առմամբ, հակված է ՓԼ/ԱՖ ցածր ռիսկին, ինչը հատուկ է նաև վերոնշյալ պահանջի հնարավոր չեղարկման դեպքում: Հետևաբար, հաշվի առնելով Հ.15-ի նախաբանը, ՓԼ/ԱՖ ռիսկի և գործունեության ծավալների վրա հիմնված մոտեցման արդյունքում ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ ներքին իրավական ակտերի և աուդիտի գծով պահանջների կիրառման տարբերակված մոտեցումը համարվում է համարժեք և հիմնավոր:</p>
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	<p>Հետագա փոփոխություններ չկան:</p>
<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ</p>	<p>Կատարելագործել տեղեկատվության պահպանման ոլորտում ՆՈՖԳՏՄ-ներին ներկայացվող պահանջները և նրանց պրակտիկան՝ արդյունավետությունը և հիմնավորվածությունն ապահովելու, ինչպես նաև կիրառության մեջ քննության շահերին չվնասելու նպատակով, քանի որ, հաշվի առնելով գործարար հարաբերությունների և գործարքների հետ կապված տեղեկատվության կարևորությունը, իշխանություններին անհրաժեշտ է տեղեկատվության պահպանման սրանդարտների և որակի հարցերին անդրադառնալ ռիսկերը նվազեցնելու տեսակետից՝ միաժամանակ փորձելով ԻՊՄ-ներին և վերահսկող մարմիններին բավարար չափով տրամադրել ՓԼ/ԱՖ գործերի</p>

	<i>քննության մեջ օգտագործվող արժանահավասար տվյալներ:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով ձեռնարկվել են հետևյալ միջոցառումները. <ul style="list-style-type: none"> <li>- «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (21-րդ հոդված),</li> <li>- Հաշվապահական և աուդիտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (13-րդ գլուխ),</li> <li>- Խաղատնային գործունեության ոլորտի ՌՎՀՄՈՒ (13-րդ գլուխ),</li> <li>- Իրավաբանական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (13-րդ գլուխ),</li> <li>- Ռիելտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (13-րդ գլուխ):</li> </ul>
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Այս առաջարկի կապակցությամբ արդիական է մնում Առաջընթացի առաջին հաշվետվությամբ ներկայացված՝ ՌՎՀՄՈՒ-երի վերաբերյալ դիտարկումը: Ներկայացված առաջարկն իրագործվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագծով (22-րդ հոդված):
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	

<b>Հ.15 (Ներքին հսկողություն, համապատասխանություն, աուդիտ)</b>	
<b>Գնահատական՝ մասամբ համապատասխանում է</b>	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>ՖՀ-ներից պահանջել՝ ապահովելու ՓԼ և ԱՖ կանխարգելմանն ուղղված ներքին ընթացակարգերի, կանոնակարգերի և հսկողական մեխանիզմների սահմանումը և պահպանումը՝ հաշվի առնելով ՓԼ և ԱՖ ռիսկը, ինչպես նաև նրանց գործարար գործունեության չափերը:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում (22-րդ և 23-րդ հոդվածներ) փոփոխության նախագիծ, ինչպես նաև համապատասխան դրույթ է սահմանվել Կանոնակարգով (3-րդ և 4-րդ գլուխներ) (ՓԳՀ-ին կից հավելված): Առաջարկին համահունչ՝ մշակվել և հաստատվել են ՖՀ-ների՝ հեռակա վերահսկողության և տեղերում ստուգման ուղեցույցներ, որոնք ներառում են նաև ներքին ընթացակարգերի, կանոնակարգերի և հսկողական մեխանիզմների՝ սահմանված պահանջներին համապատասխանության ստուգումներ: ՖՀ-ների

	<p>նկատմամբ կիրառված վերահսկողական միջոցառումները նկարագրված են նաև Հ.30-ի ներքո 1-ին առաջարկի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունում:</p>
<p><b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b></p>	<p>Այս առաջարկի կապակցությամբ արդիական է մնում Առաջընթացի առաջին հաշվետվությամբ ներկայացված՝ ուղեցույցների և կանոնակարգի վերաբերյալ դիտարկումը:</p> <p>Ներկայացված առաջարկն իրագործվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագծով (23-րդ և 24-րդ հոդվածներ):</p> <p>Տես նաև Հ.30-ի ներքո 1-ին առաջարկի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:</p>
<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ</p>	<p><i>Փոփոխել իրավական ակտերը՝ սահմանելու ուղղակի և կոնկրետ դրույթ, որով ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ներքին համապատասխանության ստորաբաժանմանը/աշխատակիցին հնարավորություն կընձեռվի ժամանակին ստանալու ՀՊՈՒ բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, գործարքների մասին տվյալները և վերաբերելի այլ տեղեկություններ:</i></p>
<p>Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (23-րդ հոդվածի 4-րդ մասը), ինչպես նաև համապատասխան դրույթ է սահմանվել Կանոնակարգում (3-րդ գլուխ):</p>
<p><b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b></p>	<p>Այս առաջարկի կապակցությամբ արդիական է մնում Առաջընթացի առաջին հաշվետվությամբ ներկայացված՝ համապատասխան կանոնակարգի վերաբերյալ դիտարկումը:</p> <p>Ներկայացված առաջարկն իրագործվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագծով (23-րդ հոդվածի 4-րդ մաս):</p>
<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ</p>	<p><i>Ներդնել ՖՀ-ների կողմից բոլոր աշխատակիցների նախնական ստուգման ֆորմալ ընթացակարգեր, հատկապես այն աշխատակիցների, որոնց գործունեության ոլորտն առնչվում է ՓԼ/ԱՖ կանխարգելմանը: Ֆորմալ այդ ընթացակարգերը պետք է ուղղված լինեն աշխատակիցների աշխատանքի ընդունելիս բարձր չափանիշների ապահովմանը:</i></p>
<p>Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ.</p>	<p>Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (22-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ պարբերություն):</p>

ձեռնարկված միջոցառումներ	
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Ներկայացված առաջարկն իրագործվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագծով (23-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ պարբերություն):
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Ապահովել ՖՀ-ներում ներքին աուդիտի անկախ և համարժեք միջոցներով ապահովված գործառույթի պահպանումը, հատկապես երբ աուդիտի գործառույթը վերապահված/հանձնարարված է ներքին աուդիտից բացի այլ աշխատակիցներին:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	ՖԴԿ-ի կողմից իրականացված վերլուծություն համաձայն՝ միայն մեկ բանկ է վերապահել իր ներքին համապատասխանության գործառույթը ներքին աուդիտի ստորաբաժանմանը (համապատասխանության գործառույթը հետագայում վերապահվելու է այլ ստորաբաժանմանը): Նման դեպքերում, աուդիտի գործառույթը վերապահվում է ներքին անվտանգության ստորաբաժանմանը, ինչը, բոլոր դեպքերում, անկախ է և ապահովված է համարժեք միջոցներով: «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծը (3-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ պարբերություն), սահմանելով համապատասխանության ստորաբաժանումը, ներառում է նաև բացառություն առ այն, որ այս միավորի գործառույթները չեն կարող վերապահվել լիազոր մարմնի կողմից մատնանշված ստորաբաժանումներին ու աշխատակիցներին: Այսպիսով, նման դրույթը հնարավորություն է ստեղծում արգելել համապատասխանության գործառույթի վերապահումը ներքին աուդիտի ստորաբաժանմանը այն դեպքերում, երբ արդյունքում կարող է վտանգվել ներքին աուդիտի գործառույթի պատշաճ իրականացումը:
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Կանոնակարգում կատարվել են համապատասխան փոփոխություններ, որոնց համաձայն բանկերում ներքին դիտարկումների գործառույթը չի կարող վերապահվել հաճախորդների սպասարկմամբ զբաղվող ստորաբաժանումներին, ինչպես նաև ներքին աուդիտի անդամներին (ղեկավարին), տես՝ կանոնակարգի 13-րդ պարբերությունը:
ՄԱՆԻՎԱԼ-ի	<i>Աշխատակիցների լրացուցիչ ուսուցում իրականացնել ՓԼ/ԱՖ</i>

հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>կանխարգելման բոլոր թեմաներով, մասնավորապես՝ Հ.11-ի պահանջների առնչությամբ:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Ներկայացված առաջարկն իրագործվել է հաշվետու անձանց համար մի շարք ուսուցողական միջոցառումների կազմակերպման միջոցով (տես՝ ընդհանուր տեղեկությունների 2.1.1 բաժնի «4. Ուսուցողական միջոցառումներ և կարողությունների զարգացում» ենթաբաժինը):
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Ֆինանսական հաստատությունների համար պարբերաբար կազմակերպվել են ուսուցողական միջոցառումներ (տես՝ ընդհանուր տեղեկությունների 2.1.2. բաժնի «5. Ուսուցողական միջոցառումներ» ենթաբաժինը):
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Ապահովել «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի և դրանից բխող իրավական այլ ակտերի պահանջների արդյունավետ կատարումը ՖՀ-ների կողմից:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Ներկայացված առաջարկն իրագործվել է հաշվետու անձանց համար մի շարք ուսուցողական միջոցառումների կազմակերպման միջոցով (տես՝ ընդհանուր տեղեկությունների 2.1.1 բաժնի «4. Ուսուցողական միջոցառումներ և կարողությունների զարգացում» ենթաբաժինը): Տես Հ.30-ի ներքո 1-ին առաջարկի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Ֆինանսական հաստատությունների համար պարբերաբար կազմակերպվել են ուսուցողական միջոցառումներ (տես՝ ընդհանուր տեղեկությունների 2.1.2. բաժնի «5. Ուսուցողական միջոցառումներ» ենթաբաժինը): Տես նաև Հ.30-ի ներքո 1-ին առաջարկի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	

<b>Հ.16 (ՆՈՖԳՏՍ՝ Հ.14-15, Հ.21)</b>
<b>Գնահատական՝ մասամբ համապատասխանում է</b>

<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ</p>	<p><i>Ներդնել ռիսկերի կառավարման հսկողական մեխանիզմներ՝ ապահովելու համապատասխանության գործառույթի կատարման բավարար չափով ապահովվածությունն աշխատակիցներով, և հաղթահարելու համապատասխանության պատասխանատուի մոտ համապատասխանության գործառույթի և ընթացիկ աշխատանքային այլ գործառույթների միջև ծագող հակասությունները:</i></p>
<p>Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>Տես Հ.15-ի ներքո 4-րդ առաջարկի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:  «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագծի (23-րդ հոդված) համաձայն՝ ներքին դիտարկումների մարմինը պետք է օժտված լինի անկախությամբ և հաշվետու անձի ավագ ղեկավարության կարգավիճակով (ինչը հատուկ չէ գործառնական աշխատանքներին):  Բացի այդ, ՌՎՀՄՈՒ-ները (7-րդ գլուխ) թվարկում են ներքին դիտարկումների մարմնի իրավասությունները, որոնց միջոցով նույնպես տարանջատում են աշխատանքային այլ գործառույթները:</p>
<p><b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b></p>	<p>Այս առաջարկի կապակցությամբ արդիական է մնում Առաջընթացի առաջին հաշվետվությամբ ներկայացված՝ ՌՎՀՄՈՒ-երի վերաբերյալ դիտարկումը:  Ներկայացված առաջարկն իրագործվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագծով (24-րդ հոդված):</p>
<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ</p>	<p><i>Բարձրացնել ՆՈՖԳՏՄ-ների իրազեկությունն օֆշորային փարածքների հրապարակված գործող ցանկի վերաբերյալ, ինչպես նաև ներդնել միջոցառումներ, որոնցով ՆՈՖԳՏՄ-ները կտեղեկացվեն այլ պետություններում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի թերությունների շուրջ առկա մտահոգությունների մասին:</i></p>
<p>Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով ձեռնարկվել են հետևյալ միջոցառումները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- Հաշվապահական և աուդիտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (2-րդ գլուխ),</li> <li>- Խաղատնային գործունեության ոլորտի ՌՎՀՄՈՒ (2-րդ գլուխ),</li> <li>- Իրավաբանական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (2-րդ գլուխ),</li> <li>- Ռիելտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (2-րդ գլուխ):</li> </ul> <p>Ներկայացված առաջարկն իրագործվել է հաշվետու անձանց համար</p>

	<p>մի շարք ուսուցողական միջոցառումների կազմակերպման միջոցով (տես՝ ընդհանուր տեղեկությունների 2.1.1 բաժնի «4. Ուսուցողական միջոցառումներ և կարողությունների զարգացում» ենթաբաժինը), որոնց թեմաները ներառել են օֆշորային տարածքներից և ՓԼ/ԱՖ միջազգային ստանդարտներին չհամապատասխանող երկրներից բխող ռիսկերի հետ կապված հարցերը:</p>
<p><b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b></p>	<p>Այս առաջարկի կապակցությամբ արդիական է մնում Առաջընթացի առաջին հաշվետվությամբ ներկայացված՝ ՌՎՀՄՈՒ-երի վերաբերյալ դիտարկումը:</p> <p>ՆՈՖԳՏՄ-ների համար պարբերաբար կազմակերպվել են ուսուցողական միջոցառումներ (տես՝ ընդհանուր տեղեկությունների 2.1.2. բաժնի «5. Ուսուցողական միջոցառումներ» ենթաբաժինը), որոնց շրջանակներում ի թիվս այլ թեմաների քննարկվել են բարձր ռիսկի չափանիշների, այդ թվում՝ օֆշորային տարածքների և չհամապատասխանող երկրների/ տարածքների հետ կապված հարցերը:</p>
<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ</p>	<p><i>Սահմանել պահանջներ ՆՈՖԳՏՄ-ների համար՝ ապահովելու նրանց ներքին իրավական ակտերի վերաբերելիությունը համապատասխանության համակարգերին և հսկողական մեխանիզմներին՝ պարզապես «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի դրույթներն արտապայելու փոխարեն:</i></p>
<p>Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>ՖԴԿ-ի կողմից իրականացվել է ՆՈՖԳՏՄ-ների ներքին իրավական ակտերի ուսումնասիրություն (մասնավորապես՝ թվով 5 խաղատուն, թվով 3 հաշվապահական ընկերություն և թվով 6 աուդիտորական ընկերություն), որի արդյունքում տրվել են համապատասխան դիտողություններ՝ ուղղված ՓԼ/ԱՖ ռիսկերի և ՆՈՖԳՏՄ-ների գործունեության ծավալների պայմաններում ներքին իրավական ակտերի արդյունավետ կիրառության ապահովմանը: Ներքին իրավական ակտերում հանդիպող ընդհանուր թերությունների գծով տրված դիտողությունները քննարկվել են նաև հաշվետու անձանց համար կազմակերպված մի շարք ուսուցողական միջոցառումների ընթացքում (տես՝ ընդհանուր տեղեկությունների 2.1.1 բաժնի «4. Ուսուցողական միջոցառումներ և կարողությունների զարգացում» ենթաբաժինը), որոնց թեմաները ներառել են նաև օֆշորային տարածքներից և ՓԼ/ԱՖ միջազգային ստանդարտներին չհամապատասխանող երկրներից բխող ռիսկերի հետ կապված հարցերը:</p> <p>Զուգահեռաբար, ՖԴԿ-ի կողմից նախաձեռնվել են տարբեր ոլորների ՆՈՖԳՏՄ-երի գործունեության ծավալներին համապատասխանող ներքին իրավական ակտերի տիպային</p>

	<p>օրինակների մշակման աշխատանքները, ինչը կարող է հանդիսանալ գործող համապատասխանության համակարգի և ներքին իրավական ակտերի ներդաշնակությունը ապահովող արդյունավետ գործիք: Ներքին իրավական ակտերի տիպային օրինակները մշակվելու և հրապարակվելու են առաջիկա 2-3 ամիսների ընթացքում:</p>
<p><b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b></p>	<p>ՆՈՖԳՏՄ-ների համար պարբերաբար կազմակերպվել են ուսուցողական միջոցառումներ (տես՝ ընդհանուր տեղեկությունների 2.1.2. բաժնի «5. Ուսուցողական միջոցառումներ» ենթաբաժինը), որոնց շրջանակներում ի թիվս այլ թեմաների քննարկվել են ներքին իրավական ակտերի մշակման հետ կապված հարցերը:</p>
<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ</p>	<p><i>ՆՈՖԳՏՄ-ների համար սահմանել ուղղակի պահանջ՝ հնարավորինս մանրամասնորեն ուսումնասիրելու ՖԱԹՖ-ի հանձնարարականները չկիրառող կամ բավարար չափով չկիրառող պետություններից գործող կամ նման պետություններում գտնվող անձանց հետ գործարքների նախադրյալները և նպատակը, գրավոր փաստաթղթավորելու բացահայտումները և արդյունքները գրավոր տրամադրելու իրավասու մարմիններին և աուդիտորներին:</i></p>
<p>Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով ձեռնարկվել են հետևյալ միջոցառումները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (17-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասեր),</li> <li>- Հաշվապահական և աուդիտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (11-րդ և 13-րդ գլուխներ),</li> <li>- Խաղատնային գործունեության ոլորտի ՌՎՀՄՈՒ (11-րդ և 13-րդ գլուխներ),</li> <li>- Իրավաբանական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (11-րդ և 13-րդ գլուխներ),</li> <li>- Ռիելտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (11-րդ և 13-րդ գլուխներ):</li> </ul>
<p><b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b></p>	<p>Այս առաջարկի կապակցությամբ արդիական է մնում Առաջընթացի առաջին հաշվետվությամբ ներկայացված՝ ՌՎՀՄՈՒ-երի վերաբերյալ դիտարկումը:</p> <p>Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակված փոփոխությունների նախագծի համապատասխան հոդվածները վերախմբագրվել են, տես՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագիծը (3-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 22-րդ պարբերություններ, 18-րդ և 22-րդ հոդվածներ):</p>



Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	
---	--

<b>Հ.20 (Այլ ՆՈՖԳՏՄ-ներ և անվտանգ գործարքների մեթոդներ)</b>	
<b>Գնահատական՝ մասամբ համապատասխանում է</b>	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Իրականացնել ռիսկերի գնահատում՝ պարզելու, թե արդյոք ոչ ֆինանսական գործունեության այլ տեսակների և մասնագիտությունների պարագայում առկա է ՓԼ կամ ԱՖ նպատակով դրանց չարաշահման ռիսկ:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	ՓԼ/ԱՖ ռիսկերի տեսանկյունից հնարավոր խոցելիություն ունեցող այլ ՆՈՖԳՏՄ-ների գծով վերլուծությունն իրականացվել է ՌՌԳ-ի շրջանակներում, որի արդյունքում կատարված եզրակացության համաձայն (ՌՌԳ-ի 6-րդ բաժին)՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում նախատեսված ՆՈՖԳՏՄ-ներից բացի, ՓԼ/ԱՖ ներգրավվածության հնարավոր ռիսկին հակված այլ ՆՈՖԳՏՄ-ներ առկա չեն:
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Հետագա փոփոխություններ չկան:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Միջոցներ ձեռնարկել՝ նվազեցնելու կանխիկ գործածությունը տնտեսության մեջ և խրախուսելու ավելի մեծ ծավալով գործառնությունների իրականացումը տնտեսության ֆորմալ հատվածում:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	«ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագծով (5-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերություն) սահմանված է 5 մլն ՀՀ դրամը գերազանցող կանխիկ գործառնությունների պարտադիր հաղորդման պարտավորություն, որի նպատակն է՝ կանխիկ հոսքերի նկատմամբ հաստատել առավել մանրամասն հսկողություն և խրախուսել տնտեսության մեջ կանխիկ գործառնությունների աստիճանական նվազեցումը: Բացի այդ, անկանխիկ գործառնությունների և փոխանցումների խրախուսման քաղաքականությունը ներառված է ՀՀ ԿԲ-ի՝ 2009-2011թթ. տեսլականում (իրապարակված է ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում): Տեսլականի հիման վրա մշակվել է միջոցառումների

	<p>ծրագիր, որը ներառում է անկանխիկ գործառնությունների խրախուսման միջոցառումներ, անկանխիկ փոխանցումների իրականացման նոր գործիքների ներդրմանն ու կարգավորմանն ուղղված քայլեր, ինչպես նաև փոխանցումների և հաշվարկային գործառնությունների իրականացման նոր ծառայությունների մատուցման հնարավորություններ:</p>
<p><b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b></p>	<p>Կանխիկ գործածությունը նվազեցնելու նպատակով փոփոխություններ են կատարվել «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ նոր օրենքում (6-րդ հոդված): Տես նաև «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագիծը (6-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերություն):</p> <p>Բացի այդ, անկանխիկ գործառնությունների և փոխանցումների խրախուսման քաղաքականությունը ներառված է ՀՀ կենտրոնական բանկի 2012-2014թթ. տեսլականում և դրա իրականացման գործողությունների ծրագրում, հետևյալ ձևակերպմամբ.</p> <ul style="list-style-type: none"> <li>• <b>Զարգացնել ֆինանսական միջնորդությունը՝ նոր ֆինանսական հաստատությունների, ֆինանսական ենթակառուցվածքների, գործիքների ու ծառայությունների միջոցով.</b> <ul style="list-style-type: none"> <li>- Կատարել աշխատանքներ անկանխիկ և էլեկտրոնային ֆինանսական ծառայությունների ներդրմանն ու դրանց աստիճանական զարգացմանն ուղղությամբ:</li> </ul> </li> </ul>
<p>Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ</p>	

<b>Հ.24 (ՆՈՖԳՏՄ՝ կարգավորում, վերահսկողություն և մոնիտորինգ)</b>	
<b>Գնահատական՝ չի համապատասխանում</b>	
<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ</p>	<p><i>Արդյունավետ մոնիտորինգ և ռիսկերի նկատմամբ զգայունության վրա հիմնված համապատասխանություն ապահովելու նպատակով անկախ իրավաբանների և իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերությունների, անկախ հաշվապահների և հաշվապահական ընկերությունների, թանկարժեք մետաղների դիլերների և թանկարժեք քարերի դիլերների մասով իրավասու մարմիններին կամ ԻԿԿ-ներին լիազորել՝ իրականացնելու մոնիտորինգ և ստուգելու նրանց համապատասխանությունը ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջներին:</i></p>
<p>Առաջարկի իրագործման</p>	<p>Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում (28-րդ հոդվածի 1-ին</p>

<p>ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>մաս) փոփոխության նախագիծ:</p>
<p><b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b></p>	<p>Ներկայացված առաջարկն իրագործվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագծով (29-րդ հոդվածի 1-ին մաս):</p>
<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ</p>	<p><i>Ներդնել փաստաբանների գործունեության նկատմամբ վերահսկողության ռեժիմ:</i></p>
<p>Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում (1-ին և 3-րդ հոդվածներ) փոփոխության նախագիծ:</p>
<p><b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b></p>	<p>Ներկայացված առաջարկն իրագործվել է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում (1-ին և 3-րդ հոդվածներ) փոփոխությունների 2012 թվականի նախագծով:</p>
<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ</p>	<p><i>Խաղաղների և շահումով խաղ կազմակերպող անձանց համար ներդնել ղեկավարության, սեփականատերերի և իրական շահառուների «պարզաճության և համապատասխանության» ստուգումներ:</i></p>
<p>Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով ձեռնարկվել են հետևյալ միջոցառումները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- Փոփոխություններ «Շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքում,</li> <li>- Խաղատնային գործունեության ոլորտի ՌՎՀՄՈՒ (7-րդ բաժնի 21-րդ պարբերություն):</li> </ul>
<p><b>Առաջընթացի առաջին</b></p>	<p>Այս առաջարկի կապակցությամբ արդիական է մնում Առաջընթացի առաջին հաշվետվությամբ ներկայացված՝ ՌՎՀՄՈՒ-երի վերաբերյալ</p>

<b>հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	<p>դիտարկումը: Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակված փոփոխությունների նախագծի համապատասխան հոդվածները վերախմբագրվել են, տես՝ «Խաղատնային գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների 2012 թվականի նախագծի 3-րդ և 4-րդ հոդվածները:</p>
<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ</p>	<p><i>Օրենքով, կանոններով կամ կանոնակարգերով սահմանել պահանջներ, որոնցով կկանխվի խաղատնային կամ շահումով խաղ կազմակերպող անձի սեփականության մեջ հանցագործների կամ նրանց հանցակիցների նշանակալից մասնակցություն ունենալը կամ իրական շահառու լինելը, կառավարչական գործառույթ կատարելը կամ խաղատնային կամ շահումով խաղ կազմակերպող անձի օպերատոր լինելը:</i></p>
<p>Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>Տես նախորդ առաջարկի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:</p>
<p><b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b></p>	<p>Տես նախորդ առաջարկի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:</p>
<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ</p>	<p><i>Վերահսկողություն իրականացնող մարմիններում ապահովել ՓԼ և ԱՖ հարցերով զբաղվող բավարար կադրերի և տեխնիկական կարողությունների առկայությունը:</i></p>
<p>Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>«ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագծի (28-րդ հոդվածի 1-ին մաս) համաձայն՝ ՖԴԿ-ն վերահսկողություն է իրականացնելու այն հաշվետու անձանց նկատմամբ, որոնց գծով առկա չէ օրենքով սահմանված որևէ վերահսկող մարմին կամ առկայության դեպքում՝ սահմանված չէ ՓԼ/ԱՖ ոլորտում վերահսկողության իրավասությունն իրագործելու համար անհրաժեշտ իրավական համակարգը: Այսպիսով, համալրվել է ՖԴԿ-ի անձնակազմը (թվով 9 նոր աշխատակից), որոնցից թվով 3-ը ներգրավվելու են վերահսկողական գործընթացներում: ՆՈՖԳՏՄ ոլորտի վերահսկողական մարմինների մասնագիտական</p>

	պատրաստվածության մակարդակը բարձրացնելու նպատակով՝ ԱՄՀ-ի մասնագետների կողմից այս ոլորտի վերահսկող մարմինների ներկայացուցիչների համար կազմակերպվել է քննարկում (տես՝ ընդհանուր տեղեկությունների 2.1.1 բաժնի «ԱՄՀ-ի տեխնիկական աջակցություն» ենթաբաժինը): Բացի այդ, համապատասխան վերահսկող մարմինների աշխատակիցները մասնակցել են նաև հաշվետու անձանց համար կազմակերպված մի շարք ուսուցողական միջոցառումներին (տես՝ ընդհանուր տեղեկությունների 2.1.1 բաժնի «4. Ուսուցողական միջոցառումներ և կարողությունների զարգացում» ենթաբաժինը):
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	ԱՄՀ-ի կողմից ՓԼ/ԱՖ ոլորտում տրամադրվող տեխնիկական օժանդակության ծրագրի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան ստորաբաժանումներին՝ խաղատների լիցենզավորման և վերահսկողության կարողությունները զարգացնելու նպատակով: Բացի այդ, վերահսկող մարմինների համար կազմակերպվել են ուսուցողական միջոցառումներ (տես՝ ընդհանուր տեղեկությունների 2.1.2. բաժնի «5. Ուսուցողական միջոցառումներ» ենթաբաժինը):
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	

<b>Հ.25 (Ուղեցույցներ և հետադարձ արձագանք)</b>	
<b>Գնահատական՝ մասամբ համապատասխանում է</b>	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>ՆՈՖԳՏՄ-ների համար ընդունել ուղեցույցներ, որոնք կօգնեն «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով նախատեսված պարտավորությունների լիարժեք ներդրման և կատարման հարցում:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով ձեռնարկվել են հետևյալ միջոցառումները. <ul style="list-style-type: none"> <li>- Հաշվապահական և աուդիտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ,</li> <li>- Խաղատնային գործունեության ոլորտի ՌՎՀՄՈՒ,</li> <li>- Իրավաբանական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ,</li> <li>- Ռիելտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ:</li> </ul>
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից</b>	Այս առաջարկի կապակցությամբ արդիական է մնում Առաջընթացի առաջին հաշվետվությամբ ներկայացված՝ ՌՎՀՄՈՒ-երի վերաբերյալ դիտարկումը:

<b>հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Մշակել հետադարձ արձագանքի պատշաճ գործընթացներ՝ հաշվի առնելով բացահայտումների թվաքանակը և արդյունքները, նորագույն հնարքները, մեթոդները և միտումները, ինչպես նաև ՆՈՖԳՏՄ-ների պարագայում հնարավոր ՓԼ գործերի առանձնահատկությունները:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Հաշվետու անձանց հետադարձ արձագանք է հաղորդվել ՖԴԿ-ի տարեկան հաշվետվություններով (իրապարակված է ՖԴԿ-ի ինտերնետային կայքում), որոնք ներառում են տեղեկատվություն հաղորդումների և դրանց արդյունքների վերաբերյալ: Համապատասխան քննարկումների (տես՝ ընդհանուր տեղեկությունների 2.1.1 բաժնի «4. Ուսուցողական միջոցառումներ և կարողությունների զարգացում» ենթաբաժինը), տիպաբանությունների և շրջաբերական գրությունների միջոցով (իրապարակված են ՖԴԿ-ի ինտերնետային կայքում) հաշվետու անձանց են ներկայացվել ներկայիս ՓԼ/ԱՖ սխեմաները, մեթոդները և միտումները:
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	ՆՈՖԳՏՄ-ների համար պարբերաբար կազմակերպվել են ուսուցողական միջոցառումներ (տես՝ ընդհանուր տեղեկությունների 2.1.2. բաժնի «5. Ուսուցողական միջոցառումներ» ենթաբաժինը), որոնց շրջանակներում ի թիվս այլ թեմաների քննարկվել են տիպաբանությունների, ՓԼ/ԱՖ ոլիսկի ազդակների ու կասկածելիության չափանիշների հետ կապված հարցերը:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>ՖՀ-ների համար ընդունել լրացուցիչ ուղեցույցներ/ չափանիշներ, մասնավորապես՝ հաճախորդների վերաբերյալ տեղեկատվության թարմացման համարժեք պարբերականության որոշման առումով:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Տես Հ.5-ի ներքո (ՖՀ-ների մասով) 2-րդ առաջարկի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից</b>	Տես Հ.5-ի ներքո (ՖՀ-ների մասով) 2-րդ առաջարկի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:

<b>հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	ՖՀ-ների համար ընդունել լրացուցիչ ուղեցույցներ/ չափանիշներ, մասնավորապես՝ առկա հաճախորդների հետ գործարար հարաբերության ամբողջ ընթացքում անընդհատ ՀՊՈՒ իրականացնելու և ՔԱՈՒԱ-ների հետ գործարար հարաբերության ընթացքում հավելյալ անընդհատ մոնիտորինգ իրականացնելու առումով:
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Ներկայացված առաջարկն իրագործվել է ՖՀ-ների համար մի շարք ուսուցողական միջոցառումների կազմակերպման միջոցով (տես՝ ընդհանուր տեղեկությունների 2.1.1 բաժնի «4. Ուսուցողական միջոցառումներ և կարողությունների զարգացում» ենթաբաժինը), այդ թվում՝ սովորական և բարձր ոլորտի հաճախորդների նկատմամբ ՀՊՈՒ-ի իրականացման թեմայով, ներառյալ՝ ՔԱՈՒԱ-ների նկատմամբ հավելյալ անընդհատ մոնիտորինգը:
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Ֆինանսական հաստատությունների համար պարբերաբար կազմակերպվել են ուսուցողական միջոցառումներ (տես՝ ընդհանուր տեղեկությունների 2.1.2. բաժնի «5. Ուսուցողական միջոցառումներ» ենթաբաժինը), որոնց շրջանակներում ի թիվս այլ թեմաների քննարկվել են ՀՊՈՒ-ի հետ կապված հարցերը:
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	

<b>Հ.28 (Իրավասու մարմինների լիազորությունները)</b>	
<b>Գնահատական՝ մասամբ համապատասխանում է</b>	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	ՔԴՕ-ում անհրաժեշտ է փոփոխություններ կատարել՝ նախատեսելու ՓԼ և ԱՖ գործերով փաստաթղթերի և տեղեկությունների ներկայացում պարտադրելու՝ ԻՊՄ-ների կամ դատարանների ընդհանուր լիազորությունը, այդ թվում՝ նաև այն դեպքում, երբ տեղեկություններ են պահանջվում ոչ թե տուժողից, հայցվորից, կասկածյալից կամ մեղադրյալից, այլ՝ վկայից կամ այլ անձանցից:
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ.	Ներկայացված առաջարկն իրագործվել է դատավարության գործընթացում յուրաքանչյուր կողմի կամ մասնակցի առումով ՔԴՕ-ում համապատասխան փոփոխություն կատարելու նախագծով: Մասնավորապես, փաստաթղթերի և տեղեկությունների

<p>ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>ներկայացում պարտադրելու՝ դատախազի, քննիչի և հետաքննություն իրականացնող մարմնի ընդհանուր իրավասությունները սահմանված են, համապատասխանաբար, ՔԴՕ-ի 53-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ պարբերությամբ, 55-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ պարբերության և 57-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ պարբերությամբ: Միևնույն ժամանակ, ՔԴՕ-ի համաձայն՝ քրեական գործընթացի բոլոր կողմերն ու մասնակիցները պարտավոր են ներկայացնել փաստաթղթեր և առարկաներ (քաղաքացիական հայցով պատասխանող կողմը՝ 75-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերություն, վկաները՝ 86-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ պարբերություն, տուժողի, հայցվորի, կասկածյալի կամ մեղադրյալի իրավական ներկայացուցիչը՝ 77-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ պարբերություն, տուժողի, հայցվորի կամ պատասխանողի ներկայացուցիչը՝ 79-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ պարբերություն):</p>
<p><b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b></p>	<p>Հետագա փոփոխություններ չկան:</p>
<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ</p>	<p><i>ՔԳՕ-ի 10-րդ հոդվածը ներդաշնակեցնել ՕՀԳՕ-ի 29-րդ հոդվածին, իսկ ՔԳՕ-ի 13.1-րդ հոդվածը՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածին, որպեսզի ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տեղեկությունների ստացման մասով դրանք նախատեսեն միևնույն պայմանները, և որպեսզի ԻՊՄ-ներին արդյունավետ հնարավորություն ընձեռվի՝ ստանալու և պարտադրելու ներկայացնել տեղեկություններ, գործարքների փաստաթղթեր, հաշիվների փաստաթղթեր և ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված այլ փաստաթղթեր և տեղեկություններ, հարկապես այն դեպքերում, երբ դեռևս ի հայտ չի բերվել կոնկրետ կասկածյալ, կամ երբ պահանջվող տեղեկությունները վերաբերում են կասկածյալից բացի որևէ այլ անձի:</i></p>
<p>Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված</p>	<p>Տես Հ.4-ի ներքո 1-ին առաջարկի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:</p>



միջոցառումներ	
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Տես Հ.4-ի ներքո 1-ին առաջարկի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>ՓԼ/ԱՖ գործերի քննության արդյունավետության ապահովման նպատակով՝ ԱԱԾ-ի քննչական վարչության և մաքսային ծառայությունների հետաքննության և նախաքննության վարչությունների աշխատակիցների համար հարկավոր է կազմակերպել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմաներով կոնկրետ ուսուցողական միջոցառումներ:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	<p>ԱԱԾ-ն ներկայացնող հատուկ կարևոր գործերով մեկ քննիչ մասնակցել է Բուլղարիայի ՖՀՄ կատարած փորձի փոխանակման այցին (տես՝ ընդհանուր տեղեկությունների 2.1.1 բաժնի «ԱՄՆ տեխնիկական օժանդակության ծրագիր» ենթաբաժինը), որտեղ այլ թեմաների հետ մեկտեղ ներկայացվել և քննարկվել է ՓԼ/ԱՖ քննությունների գծով Բուլղարիայի փորձը:</p> <p>2010թ. հուլիսին ՊԵԿ-ի ներկայացուցիչների համար (մասնակցել են նաև մաքսային մարմինների նախաքննության և հետաքննության ստորաբաժանումները) կազմակերպվել է առանձին դասընթաց (տես՝ ընդհանուր տեղեկությունների 2.1.1 բաժնի «Ուսուցողական միջոցառումներ և կարողությունների զարգացում» ենթաբաժինը), որտեղ այլ թեմաների հետ մեկտեղ քննարկվել են մաքսային սահմանով իրականացվող ՓԼ/ԱՖ սխեմաները և հետախուզական մեթոդները:</p> <p>Ֆինանսական հետախուզության վերաբերյալ 2010թ. Դատախազության դպրոցում անցկացվելիք դասընթացին մասնակցելու են նաև ԱԱԾ-ի և մաքսային մարմինների քննչական ստորաբաժանումների առաջատար աշխատակիցները:</p>
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Ինչպես նշվել է Հ.1-ի ներքո ներկայացված առաջարկների իրագործման վերաբերյալ բաժնում, իրավապահների, այդ թվում՝ ԱԱԾ-ի և ՊԵԿ-ի քննիչների համար կազմակերպվել են ուսուցողական միջոցառումներ (տես՝ ընդհանուր տեղեկությունների 2.1.2. բաժնի «5. Ուսուցողական միջոցառումներ» ենթաբաժինը):
Նախորդ	

գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	
--	--

<b>Հ.30 (Ռեսուրսներ, մասնագիտական հմտություններ և ուսուցում)</b>	
<b>Գնահատականը՝ մասամբ համապատասխանում է</b>	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Գտնել և ներգրավել լրացուցիչ ռեսուրսներ, որոնց միջոցով ՓԼ/ԱՖ դեմ պայքարի շրջանակում կապահովվի թե տեղերում անցկացվող ստուգումների, թե փաստաթղթային վերահսկողության համարժեք մակարդակ:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	<p>ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գծով վերահսկողություն իրականացնելիս (հեռակա վերահսկողություն և տեղերում ստուգումներ) ՖՎՎ-ն, որպես կանոն, ՖԴԿ-ի հետ կնքած ՓՀ-ի շրջանակներում օգտագործում է վերջինիս մարդկային ռեսուրսները և ՖԴԿ-ի վերլուծաբաններին ներգրավում հերթական և արտահերթ վերահսկողական աշխատանքներին: Այս նպատակով, ՖԴԿ-ի անձնակազմը համալրվել է ևս 3 վերլուծաբանով, որոնց հիմնական պարտականությունը ստուգումներին մասնակցելն է: Ինչ վերաբերում է ՖՎՎ-ին, երրորդ փուլի գնահատումից հետո վերջինիս անձնակազմի թվաքանակը 75-ից հասել է 83-ի:</p> <p>Տնտեսության մասշտաբով իրականացված ՌՌԳ-ի կիրառական հատկանիշներից մեկը վերջինիս հիմքում ընկած տվյալների վերլուծությունն է (այդ թվում՝ ֆինանսական շուկայի կառուցվածքը, գործարքների բնույթն ու ծավալը, ՓԼ/ԱՖ տիպաբանությունների հետ համընկնումները, ներկայացված ԿԳՀ-ների քանակը, մասնակիցների և հաճախորդների ռեզիդենտությունը և այլն), որի համաձայն՝ ոչ բանկային ՖՀ-ներին բաժին է ընկնում ֆինանսական հատվածում առկա ՓԼ/ԱՖ համախառն ռիսկի 6%-ը, իսկ բանկերին՝ մնացած 94%-ը: Նշվածը վկայում է կիրառվող՝ ռիսկերի վրա հիմնված մոտեցման իրավացիության մասին, որի շրջանակներում վերահսկողական աշխատանքների և ջանքերի հիմնական մասն ուղղված է ֆինանսական համակարգի ամենախոցելի (բանկային) հատվածին:</p> <p>Իրավամբ, հաշվի առնելով վերը նշված գնահատականները և ոչ բանկային ՖՀ-ների՝ համեմատաբար զգալի թվաքանակը, ՖՎՎ-ն բաշխել է իր մարդկային ռեսուրսները ոչ բանկային ՖՀ-ներին համապատասխան: Նշված բաշխվածությունը ֆինանսական համակարգի երկու հատվածներում էլ ապահովում է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գծով վերահսկողական աշխատանքներին անհրաժեշտ մարդկային ռեսուրսների առկայություն:</p>

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի բաղադրիչը ներառող ստուգումների քանակական աճը արտացոլելու նպատակով ստորև ներկայացվում է 2009թ. ընթացքում և 2010թ. առաջին կիսամյակի ընթացքում ՖՀ-ներում (բանկերում և ոչ բանկային ՖՀ-ներում) իրականացված ստուգումների վիճակագրությունը:

**Աղյուսակ 1. ՖՀ-ներում իրականացված ստուգումների (համալիր և նպատակային) ընդհանուր թվաքանակը**

Հաստատություն	Ստուգումների թվաքանակ	
	2009	2010թ. 1-ին կիսամյակ
Բանկեր	24	27
Վարկային կազմակերպություններ	6	6
Ապահովագրական ընկերություններ	7	4
Գրավատներ	39	41
Արտարժույթի փոխանակման կետեր	444	205
Ներդրումային ընկերություններ	5	3
Դրամական փոխանցումների համակարգեր	1	2

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի բաղադրիչը ներառող ստուգումների խորության առաջընթացը արտացոլելու նպատակով ստորև ներկայացվում է 2009թ. ընթացքում և 2010թ. առաջին կիսամյակի ընթացքում հեռակա և տեղերում ստուգումների, ինչպես նաև ՖԴԿ-ի տեղեկացումների արդյունքում բացահայտված ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջների խախտման համար կիրառված պատժամիջոցների վիճակագրությունը:

**Աղյուսակ 2. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության և ներքին իրավական ակտերի խախտումների համար կիրառված պատժամիջոցները**

Հաստատություն	Տեղեկացում, ծանուցում		Տուգանք		Լիցենզիայի ժամանակավոր կասեցում	
	2009	2010թ. 1-ին կիսամյակ	2009	2010թ. 1-ին կիսամյակ	2009	2010թ. 1-ին կիսամյակ
Բանկեր	10	3	2	10 <sup>24</sup>	0	0
Վարկային կազմակերպություններ	6	0	1	0	0	0

<sup>24</sup> 2010թ. առաջին կիսամյակի ընթացքում առևտրային բանկերի նկատմամբ ՀՊՈՒ-ի պահանջների խախտման գծով նշանակված տուգանքների ընդհանուր գումարը կազմել է 2 մլն ՀՀ դրամ՝ ի հակադրություն 2009թ. և 2008թ. ընթացքում նշանակված, համապատասխանաբար, 200 հազ. և 300 հազ. ՀՀ դրամ ընդհանուր գումարով տուգանքների:

	Ապահովագրական ընկերություններ	3	4	1	0	0	0
	Գրավատներ	0	0	0	0	2	0
	Ներդրումային ընկերություններ	3	0	0	1	0	0
	Արտարժույթի փոխանակման կետեր	1	4	1	0	0	0
	<p>Նշենք նաև, որ ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ստուգումներ իրականացնելու բաղադրիչը ներառվել է բանկերում ստուգումների իրականացման ձեռնարկում (վարկային կազմակերպություններում ստուգումներ իրականացնելու համար կիրառվում է միևնույն ձեռնարկը), ինչպես նաև հաստատվել են ապահովագրական և ներդրումային ընկերություններում տեղերում ստուգումների իրականացման ձեռնարկները (ներառյալ՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ստուգումներ իրականացնելու բաղադրիչը): Նշվածը կբարձրացնի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գծով ստուգումների արդյունավետության մակարդակը և նվազագույնի կհասցնի մարդկային գործոնի ազդեցությունը:</p>						
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	<p>Ի լրումն Առաջընթացի առաջին հաշվետվությամբ ներկայացված քայլերի, ՀՀ կենտրոնական բանկը ներկայում աշխատանքներ է կատարում Նիդեռլանդների ազգային բանկի կողմից կիրառվող՝ բանկերում ռիսկերի վրա հիմնված համակողմանի վերահսկողության համակարգի ներդրման ուղղությամբ, որի հիմքում ընկած է RAST/ FIRM մոդելը:</p> <p>2011թ. հոկտեմբերին ԿԲ-ում սկսվել է բանկերի վարկանիշավորման փորձնական ծրագիր՝ ռիսկերի վրա հիմնված տեղերում ստուգումների համակարգի ներդրման նպատակով: Սա վերլուծական վերահսկողական գործիք է, որը յուրաքանչյուր բանկում ռիսկերի և դրանց կառավարման/ զսպման միջոցառումների որակի վերլուծության միջոցով տալիս է բանկի ռիսկայնության բաղադրյալ գնահատականը:</p> <p>Ռիսկերի գնահատման համար բանկի գործառնությունները դասակարգվում են ըստ համանման բիզնես ոլորտների և ֆունկցիոնալ դասերի: Այնուհետև, փաստացի ռիսկերը և դրանց կառավարման/ զսպման միջոցառումների որակը գնահատվում են յուրաքանչյուր բիզնես ոլորտի և ֆունկցիոնալ դասի համար: Բանկի ռիսկայնության բաղադրյալ գնահատականը ստացվում է նշված ոլորտների և դասերի գնահատված ռիսկը համախմբելու միջոցով: ԲՌԲԳ-ի մի առանձին բաժին նվիրված է բանկի, դրա հաճախորդների և գործընկերների ՓԼ/ԱՖ ռիսկերի գնահատմանը:</p>						

		<b>Աղյուսակ 1. ՖՀ-ներում իրականացված ստուգումների (համալիր և նպատակային) ընդհանուր թվաքանակը</b>									
		<b>Ստուգումների թվաքանակ</b>									
		<b>Հաստատություն</b>	<b>2010</b>	<b>2011</b>	<b>2012<sup>25</sup></b>						
		Բանկեր	34	20	9						
		Վարկային կազմակերպություններ	8	7	3						
		Ապահովագրական ընկերություններ	12	39	15						
		Գրավատներ	64	42	51						
		Արտարժույթի փոխանակման կետեր	258	95	94						
		Դրամական փոխանցումների համակարգեր	1	0	0						
		Ներդրումային ընկերություններ	4	4	0						
		<b>Աղյուսակ 2. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության և ներքին իրավական ակտերի խախտումների համար կիրառված պատժամիջոցները</b>									
		<b>Հաստատություն</b>	<b>Տեղեկացում, ծանուցում</b>			<b>Տուգանք (հազ. դրամ)</b>			<b>Լիցենզիայի ժամանակավոր կասեցում</b>		
			<b>2010</b>	<b>2011</b>	<b>2012</b>	<b>2010</b>	<b>2011</b>	<b>2012</b>	<b>2010</b>	<b>2011</b>	<b>2012</b>
		Բանկեր	28	67	14	3.75	950	100	-	-	-
		Վարկային կազմակերպ-եր	1	8	-	150	200	100	-	-	-
		Ապահովագրական ընկ-եր	4	-	13	-	-	-	-	-	-
		Արտարժ. փոխ. կետեր	6	5	3				-	-	2
		Ներդրումային ընկ-եր	1	1	-	50	-	-	-	-	-
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Դիտարկել ՖԴԿ-ին լրացուցիչ ռեսուրսներ տրամադրելու նպատակահարմարությունը:</i>										
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	<p><u>Մարդկային ռեսուրսներ</u></p> <p>ՀՀ ԿԲ խորհրդի՝ 2010թ. մարտի 16-ի թիվ 45Ա որոշմամբ վերանայվել է ՖԴԿ-ի կանոնադրությունը՝ ՖԴԿ-ի կառուցվածքի փոփոխությամբ պարտավորությունների արդյունավետ տարանջատում ապահովելու և առավել ճկուն գործելաոճ որդեգրելու նպատակով: Այսպիսով, ՓԳՀ-ի ընդունումից հետո տարանջատվել են ՖԴԿ-ի Իրավական ապահովման և Միջազգային հարաբերությունների բաժինները, և ՖԴԿ-ի աշխատակիցների թվաքանակը հասել է 24-ի: Այժմ ՖԴԿ-ի կառուցվածքը ներառում է ՖԴԿ-ի ղեկավարին, ղեկավարի տեղակալին, գործավարին, Իրավական ապահովման բաժինը (թվով 5 աշխատակից), Միջազգային հարաբերությունների բաժինը (թվով 1 աշխատակից և 2 թափուր աշխատատեղ), Տեղեկատվական համակարգերի մշակման և զարգացման բաժինը (թվով 5 աշխատակից և 1 թափուր</p>										

<sup>25</sup> Ստուգումների թվաքանակի, ինչպես նաև ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության և ներքին իրավական ակտերի խախտումների համար կիրառված պատժամիջոցների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է 2012թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ:

	<p>աշխատատեղ), Վերլուծությունների բաժինը (թվով 5 աշխատակից և 3 թափուր աշխատատեղ), ինչպես նաև տարբեր բաժիններին կցված թվով 5 պայմանագրային աշխատակից:</p> <p><u>Ֆինանսական ռեսուրսներ</u></p> <p>Լրացուցիչ մարդային ռեսուրսների ներգրավման և ՖԴԿ աշխատակիցների ուսուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են 2010թ. և 2011թ. բյուջեների կանխատեսումներով: Մասնավորապես, աշխատավարձերի և պարգևավճարների ֆոնդերի կանխատեսումները կազմում են տարեկան 80 և 90 մլն ՀՀ դրամ՝ համապատասխանաբար 2010թ. և 2011թ. համար: 2009թ. համեմատ բյուջետային ծախսերի աճը հիմնավորված է արդեն իսկ ներգրավված լրացուցիչ աշխատակիցներով և 2010-2011թթ. ընթացքում համալրման ենթակա թափուր աշխատատեղերի առկայությամբ: Ինչ վերաբերում է վարչական ծախսերին (սեմինարներ, ուսուցողական միջոցառումներ, գործնական այցեր, գրականություն և այլն), բյուջետային կանխատեսումները կազմում են տարեկան 25 և 26 մլն ՀՀ դրամ, համապատասխանաբար՝ 2010թ. և 2011թ. համար: Նշված կանխատեսումները զգալիորեն գերազանցում են նախորդ տարիների վարչական ծախսերի միջին ծավալը և արտացոլում են անձնակազմի մասնագիտական ունակությունների անընդհատ զարգացմանն ուղղված ՖԴԿ-ի մտադրությունը:</p> <p><u>Գործառնական ռեսուրսներ</u></p> <p>ՖԴԿ-ի նախաձեռնությամբ՝ մշակվել և ներդրվել է բարդ ծրագրային փաթեթ, որն ուղղված է գործերի կառավարման համակարգի բարելավմանը, ինչպես նաև մուտքագրվող և հավաքագրվող տեղեկատվությունից գործնական արդյունքների ստացմանը: Գործերի կառավարման ծրագրային փաթեթը նախատեսված է Վերլուծությունների բաժնի կողմից օգտագործման համար և կոչված է բարձր մակարդակի վրա հասցնելու ՖԴԿ-ի վերլուծական և մոնիտորինգի կարողությունները:</p>
<p><b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b></p>	<p><u>Մարդկային ռեսուրսներ</u></p> <p>Ներկայում ՖԴԿ-ի կառուցվածքը ներառում է ՖԴԿ-ի ղեկավարին, ղեկավարի տեղակալին, գործավարին, Իրավական ապահովման բաժինը (թվով 5 աշխատակից), Միջազգային հարաբերությունների բաժինը (թվով 3 աշխատակից), Տեղեկատվական համակարգերի մշակման և զարգացման բաժինը (թվով 6 աշխատակից), Վերլուծությունների բաժինը (թվով 9 աշխատակից), ինչպես նաև տարբեր բաժիններին կցված թվով 3 պայմանագրային աշխատակից: Հաջորդ տարում նախատեսվում է բացել 5 նոր</p>

	<p>աշխատատեղ:</p> <p><u>Ֆինանսական ռեսուրսներ</u> 2012թ. բյուջեն նախորդ տարվա համեմատ աճել և կազմում է 117 միլիոն ՀՀ դրամ, որից 25 միլիոն ՀՀ դրամը նախատեսված է վարչական ծախսերի համար (գործուղումներ և ուսուցում):</p> <p><u>Գործառնական ռեսուրսներ</u> 2011 թվականին գործարկվել է ՖԴԿ-ի Գործերի կառավարման ավտոմատացված համակարգը, որի նպատակը ՖԴԿ-ի կողմից կատարվող վերլուծությունների արդյունավետության էական բարելավումն է:</p> <p>Համակարգը հնարավոր է դարձնում ՓԼ/ԱՖ գործերի և փաստաթղթերի ավտոմատացված կառավարումը, հասանելի տվյալների շտեմարաններում խորացված որոնումները, ֆինանսական գործարքների և հոսքերի վերլուծությունը, վերլուծության սուբյեկտների միջև ակնհայտ և թաքնված կապերի բացահայտումը, ինչպես նաև վերլուծության արդյունքների տեսապատկերումը տարատեսակ գրաֆիկական և կիրառական ձևաչափերով: Համակարգում առկա են նաև տվյալների մշակման գործիքներ ՓԼ/ԱՖ միտումների բացահայտման և տիպաբանությունների մշակման համար:</p>
<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ</p>	<p><i>ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմաներով կոնկրետ ուսուցում իրականացնել ԱԱԾ-ի քննչական վարչության պաշտոնատար անձանց, ինչպես նաև մաքսային մարմնի հետաքննության և նախաքննության վարչությունների աշխատակիցների համար:</i></p>
<p>Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>Տես Հ.28-ի ներքո 3-րդ առաջարկի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:</p>
<p><b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b></p>	<p>Ինչպես նշվել է Հ.1-ի ներքո ներկայացված առաջարկների իրագործման վերաբերյալ բաժնում, իրավապահների, այդ թվում՝ ԱԱԾ-ի և ՊԵԿ-ի քննիչների համար կազմակերպվել են ուսուցողական միջոցառումներ (տես՝ ընդհանուր տեղեկությունների 2.1.2. բաժնի «5. Ուսուցողական միջոցառումներ» ենթաբաժինը):</p>

Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	
---	--

<b>Հ.32 (Վիճակագրություն)</b>	
<b>Գնահատական՝ չի համապատասխանում</b>	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Վարել ճշգրիտ վիճակագրություն (ՓԳՀ-ի 1055-1057-րդ պարբերություններ):</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	<p>Առաջարկին համահունչ՝ ՖՎՎ-ն վարում է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում իրականացված ստուգումների և դրանց արդյունքների վերաբերյալ պարբերաբար թարմացվող վիճակագրություն (տես նաև Հ.30-ի ներքո ներկայացված պատասխանը) և ՖԴԿ-ի հետ համագործակցության ՓՀ-ի 5-րդ հոդվածի ներքո պարբերաբար տրամադրում ՖԴԿ-ին:</p> <p>ՓԼ գործերի հարուցման և քննության արդյունքների վերաբերյալ վիճակագրությունը պահվում է Ոստիկանության տեղեկատվական կենտրոնի տվյալների շտեմարանում: Այլ ԻՊՄ-ների կողմից հարուցված ՓԼ գործերը կարող են հանձնվել ԱԱԾ-ին միայն վերահսկող դատախազի հանձնարարականի կամ համաձայնության հիմքով (ՓԼ դեպքում՝ Գլխավոր դատախազության Ազգային մարմիններում քննվող գործերով վարչության կողմից): Այսպիսով, նշված գործերի վերաբերյալ Դատախազությունը վարում է ընթացիկ վիճակագրություն:</p> <p>ՆՈՖԳՏՄ-ների վերահսկող մարմինները պարտավոր են վերահսկողական աշխատանքների վերաբերյալ վարել համապատասխան վիճակագրություն, ինչը, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի գործող (13-րդ հոդվածի 7-րդ մաս) և նախագծային (12-րդ հոդվածի 7-րդ մաս) տարբերակների համաձայն, պետք է տրամադրվի ՖԴԿ-ին:</p>
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	<p>Հետագա փոփոխություններ չկան:</p> <p>Ներկայում ՓԼ/ԱՖ ստուգումների քանակի և դրանց արդյունքների վերաբերյալ վիճակագրությունը վարվում է ՖԴԿ-ի և ՖՎՎ-ի միջև համագործակցության վերանայված ձեռնարկի համաձայն (4-րդ գլուխ):</p> <p>ՆՈՖԳՏՄ-ների վերահսկող մարմինների և ՖԴԿ-ի միջև վիճակագրական տվյալների փոխանակման վերաբերյալ տես «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի</p>



	Նախագիծը (13-րդ հոդվածի 7-րդ մաս):
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	

<b>Հ.35 (Կոնվենցիաներ)</b>	
<b>Գնահատական՝ մասամբ համապատասխանում է</b>	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Նախատեսել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Տես ՀՀ.Ու-ի ներքո 5-րդ առաջարկի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Տես ՀՀ.Ու-ի ներքո 5-րդ առաջարկի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Բռնագրավման իրավասությունը սահմանել Պալերմոյի կոնվենցիայով սահմանված բոլոր հանցագործությունների համար:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել է ՔՕ-ում փոփոխության նախագիծ (8-րդ և 9-րդ հոդվածներ):
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո</b>	Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակված փոփոխությունների նախագծի համապատասխան հոդվածը վերախմբագրվել է, տես՝ ՔՕ-ում փոփոխությունների 2012 թվականի նախագծի 3-րդ հոդվածը:

<b>ձեռնարկված միջոցառումներ</b>	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Նախատեսել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների հետ միախառնված օրինական գույքի, ինչպես նաև հանցագործության կատարման նպատակով օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների առգրավման հնարավորությունը՝ ինչպես սահմանված է Վիեննայի և Պալերմոյի կոնվենցիաներով:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել է ՔՕ-ում փոփոխության նախագիծ (3-րդ հոդված):
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակված փոփոխությունների նախագծի համապատասխան հոդվածը վերախմբագրվել է, տես՝ ՔԴՕ-ում փոփոխությունների 2012 թվականի նախագծի 6-րդ հոդվածը:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Իրավապահ մարմիններին կամ դատարաններին վերապահել ընդհանուր իրավասություն՝ պարտադրել ներկայացնելու ֆինանսական փաստաթղթեր, այդ թվում՝ այն գործերով, որոնց համար տեղեկատվություն է պահանջվում վկայից կամ այլ՝ տուժող, հայցվոր, կասկածյալ կամ մեղադրյալ չհանդիսացող անձանցից:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Տես Հ.28-ի ներքո 1-ին առաջարկի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Տես Հ.28-ի ներքո 1-ին առաջարկի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:

<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ</p>	<p>ԲԳՕ-ի 10-րդ հոդվածը ներդաշնակեցնել ՕՀԳՕ-ի 29-րդ հոդվածին, ինչպես նաև՝ ԲԳՕ-ի 13.1-րդ հոդվածը՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 13-րդ հոդվածին, որպեսզի ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տվյալների հասանելիության վերաբերյալ դրանք նախատեսեն միևնույն պայմանները, և որպեսզի ԻՊՄ-ները հնարավորություն ունենան արդյունավետորեն ստանալ և պարտադրել՝ ներկայացնելու ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տեղեկություններ, գործարքի փաստաթղթեր, հաշիվների կամ այլ փաստաթղթեր կամ տեղեկություններ, հատկապես այն դեպքերում, երբ դեռևս ի հայտ չի բերվել կոնկրետ կասկածյալ, կամ երբ պահանջվող տեղեկությունները վերաբերում են կասկածյալից բացի որևէ այլ անձի:</p>
<p>Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>Տես Հ.4-ի ներքո 1-ին առաջարկի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:</p>
<p><b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b></p>	<p>Տես Հ.4-ի ներքո 1-ին առաջարկի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:</p>
<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ</p>	<p>Արժույթի և ըստ ներկայացնողի գործիքների անդրսահմանային ֆիզիկական տեղափոխման հայտարարագրման համակարգի գործողությունը տարածել նաև փոստով կամ բեռնափոխադրման եղանակով իրականացվող արտագնա տեղափոխման նկատմամբ:</p>
<p>Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>Տես ՀՀ.IX-ի ներքո 1-ին առաջարկի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:</p>
<p><b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից</b></p>	<p>Տես ՀՀ.IX-ի ներքո 1-ին առաջարկի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:</p>

<b>հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>ԱԱԾ-ի քննչական վարչության աշխատակիցների համար առկա է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմաներով լրացուցիչ ուսուցողական միջոցառումների անհրաժեշտություն:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Տես Հ.28-ի ներքո 3-րդ առաջարկի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Տես Հ.28-ի ներքո 3-րդ առաջարկի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	

<b>Հ.36 (Փոխադարձ իրավական օգնություն (այսուհետ՝ ՓԻՕ))</b>	
<b>Գնահատական՝ մասամբ համապատասխանում է</b>	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>ԲԳՕ-ի 10-րդ հոդվածը ներդաշնակեցնել 0ՀԳՕ-ի 29-րդ հոդվածին, ինչպես նաև՝ ԲԳՕ-ի 13.1-րդ հոդվածը՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 13-րդ հոդվածին, որպեսզի ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տվյալների հասանելիության վերաբերյալ դրանք նախատեսեն միևնույն պայմանները, ինչպես նաև՝ ապահովելու նման տվյալներ ստանալու վերաբերյալ ՓԻՕ հարցումների լիարժեք կատարման հնարավորությունը:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված	Տես Հ.4-ի ներքո 1-ին առաջարկի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:

միջոցառումներ	
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Տես Հ.4-ի ներքո 1-ին առաջարկի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	

<b>ՀՀ.1 (ՄԱԿ-ի փաստաթղթերի իմպլեմենտացում)</b>	
<b>Գնահատական՝ մասամբ համապատասխանում է</b>	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>ԱՖ հանցակազմի սահմանումը համապատասխանեցնել «Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» կոնվենցիայով նախատեսված սահմանմանը:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Տես ՀՀ.11-ի ներքո 3-րդ և 4-րդ առաջարկների վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Տես ՀՀ.11-ի ներքո 3-րդ և 4-րդ առաջարկների վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի (այսուհետ՝ ՄԱԿԱԽ) թիվ 1267 և 1373 բանաձևերի պահանջների կապակցությամբ ՀՀ-ի կողմից ձեռնարկվող միջոցառումները համարժեք չեն:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ.	Տես ՀՀ.111-ի ներքո առաջարկների վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:

ձեռնարկված միջոցառումներ	
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Տես ՀՀ.ՈՒ-ի ներքո առաջարկների վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	

<b>ՀՀ.ՈՒ (Ահաբեկիչների միջոցների սառեցում և բռնագրավում)</b>	
<b>Գնահատական՝ չի համապատասխանում</b>	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Հայաստանը պետք է վերանայի «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված սառեցման մեխանիզմները, որոնք նպատակաուղղված են ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 1267 և 1373 բանաձևերի, ինչպես նաև ՀՀ.ՈՒ-ի պահանջների կատարմանը: Մասնավորապես, ՀՀ-ի օրենսդրությամբ պետք է նախատեսել ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բանաձևերով սահմանված՝ նախատեսման և սառեցման պարտավորությունների կատարումը բոլոր դեպքերում՝ անկախ այն հանգամանքից, թե հնարավոր է արդյոք քրեական գործ կամ քրեական հետապնդում հարուցել ահաբեկչական հանցագործության հարկանիշներով: Պետք է նախատեսել անժամկետ սառեցման մեխանիզմ, որը հնարավոր կլինի կիրառել՝ անկախ ներպետական մակարդակով քրեական գործի հարուցումից կամ դրա արդյունքից, միաժամանակ նաև բացառելով սառեցման հարցում հայեցողությունը ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի ցանկերի հետ համընկնող անունների հայտնաբերման դեպքում:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում (27-րդ հոդված, 3-րդ հոդվածի 1-ին մասի 33-րդ և 37-րդ պարբերություններ) փոփոխության նախագիծ:
<b>Առաջընթացի առաջին</b>	Ներկայացված առաջարկն իրագործվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագծով (28-րդ հոդված և 3-

<b>հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	<p>րդ հոդվածի 1-ին մասի 33-րդ և 37-րդ պարբերություններ):</p>
<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ</p>	<p><i>Ներդնել մեխանիզմ, որով այլ պետությունների ստեղծման մեխանիզմների շրջանակում նախաձեռնված ստեղծման գործողությունները ՀՀ-ում կգործեն ներկայում օրենքով սահմանված 10-օրյա ժամկետի ավարտից հետո: Ստեղծման մեխանիզմները պետք է բոլոր փուլերում կիրառելի լինեն նախատեսված անձի կամ կազմակերպության համարել սեփականությունը հանդիսացող գույքի, ինչպես նաև այն միջոցների նկատմամբ, որոնք նախատեսված անձին կամ կազմակերպությանը չեն պատկանում սեփականության իրավունքով, սակայն վերահսկվում են նրանց կողմից:</i></p>
<p>Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում (27-րդ հոդվածի 7-րդ մաս, 3-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ պարբերություն) փոփոխության նախագիծ:</p>
<p><b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b></p>	<p>Ներկայացված առաջարկն իրագործվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագծով (28-րդ հոդվածի 7-րդ մաս և 3-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ պարբերություն):</p>
<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ</p>	<p><i>Ստեղծման մեխանիզմները պետք է տարածվեն ոչ միայն ֆինանսական միջոցների, այլ նաև՝ ֆինանսական գույքի և ցանկացած տեսակի գույքի նկատմամբ, ինչպես նախատեսված է ՖԱԹՖ-ի ստանդարտներով և Հ.III-ի Բացառական մեկնաբանությամբ:</i></p>
<p>Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել են «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում (3-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ պարբերություն) և ՔՕ-ում (1-ին հոդվածի 2-րդ մաս) փոփոխությունների նախագծեր:</p>
<p><b>Առաջընթացի</b></p>	<p>Ներկայացված առաջարկն իրագործվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի</p>

<b>առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	<p>մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագծով (3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 37-րդ պարբերություններ) և ՔՕ-ում փոփոխությունների 2012 թվականի նախագծով (3-րդ հոդվածի 4-րդ մաս):</p>
<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ</p>	<p><i>ՖԴԿ-ն պետք է ընդունի ֆորմալ ուղեցույցներ հաշվետվություն տրամադրող անձանց և այլ անհատների կամ կազմակերպությունների համար, որոնք կարող են ՄԱԿԱԽ-ի թիվ 1373 բանաձևի և «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածի համաձայն ստեղծման գործողություններ ձեռնարկելու պարտավորություններ առաջացնող միջոցներ կամ այլ գույք ունենալ:</i></p>
<p>Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>Տես ՀՀ.IV-ի ներքո (ՖՀ-ների մասով) ներկայացված առաջարկի վերաբերյալ տեղեկատվությունը:</p>
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	<p>Տես ՀՀ.IV-ի ներքո (ՖՀ-ների մասով) ներկայացված առաջարկի վերաբերյալ տեղեկատվությունը:</p>
<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ</p>	<p><i>ՖԴԿ-ն պետք է ընդունի ուղեցույց կամ ընթացակարգ, որով կնախատեսվի, թե ինչպես կարող են ՀՀ ԿԲ-ի կողմից «սահաբեկչության հետ կապված անձանց» ցանկում ներառված անձինք կամ կազմակերպությունները բողոքարկել համապատասխան որոշումը և դիմել ցանկից իրենց հանելու համար, եթե առաջանա նման իրավիճակ:</i></p>
<p>Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում (27-րդ հոդվածի 3-րդ մաս) փոփոխության նախագիծ: Տես ՀՀ.IV-ի ներքո (ՖՀ-ների մասով) ներկայացված առաջարկի վերաբերյալ տեղեկատվությունը:</p>
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության</b>	<p>Ներկայացված առաջարկն իրագործվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագծով (28-րդ հոդվածի 3-րդ մաս):</p>



<b>ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Տես նաև ՀՀ.ІV-ի ներքո (ՖՀ-ների մասով) ներկայացված առաջարկի վերաբերյալ տեղեկատվությունը:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	«ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածով պետք է նախատեսվի ստեղծման սկզբնական գործընթացի մեջ հայտնված բարեխիղճ երրորդ անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ դրույթներ:
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում (27-րդ հոդվածի 9-րդ մաս) փոփոխության նախագիծ:
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Ներկայացված առաջարկն իրագործվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագծով (28-րդ հոդվածի 9-րդ մաս):
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	

<b>Հ.V (Միջազգային համագործակցություն)</b>	
<b>Գնահատական՝ մասամբ համապատասխանում է</b>	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	Հստակեցնել, թե արդյոք ՓԻՕ տրամադրելու համար պահանջվում է «կրկնակի քրեականացում»՝ պարզելու համար, թե արդյոք ՓԼ և ԱՖ հանցագործությունների կապակցությամբ Հ.1-ի և Հ.2-ի, ինչպես նաև ՀՀ.11-ի վերլուծությունների մեջ նշված թերությունները կարող են սահմանափակել որոշակի իրավիճակներում օգնություն տրամադրելու՝ ՀՀ-ի կարողությունը, ներառյալ, մասնավորապես, իրավաբանական անձանց դեմ իրականացվող վարույթներում ՓԻՕ տրամադրելու կարողությունը:
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ.	ՓԻՕ-ի շրջանակներում «կրկնակի քրեականացման» խնդիրը քննարկվել է Միջգերատեսչական հանձնաժողովի՝ 2010թ. մարտի 26-ի նիստում, որի ժամանակ ՀՀ ԱՆ-ը համաձայնել է խնդրի շուրջ ներկայացնել իրավական կարծիք: Արդյունքում, ՀՀ ԱՆ-ը

<p>ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>իրականացրել է իրավաբանական վերլուծություն և եզրակացրել, որ ՔԴՕ-ի 54-րդ հոդվածը (ՓԻՕ) ՓԻՕ-ի գծով օտարերկրյա հարցումների դեպքում «կրկնակի քրեականացման» կիրառության համար հիմքեր չի պարունակում (նշվածը արձանագրվել է նաև ՓԳՀ-ում (956-րդ և 969-րդ պարբերություններ))։ Բացառություն է նախատեսված միայն անձի հանձնման հետ կապված հարցումների դեպքում, մասնավորապես՝ ՔԴՕ-ի 487-րդ հոդվածը ուղղակիորեն պահանջում է «կրկնակի քրեականացում»՝ որպես նման հարցումների բավարարման նախապայման։ Նշված եզրակացությունը պաշտոնապես շրջանառվել է բոլոր շահագրգիռ կողմերի միջև։</p>
<p><b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b></p>	<p>Հետագա փոփոխություններ չկան։</p>
<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ</p>	<p><i>Վերացնել ԱՖ հանցագործությունների սահմանումների թերությունները, որպեսզի «կրկնակի քրեականացման» պահանջը չսահմանափակի ԱՖ գործերով անձանց հանձնելու՝ ՀՀ-ի կարողությունը։</i></p>
<p>Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>Տես ՀՀ.Ու-ի ներքո 3-րդ և 4-րդ առաջարկների վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը։</p>
<p><b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b></p>	<p>Տես ՀՀ.Ու-ի ներքո 3-րդ և 4-րդ առաջարկների վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը։</p>
<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ</p>	<p><i>Հստակեցնել մասնագիտական գաղտնիքի մասին նորմերը, որոնք կարող են սահմանափակել տեղեկություններ ստանալու կամ տեղեկությունների տրամադրում պարտադրելու՝ ՖԴԿ-ի կարողությունը։</i></p>
<p>Առաջարկի</p>	<p>Տես Հ.13-ի ներքո 1-ին առաջարկի (ՆՈՖԳՏՄ-ների մասով)</p>

իրագործման ուղղությամբ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Տես Հ.13-ի ներքո 1-ին առաջարկի (ՆՈՖԳՏՄ-ների մասով) վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	

<b>ՀՀ.VIII (Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություններ) (այսուհետ՝ ՇՆԶԿ)</b>	
<b>Գնահատական՝ մասամբ համապատասխանում է</b>	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Ապահովել պարբերական գնահատումների անցկացումը՝ ուսումնասիրելով ահաբեկչական գործունեության նկատմամբ ոլորտի հնարավոր խոցելի կետերի մասին ի հայտ եկող նոր տեղեկությունները:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Նման վերլուծություն է իրականացվել ՌԻԳ-ի շրջանակներում, որի արդյունքում կատարած եզրակացության համաձայն՝ ՇՆԶԿ ոլորտում ԱՖ ռիսկերը զգալի չեն:
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Հետագա փոփոխություններ չկան:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված	<i>Ներդնել ԱՖ նպատակով ՇՆԶԿ-ների չարաշահման ռիսկերի և դրանցից պաշտպանության առկա մեխանիզմների վերաբերյալ ՇՆԶԿ-ների իրազեկության բարձրացման ծրագրեր:</i>

առաջարկ	
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Նման միջոցառումներն իրականացման փուլում են: 2010թ. հուլիսի 8-ին Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության համար կազմակերպված քննարկման ժամանակ ձեռք է բերվել համաձայնություն առ այն, որ ՖԴԿ-ն, Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության հետ համատեղ, ՇՆՁԿ-ների համար մշակելու և վերջիններիս է տրամադրելու ԱՖ տիպաբանություններ և իրազեկության բարձրացման ուղեցույցներ: Նշված տիպաբանությունների և ուղեցույցների նախագծերը արդեն իսկ մշակվել են ՖԴԿ-ի կողմից և տրամադրվել Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կարծիքին: Որպես իրազեկության բարձրացման միջոցառում՝ նշված տիպաբանությունները և ուղեցույցները նախատեսվում է տրամադրել ՇՆՁԿ-ներին հետագա 1-2 ամիսների ընթացքում:
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Հետագա փոփոխություններ չկան:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Պատշաճ ռեսուրսներ և տեխնիկական կարողություններ ուղղորդել դեպի ՇՆՁԿ ոլորտ՝ առանձնակի ուշադրություն դարձնելով ԱՖ ռիսկերին:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության հետ ձեռք է բերվել համաձայնություն առ այն, որ վերջինս հատկացնելու է համարժեք մարդկային ռեսուրսներ և տեխնիկական կարողություններ՝ ուղղված ՇՆՁԿ ոլորտում իրազեկության բարձրացման միջոցառումների իրականացմանն ու ոլորտի նկատմամբ մոնիտորինգի ապահովմանը (հիմնականում՝ ԱՖ ռիսկերի գծով): Հաշվի առնելով այն փաստը, որ նման ռեսուրսների և կարողությունների հատկացման համար նախօրոք պահանջվում է մեկ տարվա վարչարարական աշխատանք, ծրագիրը նախատեսվում է վերջնականացնել միայն 2011թ.::
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից</b>	ՀՀ արդարադատության նախարարությունում ստեղծվել է իրավական վերահսկողության հատուկ վարչություն, որի գործառույթները ներառում են ՇՆՁԿ ոլորտի վերահսկողությունը, գործող օրենքներին և կարգերին դրանց գործունեության

<b>հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	համապատասխանության ստուգումը, օրենքով սահմանված դեպքերում դրանց գործունեության կասեցման կամ լուծարման պահանջով հանդես գալը: ՇՆՁԿ-երը պարտավոր են իրենց գործունեության մասին ներկայացնել հաշվետվություններ, և այս պահանջին չբավարարելու դեպքում նախատեսված են վարչական պատժամիջոցներ:
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	

<b>ՀՀ.IX (Անդրսահմանային հայտարարագրում և բացահայտում)</b>	
<b>Գնահատական՝ մասամբ համապատասխանում է</b>	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Հայտարարագրման պահանջները տարածել փոստով կամ բեռնափոխադրման եղանակով իրականացվող արտագնա փոխադրումների նկատմամբ:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Ներկայացված առաջարկն իրագործվել է «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքով և «Արժույթային արժեքների տեղափոխման, առաքման, ներմուծման, արտահանման և հայտարարագրման մասին» ՀՀ ԿԲ խորհրդի որոշման մեջ փոփոխության նախագծով: Նշված օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ փոստի միջոցով կանխիկի (ՀՀ դրամ կամ արտարժույթ) տեղափոխումն արգելված է: ՀՀ ԿԲ խորհրդի որոշման փոփոխությունը, իր հերթին, ըստ ներկայացնողի ֆինանսական գործիքների արտագնա փոստային կամ տրանսպորտային առաքման դեպքում նախատեսում է պարտադիր հայտարարագրման կարգ: ՀՀ ԿԲ խորհրդի որոշման 2.1 կետի համաձայն՝ սահմանված շեմը գերազանցող գումարով (5 մլն ՀՀ դրամ) ՀՀ դրամի կամ այլ արտարժույթի արտահանումն իրականացվում է անկանխիկ եղանակով: Առանց գումարային սահմանափակման՝ ՀՀ-ից կանխիկ արտահանումը, փոխադրումը կամ առաքումը թույլատրված է միայն բանկերին, վարկային կազմակերպություններին և հավաքագրման գործառույթով օժտված կազմակերպություններին: Մաքսագերծման գործընթացների համաձայն՝ նշված կազմակերպությունները պարտավոր են լրացնել մաքսային հայտարարագիր: Փոփոխության նախագիծը տրամադրվել է ՊԵԿ-ի և «Հայփոստ»-ի (ազգային փոստային օպերատորն է) կարծիքին: Նախատեսվում է, որ փոփոխությունները կընդունվեն և օրինական ուժ կստանան առաջիկա 1-2 ամիսների ընթացքում:

<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	<p>Վերը նշված՝ «Արժութային արժեքների տեղափոխման, առաքման, ներմուծման, արտահանման և հայտարարագրման մասին» ՀՀ ԿԲ խորհրդի որոշման մեջ փոփոխության նախագիծը 2010 թվականի հոկտեմբերի 12-ին ընդունվել և դեկտեմբերի 11-ին մտել է ուժի մեջ:</p>
<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ</p>	<p><i>Մաքսային մարմիններին իրավասություն վերապահել՝ կասեցնելու կամ սահմանափակելու արժույթի շարժը ՓԼ/ԱՖ կասկածի առկայության դեպքում:</i></p>
<p>Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել է «ՀՀ մաքսային օրենսգրքում» (7-րդ հոդված) փոփոխության նախագիծ:</p>
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	<p>«ՀՀ մաքսային օրենսգրքում» փոփոխությունների նախագծի 7-րդ հոդվածը վերախմբագրվել է մաքսային մարմիններին՝ արժույթի շարժը կասեցնելու և սահմանափակելու իրավասության լրացուցիչ կարգավորման նպատակով, տես «ՀՀ մաքսային օրենսգրքում» փոփոխությունների 2012 թվականի նախագիծը (6-րդ հոդված):</p>
<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ</p>	<p><i>Խստացնել պատժամիջոցները:</i></p>
<p>Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>ՓԳՀ-ում (426-րդ պարբերություն) նշված պատժամիջոցները սահմանող հոդվածները (190, 194) ՀՀ.IX-ի պահանջների դեպքում կիրառելի չեն: Փոխարենը պետք է կիրառվեն «ՀՀ մաքսային օրենսգրքի» 202-րդ և 203-րդ հոդվածները, որոնք ապրանքների կամ տրանսպորտային միջոցների չհայտարարագրման կամ սխալ հայտարարագրման դեպքում նախատեսում են արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ պատժամիջոցներ (ապրանքի և տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի հանրագումարին հավասար):</p>
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության</b>	<p>Հետագա փոփոխություններ չկան:</p>

<p><b>ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b></p>	
<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ</p>	<p><i>Ներդնել ՀՀ.ՈՒՒ-ով և ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բանաձևերով նախատեսված սառեցման պահանջներն այն անձանց դեպքում, որոնք իրականացնում են ԱՖ-ին առնչվող արժույթի կամ ըստ ներկայացնողի ֆինանսական գործիքների անդրսահմանային ֆիզիկական տեղափոխում:</i></p>
<p>Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել է «ՀՀ մաքսային օրենսգրքում» (5-րդ հոդված) և «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում (27-րդ հոդված, 3-րդ հոդվածի 1-ին մասի 33-րդ և 37-րդ պարբերություններ) փոփոխությունների նախագծեր:</p>
<p><b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b></p>	<p>«ՀՀ մաքսային օրենսգրքում» փոփոխությունների նախագծի 5-րդ հոդվածը փոքր-ինչ վերախմբագրվել է՝ միջոցների անժամկետ սառեցումը փոխարինելով անորոշ ժամկետով սառեցմամբ, տես «ՀՀ մաքսային օրենսգրքում» փոփոխությունների 2012 թվականի նախագիծը (4-րդ հոդված), ինչպես նաև «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 2012 թվականի նախագիծը (28-րդ հոդված, 3-րդ հոդվածի 1-ին մասի 33-րդ և 37-րդ պարբերություններ):</p>
<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ</p>	<p><i>Բարձրացնել հանրության իրազեկությունը սահմանված շեմը գերազանցող գումարով կանխիկի և վճարային արժեթղթերի ներմուծումը և արտահանումը հայտարարագրելու անհրաժեշտության մասին:</i></p>
<p>Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով ՀՀ բոլոր մաքսակետերում տեղադրվել են տեղեկատվական վահանակներ:</p>
<p><b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b></p>	<p>Հետագա փոփոխություններ չկան:</p>

ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Ճշգրտել օգտագործվող հայտարարագրերում ներմուծման և արտահանման հայտարարագրման պահանջների բացատրությունները, որպեսզի դրանք միանշանակորեն տարածվեն նաև վճարային արժեթղթերի նկատմամբ:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Առաջարկված փոփոխությունը ներառվել է հայտարարագրման ձևաթղթերում:
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Հետագա փոփոխություններ չկան:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Հայտարարագրումը խրախուսելու նպատակով բարձրացնել գործող պատժամիջոցների արդյունավետությունը և նախատեսել կոնկրետ պատժամիջոցներ ՓԼ և ԱՖ համար:</i>
Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ	Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել է «ՀՀ մաքսային օրենսգրքում» (8-րդ հոդված) փոփոխության նախագիծ:
<b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b>	Ներկայացված առաջարկն իրագործվել է «ՀՀ մաքսային օրենսգրքում» փոփոխությունների 2012 թվականի նախագծով (8-րդ հոդված):
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ	<i>Օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսել մաքսային մարմնի իրավասությունը՝ պահանջելու տեղեկություններ արժույթի կամ վճարային արժեթղթերի ծագման և օգտագործման մտադրության մասին:</i>
Առաջարկի իրագործման	Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել է «ՀՀ մաքսային օրենսգրքում» (3-րդ հոդված) փոփոխության նախագիծ:



<p>ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ</p>	
<p><b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b></p>	<p>Ներկայացված առաջարկն իրագործվել է «ՀՀ մաքսային օրենսգրքում» փոփոխությունների 2012 թվականի նախագծով (2-րդ հոդված):</p>
<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ</p>	<p><i>Օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսվել ունի, թանկարժեք մեդալների կամ թանկարժեք քարերի անսովոր անդրսահմանային շարժի մասին այլ երկրների իրավասու մարմինների ծանուցումը:</i></p>
<p>Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>Ներկայացված առաջարկն իրագործելու նպատակով մշակվել է «ՀՀ մաքսային օրենսգրքում» (4-րդ հոդված) փոփոխության նախագիծ:</p>
<p><b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b></p>	<p>Ներկայացված առաջարկն իրագործվել է «ՀՀ մաքսային օրենսգրքում» փոփոխությունների 2012 թվականի նախագծով (3-րդ հոդված):</p>
<p>ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ ներկայացված առաջարկ</p>	<p><i>Հայտարարագրման պահանջների հիման վրա հավաքագրված տեղեկությունները վերլուծելու միջոցով ձևավորել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օպերատիվ տվյալներ:</i></p>
<p>Առաջարկի իրագործման ուղղությամբ առ 28.09.2010թ. ձեռնարկված միջոցառումներ</p>	<p>2010թ. մայիսին ՊԵԿ-ի համապատասխան ստորաբաժանմանը ուղղվել է հանձնարարական առ այն, որ վերջինս ՓԼ/ԱՖ դեմ պայքարի տեսանկյունից պետք է պարբերաբար իրականացնի հայտարարագրման կարգի ներքո հավաքագրված տեղեկատվության վերլուծություն: Արդյունքում, 2009թ. սեպտեմբերից մինչև 2010թ. սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում ՊԵԿ-ի կողմից սկսվել և ՖԴԿ-ի հետագա վերլուծությանն է ներկայացվել թվով 3 ՓԼ գործ:</p>

<p><b>Առաջընթացի առաջին հաշվետվության ընդունումից հետո ձեռնարկված միջոցառումներ</b></p>	<p>2010թ. հունվարից մինչև 2012թ. հոկտեմբերն ընկած ժամանակահատվածում ՊԵԿ-ի կողմից սկսվել և ՖԴԿ-ի հետագա վերլուծությանն է ներկայացվել թվով 22 ՓԼ գործ:</p>
<p>Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ</p>	

**2.4. Առանձին հարցեր**

**Առաջընթացի առաջին հաշվետվության նպատակով ներկայացված հարցեր և պատասխաններ**

<p>1. Արդյո՞ք ՀՀ ԿԲ-ի կողմից ավելացել է վերջինիս վերահսկողության ներքո գտնվող ՖՀ-ներում իրականացվող սպուգումների հաճախականությունը:</p>
<p>Այո, տես Հ.30-ի ներքո 1-ին առաջարկի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը (վիճակագրական տվյալները):</p>
<p>2. Ի՞նչ զարգացումներ են արձանագրվել թանկարժեք մետաղների և քարերի դիլերների ոլորտում (ուղեցույցներ, հաշվետվական ձևեր, վերահսկող մարմնի հրահանգ, ոլորտում իրազեկության բարձրացման միջոցառումներ, սպուգումներ և այլն):</p>
